

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒ. ԳԱՔՐԻԵԼՅԱՆ

**ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՎԻ
ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

2-րդ վերամշակված հրատարակություն

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԳ- 811.112.2(07)

ԳՄԴ- 81.2Գ-երմ ց7

Գ- 124

*Հրապարակության է երաշխավորել
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության
ֆակուլտետի խորհուրդը*

Գաբրիելյան Յու. Մ.

Գ- 124 Գերմաներեն լեզվի տիպաբանություն: (Ուսումնական ձեռնարկ):
Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 98 էջ:

Սույն ձեռնարկը ընդգրկում է «գերմանական բանասիրություն» մասնագիտացմամբ բուհական ուսումնական ծրագրերով նախատեսված «Գերմաներեն լեզվի տիպաբանության» լրիվ դասընթացը, ինչպես նաև «Գերմաներենի և հայերենի զուգադրական քերականության» հատուկ դասընթացի առանձին բաժինները: Այն կարող է հետաքրքրել նաև ընդհանրապես լեզուների տիպաբանությամբ զբաղվող մասնագետներին և գերմաներեն լեզու ուսումնասիրողներին:

ՀՏԳ- 811.112.2(07)

ԳՄԴ- 81.2Գ-երմ ց7

ISBN 978-5-8084-1951-3

© ԵՊՀ հրատ., 2015

© Յու. Գաբրիելյան, 2015

ԼԵԶՎԱՔԱՆԱԿԱՆ ՏԻՊԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լեզվաբանական այն գիտակարգը, որը զբաղվում է ցեղակից և ոչ ցեղակից լեզուների կառուցվածքային առանձնահատկությունների մամուլությունների և տարբերությունների ուսումնասիրությամբ կոչվում է տիպաբանություն:

Լեզուների կառուցվածքային մամուլություններն առաջանում են երկու ճանապարհով՝ կա՛մ կառուցվածքային փոխառությունների միջոցով, ուրի արդյունքում մեկ լեզվի իմաստաբանական, բառակազմական և շարահյուսական առանձնահատկությունները պատճենվում են մյուս լեզվում, կա՛մ էլ տարբեր լեզուների ինքնուրույն զարգացման մեջ նման միտումների գործողությամբ, որոնք նախապես ձևավորել են համապատասխան լեզվական համակարգերում: Բնականաբար, տարբեր կարգի պատճենումները լեզուների միջնորդավորված կամ անմիջական շփման հետևանք են: Վերջինս էլ ենթադրում է առաջին հերթին այդ լեզուների տարածման աշխարհագրական ընդհանրություն, իսկ եթե այդ շփումը անմիջական չէ՝ ապա համապատասխան լեզվական հանրույթների քաղաքական կամ մշակութային երկարամյա կապեր: Հակառակ դեպքում՝ գործ ունենք նույն կարգի ներլեզվական միտումների գործողության արդյունքում առաջացած մամուլությունների հետ, որոնք էլ տիպաբանական լեզվաբանության կամ լեզվաբանական տիպաբանության ուսումնասիրության հիմնական առարկան են: Իսկ լեզվական շփումների արդյունքում առաջացած մամուլություններով զբաղվում է արեալային կամ տարածքային լեզվաբանությունը:

Լեզվաբանական տիպաբանության զարգացման վաղ շրջանում (19-րդ դ.) համապատասխան ուսումնասիրությունների հիմնական նպատակը տարբեր լեզուների ձևաբանական տիպի որոշումն էր և ապա դրանց խմբավորումը՝ ըստ այս կամ այն տիպի: Այդպիսիք էին Շլեգել եղբայրների, Վ. Հումբոլդտի, Ա. Շլայխերի և այլոց ուսումնասիրությունները, որտեղ փորձ էր արվում աշխարհի տարբեր լեզուները խմբավորել՝ ըստ կցական, թեքական և անջատական հիմնական տիպերի: Լեզուների դասակարգման այս սկզբունքը, որի համար կարևոր էր, թե կոնկրետ քերականական իմաստն արտահայտելու նպատակով այս կամ այն լեզուն քերականական արտահայտության ի՞նչ միջոցներ է գործածում,

կոչվում է նաև ձևաբանական դասակարգում: Այդ ընթացքում անհրաժեշտություն առաջացավ անդրադառնալ նաև լեզուների ներքին բնութագրերին, որպեսզի մի կողմից բացահայտվեին առանձին լեզվական տիպի յուրահատկությունները և մյուս կողմից՝ միևնույն տիպին հատկացվող լեզուներին բնորոշ ընդհանրությունները: Այդպիսով՝ տիպաբանական հետազոտությունների համար առաջնային նշանակություն ստացավ նախադասությունը: Այլ կերպ՝ կոնկրետ լեզվական տիպի սահմանման համար կարևոր էր նախադասության կառուցվածքային իրացման հնարավորությունները տարբեր լեզուներում: Այստեղ հարկ չենք համարում անդրադառնալ Հ. Շտայնթալի, Ֆ. Միստելիի, Ն. Ֆինկի և այլոց համապատասխան տեսակետներին, քանի որ դրանք վիճելի են և միանշանակ կերպով չեն ընդունվում: Այսպես, օրինակ, դեռ Վ. Հունբուրգից եկող այն տեսակետը, որ ամերիկահնդկացիական լեզուներին բնորոշ է նախադասության ներմարմնավորյալ (ինկորպորատիվ) տիպը, իրականությանը չի համապատասխանում, քանի որ գրի բացակայության պայմաններում նախադասության սահմանների որոշումը այդ լեզուներում իրական չէ: Ռուս լեզվաբան Բորիսեն դե Կուրտենեն առաջինն էր, որ լեզուների տիպաբանական յուրահատկությունների բացահայտման նպատակով ներգրավեց հնչյունաբանական հատկանիշներ: Այդպիսով, նա սլավոնական լեզուները խմբավորեց՝ ըստ ձայնավորների երկար/կարճ հատկանիշի և շեշտի ձևաբանական գործառնության: Նրա այս սկզբունքներն ավելի ընդգրկուն կերպով կիրառվեցին հետագայում Ն. Տրուբեցկոյի կողմից: Վերջինս իր “Мысли об индоевропейской проблеме” (1937) հոդվածում հնդեվրոպական լեզուների համար առանձնացնում է ընդհանուր վեց տիպաբանական հատկանիշներ. 1) ձայնավորների ներդաշնակության բացակայություն, 2) բառակզբում և բառամիջում բաղաձայնների գործածության բարձր հաճախականություն, 3) նախածանցների պարտադիր գոյություն, 4) ձևակազմության մեջ ձայնավորների հերթագայության առկայություն, 5) բաղաձայնների հերթագայություն և 6) անցողական և անանցողական բայով նախադասության ենթակայի մույնականություն:

Նշված տիպաբանական հատկանիշների հիման վրա Տրուբեցկոյը առանձնացնում է հնդեվրոպական լեզուները սեմական, կովկասյան, ուգրաֆիննական և այլ լեզուներից:

Հայտնի է նաև Է. Սեպիրի կողմից առաջարկված, այսպես կոչված, «աստիճանական» տիպաբանությունը, որը լեզուների բազմաբնույթ առանձնահատկությունները փորձում է արտահայտել սանդղաձև տեսքով, որտեղ յուրաքանչյուր աստիճանը կապվում է նախորդի և հաջորդի հետ: Հարաբերությունների արտահայտման հնարավորությունների տեսակետից բոլոր քերականական միջոցները Սեպիրը ներկայացնում է չորս ձևերով՝ մեկուսացում (բնորոշ միջոցներն են օժանդակ բառերը, բառերի դասավորությունը և հնչերանգը), կցում, խորհրդանշում (ձայնավորների հերթագայություն, կրկնություն և շեշտ) և ձուլում:¹

Այս ամենով հանդերձ, ժամանակակից տիպաբանությունը նաև ելնում է այն բանից, որ յուրաքանչյուր առանձին լեզվում հանդես են գալիս լեզվի բոլոր տիպերը միաժամանակ, որոնցից, սակայն, միայն մեկն է գերակայող:

Լեզուների տիպաբանական ուսումնասիրությունը կատարվում է սովորաբար ըստ երկու սկզբունքների՝ հարցաթերթային և չափանմուշային: Առաջին սկզբունքի դեպքում առաջնային է դիտվում այն հատկանիշների ամբողջությունը, որոնք բնութագրում են կոնկրետ լեզուն: Այսպես, օրինակ՝ խուլ և ձայնեղ բաղաձայնների հակադրությունը բնորոշ է լեզուների մեծ մասին, սակայն չինարենի մանդարինյան բարբառը ձայնեղ բաղաձայններ չունի: Տարբեր լեզուներում ի հայտ եկող նման հատկանիշները հիմք են համապատասխան տիպաբանական չափանիշների մշակման համար:

Քանի որ հարցաթերթային սկզբունքը մասնավոր հատկանիշներից գնում է դեպի ընդհանուրը, այն անվանվում է նաև ինդուկտիվ:

Չափանմուշային սկզբունքի դեպքում ընտրվում է այն լեզուն, որի առանձնահատկություններից ելնելով բնութագրվում է մյուս լեզուն (կամ լեզուները):

Երբեմն չափանմուշային լեզուն դիտվում է որպես երրորդ համեմատելի (*tertium comparationis*), երբ երկու լեզուների տիպաբանական յուրահատկությունները բացահայտվում են մեկ այլ՝ երրորդ լեզվի հատկանիշների հիման վրա: Ժամանակակից տիպաբանական ուսումնասիրություններում հաճախ որպես չափանմուշային լեզու է դիտվում մայրենի լեզուն՝ ուսումնասիրվող օտար լեզվի տիպաբանական առանձնա-

¹ Сепир Э., Язык, М.-Л., 1934, стр. 112

հատկությունների նկարագրության համար: Առաջին լատինական քերականությունները կազմվել են հունարենի չափանմուշային յուրահատկությունների հիման վրա, իսկ հետագայում եվրոպական լեզուների քերականությունները գրվել են՝ ըստ հունալատինական չափանմուշի: Այսպիսով՝ չափանմուշ - լեզուն ներկայացնում է կանոնների համակարգ, որի հիման վրա կարելի է կառուցել ցանկացած նկարագրություն:

Կախված տիպաբանական ուսումնասիրության արդյունքների ներկայացման ձևից՝ տարբերում են որակական և քանակական տիպաբանություն հասկացությունները: Որակական տիպաբանության վերջնական նպատակը, ըստ էության, լեզուների տարբեր կարգի դասակարգումներն են՝ դրանց ենթահամակարգային կառուցվածքների համեմատությամբ: Ընդ որում, այստեղ առաջնային են լեզուների տիպաբանորեն էական հատկանիշները, որոնք բնութագրում են լեզվի որակական կողմը: Ասվածը առաջին հերթին վերաբերում է քերականական կարգերին և քերականական արտահայտության միջոցներին, որոնց առկայությունը համապատասխան ձևերով կամ բացակայությունը (փոխարինվող ձևերի առկայությամբ) ներկայացնում են կոնկրետ լեզվի որակական առանձնահատկությունները, ինչպես, օրինակ, քերականական սեռի կարգի առկայությունը, այն հոդերի ու վերջավորությունների օգնությամբ արտահայտելու հնարավորությունը գերմաներենում և այլ կարգի իսպառ բացակայությունը հայերենում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր լեզվին բնորոշ կառուցվածքային առանձնահատկությունները կարող են արտահայտվել թվերի միջոցով, ապա լեզուների միջև նկատվող նմանությունները և տարբերությունները ձեռք են բերում նաև քանակական բնութագրեր: Զանակական տիպաբանության հիմնադրույթները մշակվել են ամերիկացի լեզվաբան Ջ. Գրինբերգի կողմից:¹

Ի տարբերություն Մեյիիի՝ նա փորձել է յուրաքանչյուր հատկանիշ բնութագրել երկու միավորների հարաբերությամբ, որոնցից յուրաքանչյուրը, ըստ 100 բառից կազմված տեքստում գործառական հաճախականության, ստանում է որոշակի թվային գործակից:

Գրինբերգի դասակարգման հիմքում ընկած են հինգ հատկանիշներ (Մեյիիի չորսի դիմաց) և այս կամ այն լեզվի տեղը որոշելու համար

¹ Greenberg J., Language Typology, The Hague/Paris, 1974, P. 111-132

սահմանվում են մեկից ավելի գործակիցներ: Առաջին չափանիշը համադրման (սինթեզի) աստիճանն է կամ բառի ընդհանուր բարդությունը: Օրինակ՝ հայ. **երգ-իչ** և գերմ. Säng-er ձևերը ներկայացնում են երկու ձևույթներ, որոնք կազմում են մեկ բառ: Այդպիսով՝ ունենք M/W հարաբերությունը, որտեղ M-ը ձևույթների քանակն է, իսկ W-ն (անգլ. word)՝ բառերի, որը ներկայացնում է համադրման չափը և կոչվում է համադրական գործակից: Տեսականորեն՝ նշված գործակիցը 1,00-ից փոքր լինել չի կարող, քանի որ յուրաքանչյուր բառ պետք է պարունակի ամենաքիչը մեկ հասկացական միավոր: Հաջորդ չափանիշը վերաբերում է կապակցման միջոցներին: Ըստ այդմ՝ ունենում ենք այնպիսի լեզուներ, որտեղ իմաստատար տարրերը միանալով համարյա չեն փոխվում: Դրանք պատկանում են կցական տիպին, որի գործակիցը որոշվում է կցական կառույցների և ձևակալին սահմանագծերի քանակի փոխհարաբերությամբ: Սովորաբար ձևակալին սահմանագծերի քանակը ձևակների թվից մեկով պակաս է: Գրիներգը ձևակ (morph) է անվանում ասույթի իմաստակիր այն հատույթները, որոնք բացահայտ կերպով առանձնանում են: Տարբեր ձևակներ կարող են մաս հերթագայվել, ինչպես, օրինակ՝ հայ. **տուգ-անք** / **տուժ-ել**, ռուս. бер-аem / беж-им կամ գերմ. bux / byç-er, որտեղ տարբեր լեզուների համապատասխան ձևերում ունենք երկու ձևակներ, սակայն մեկ ձևակալին սահմանագիծ: Այստեղ կցականության գործակիցն է A/J, որտեղ A-ն ներկայացնում է կցական կառույցների քանակը, իսկ J-ն (անգլ. juncture)՝ ձևակալին սահմանագծերը: Նմանատիպ ձևակների շարքը բերվում է մեկ ընդհանուր հասկացության տակ՝ որպես ձևույթ (morphem): Բարձր կցականության գործակից ունեցող լեզուները հատկացվում են կցական տիպին, իսկ փոքր գործակից ունեցողները՝ ձուլական տիպին:

Գրիներգի մյուս երկու չափանիշները վերաբերում են տարբեր լեզուներում բառերի բարդացման և ածանցման ձևերին: Դրանց հիման վրա նա առանձնացնում է նախածանցական, վերջածանցական և միջածանցական տիպի լեզուներ, որոնք, սակայն, նախորդ չափանիշների հիման վրա սահմանվող լեզվական տիպերի հետ շատ դեպքերում հակասության մեջ են, քանի որ ոչ բոլոր լեզուները կարելի է ներկայացնել նրա կողմից մշակված հինգ հատկանիշներով: Իսկ որևէ լեզվում այս կամ այն հատկանիշի բացակայությունը առաջացնում է կոնկրետ լեզվական տիպի բնորոշման ոչ բավարար պայմաններ: Այսպիսով՝ Գրին-

բերգին չի հաջողվում ներկայացնել այնպիսի բացարձակ ընդհանրություններ, որոնց հիման վրա հնարավոր կլինի բացահայտել լեզվական բոլոր տիպերը: Այսուհանդերձ, նրա դրույթները կիրառելի են սահմանափակ քանակով լեզուների համար և լեզուների ձևաբանական կառուցվածքի տեսակետից այդ դրույթների առավելությունն ակնհայտ է: Միևնույն ժամանակ Գրինբերգը (ինչպես նաև նրա նախորդները) անդրադառնում է միայն լեզվի ձևությանին մակարդակին, իսկ հնչությանին նրա ուշադրությունից դուրս է մնում: Մինչդեռ ձևակազմական տիպը ուղղակիորեն կախված է լեզվի նվազագույն նյութական միավորների՝ հնչույթների տիպաբանական առանձնահատկություններից: Այս հանգամանքի գիտակցումը ժամանակակից տիպաբանական լեզվաբանության գերիշխող միտումներից է, և այսօր կատարվում են բազմաբնույթ տիպաբանական ուսումնասիրություններ նաև հնչությանբանության բնագավառում: Այստեղ առաջնությունը կրկին պատկանում է ամերիկացի գիտնականներին (Գ. Յիպֆ, Պ. Գիրո, Պ. Ջ. Հոպեր, Դ. Ստեմի, Վ. Կրոֆտ և այլք), որոնք կիրառում են քանակական տիպաբանության հիմնադրույթները նաև հիշյալ բնագավառում:

Հաշվի առնելով նախորդ հետազոտությունների արդյունքները և հիմք ընդունելով 16 հնդեվրոպական լեզուների և հունգարերենի փաստերը՝ Վ. Կրոֆտը ներկայացրել է բաղաձայնների վիճակագրական հետևյալ առանձնահատկությունները. 1) տեքստում խուլ բաղաձայնների գործառական հաճախականությունն ավելի բարձր է քան ձայնեղների (մոտավորապես 7/3 հարաբերությամբ): 2) Առաջնալեզվային բաղաձայնների գործառական հաճախականությունը կազմում է 52%՝ շրթնայինների 22% և հետնալեզվայինների 26% հաճախականության դիմաց:¹ Մեր կողմից ներկայացվել են այն իրական պայմանները, որոնց հետևանքով հնդեվրոպական լեզուներում գոյություն ունի այնպիսի իրավիճակ, որ շրթնային բաղաձայնները իրենց գործառական հաճախականությամբ զիջում են հետնալեզվային և առաջնալեզվային բաղաձայններին, իսկ խուլերի հաճախականությունն ավելի բարձր է քան ձայնեղներին:²

Այս ամենով հանդերձ, ժամանակակից տիպաբանությունը ներկայացնում է նաև մի նոր ուղղություն, որը կոչվում է տարաժամանակյա

¹ Croft W., Typology and Universals, Cambridge, 1990, p. 97.

² Տե՛ս Գաբրիելյան Յու., Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր. 2001, էջ 105-108:

տիպաբանություն: Վերջինիս հիմնադրույթները մշակվել են ինչպես ամերիկյան դպրոցի (Է. Սեպիր, Ե. Կոսերիու, Ջ. Բայբի, Բ. Քոմբի, Պ. Ջ. Հոպեր, Մ. Ռահլեն), այնպես էլ եվրոպական (այդ թվում նաև ռուսական) դպրոցի ներկայացուցիչների (Ժ. Վանդրիես, Հ. Պեդերսեն, Մ. Մայրհոֆեր, Վ. Դրեսլեր, Ն. Անդրեն, Վ. Ժուրավյով, Վ. Իվանով, Վ. Լեհման) կողմից: Այս ուղղության առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն տարբեր կարգի ընդհանրությունների սահմանմամբ զբաղվող ընդհանուր տիպաբանության, որտեղ ժամանակի գործոնը, ինչպես նաև ծագումնաբանական փաստերը հաշվի չեն առնվում, այն մնում է ժամանակի մեջ և առաջնային է համարում լեզուների ցեղակցական կապերը, քանի որ մի կողմից լեզուն այնպիսի երևույթ է, որ գոյություն ունի ժամանակի մեջ և ապա՝ ցանկացած լեզվի տիպաբանական յուրահատկությունները բացատրելի են հիմնականում ծագումնաբանական փաստերով: Նշված ուղղության համար կարևոր են ոչ միայն կոնկրետ լեզվի (կամ լեզուների) տիպաբանական յուրահատկությունների նկարագրությունը, այլև այդ յուրահատկությունների ձևավորման նախադրյալների պարզաբանումը, ինչը առանց ծագումնաբանական փաստերի ներգրավման հնարավոր չէ իրականացնել:

Այս ամենի հաշվառումով սույն ձեռնարկում որպես ուսումնասիրության հիմնական մեթոդ է ընտրված չափանմուշային սկզբունքը և, գործնական նպատակադրումներից ելնելով, ժամանակակից գերմաներենի տիպաբանական առանձնահատկությունները ներկայացվում են հայերենի փաստերի հետ զուգադրմամբ, որը հանդես է գալիս որպես չափանմուշ - լեզու: Մինչ այժմ գոյություն ունեցող նմանատիպ ուսումնասիրություններում որպես չափանմուշային լեզուներ են ընտրվել անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և այլ լեզուներ, իսկ հայերենը ներգրավվում է առաջին անգամ: Ընդ որում, ինչպես կտեսնենք ստորև, գերմաներենը և հայերենը ցուցաբերում են այնպիսի տիպաբանական յուրահատկություններ, որոնք այլ լեզուների հետ զուգադրելիս ի հայտ չեն գալիս: Այդ առումով, կարելի է ասել, որ սույն աշխատանքն ունի ոչ միայն ուսումնական ձեռնարկի, այլև գերմաներենի և հայերենի տիպաբանական առանձնահատկությունների գիտական ուսումնասիրության արժեք: Բացի այդ, առաջին անգամ ժամանակակից գերմաներենի տիպաբանական առանձնահատկությունները, ի տարբերություն մյուս աշխատությունների, բացահայտվում են նաև հնչույթային մակարդակում:

Այստեղ նորույթ է մասն քննարկվող լեզուների պատմական փաստերի ներգրավումը, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու ժամանակակից գերմաներենի (ինչպես մասն հայերենի) տիպաբանական յուրահատկությունների ձևավորման պատմական մախաղըյալները:

Նկատի ունենալով մասն, որ տիպաբանության տեսակետից առավել էական է լեզվի ձևաբանական կառուցվածքը, որի հիմքում նրա հնչույթային համակարգն է, այստեղ անդրադառնում ենք հիմնականում գերմաներենի հնչյունաբանական (հնչույթաբանական) և ձևաբանական յուրահատկությունների վերլուծությանը՝ ներգրավելով մասն հայոց լեզվի համապատասխան փաստերը, իսկ շարահյուսական կառուցվածքները քննարկվում են միայն ընդհանուր գծերով:

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ **(հնչույթաբանություն)**

Հարկ է նշել, որ գերմաներենի հնչույթային համակարգի տիպաբանական առանձնահատկությունների բացահայտման համար, ի տարբերություն մյուս հնդեվրոպական լեզուների, հայոց լեզուն իր հնչույթային յուրահատուկ կառուցվածքով ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում: Մյուս կողմից, թեև ծագումնաբանորեն գերմաներեն և հայերեն լեզուները պատկանում են նույն լեզվաընտանիքին, սակայն դրանց պատմական զարգացման արդյունքում ձևավորվել են ընդհանուր առմամբ տարբեր հնչյունային (հնչույթային) համակարգեր: Նախ՝ կարևոր է այն փաստը, որ գերմաներենի և հայերենի հնչույթների քանակային տարբերության հիմքում հիմնականում որակայնությունն է, որի հետևանքով գերմաներենում ունենք 18 ձայնավոր (ներառյալ 3 երկբարբառները)՝ հայերենի 6 ձայնավոր հնչույթների դիմաց և 23 բաղաձայն՝ հայերենի 30 բաղաձայն հնչույթների դիմաց: Այսպիսով՝ առաջին հայացքից էլ պարզ է, որ գերմաներենի տիպաբանական յուրահատկություններն առավել տեսանելի են ձայնավորական, քան բաղաձայնական համակարգում, եթե նկատի ունենանք, որ այստեղ հիշյալ յուրահատկությունները փորձ է արվում վեր հանել հայերենի համապատասխան փաստերի օգնությամբ: Ուստի, նախ՝ կարևոր է ճշտել գերմաներենի հնչույթային համակարգին բնորոշ որակական առանձնահատկությունները: Նման վերլուծության համար, իհարկե, նպատակահարմար է ելնել հնչույթի ուժեղ դիրքի և նրա տարբերակիչ հատկանիշների սահմանման սկզբունքներից: Հնչույթի ուժեղ դիրք ասելով՝ հասկանում ենք այն դիրքը, որտեղ հնչույթը հանդես է գալիս իր բոլոր հատկանիշներով: Այլ կերպ՝ դա այն դիրքն է, երբ շրջակայքի հնչյունների ազդեցությունը նվազագույն է կոնկրետ հնչյունի վրա և այն լիակատար կերպով դրսևորում է իր բնախոսական - արտասանական առանձնահատկությունները: Դրա հետ սերտորեն կապված է հնչույթի տարբերակիչ հատկանիշների սահմանումը, երբ վեր են հանվում հնչույթի այն կայուն հատկանիշները, որոնք առկա են նրա բոլոր տարբերակներում: Ձայնավորների և բաղաձայնների հնչույթային արժեքը բացահայտվում է հակադրական գույգերում, այսինքն՝ այնպիսի գույգ բառերում, որոնք իրենց արտահայտության պլանում տարբերվում են միայն տվյալ հնչույթով կամ հատկանի-

շով: Զույգային հակադրության եղանակով կարելի է հասնել հնչույթների տարբերակիչ հատկանիշների առանձնացմանը, որը և կազմում է հնչույթային վերլուծության վերջնական փուլը:

Չայնավորներ և երկբարբառներ

Գերմաներենի և հայերենի ձայնավոր հնչույթները զուգադրելիս ի հայտ են գալիս հետևյալ առանձնահատկությունները.

ա) գերմաներենում ձայնավորի տևողության տարբեր աստիճանները տարբերակիչ հատկանիշների են, և նույն հնչույթային կազմության մեջ երկար - կարճ հատկանիշների հակադրությամբ տարբերակվում են իմաստներ, օր.՝ Staat[ʃta:t]-Stadt[ʃtat]: Դրան հակառակ՝ հայերենում ձայնավորի տևողությունը տարբերակիչ հատկանիշ չէ, և եթե այն առկա է, ապա միայն վանկերի տարբեր քանակի կապակցությունների, հնչյունաշղթայի տարբեր հատույթների կամ խոսելիս՝ սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման համար: Նույն կերպ՝ հայերենում բացակայում է ժամանակակից գերմաներենին բնորոշ փակ (նեղ) - բաց (լայն) հնչույթային հատկանիշների հակադրությունը: Այս հանգամանքը պայմանավորված է արտասանության ժամանակ լեզվի մակերեսի կծկված կամ փռված լինելու իրողությամբ, ինչպես՝ Beet[be:t]-Bett[bet]: Ընդ որում, այս հակադրությունը միևնույն ժամանակ ուղեկցվում է երկար - կարճ տարբերակիչ հատկանիշների հակադրությամբ: Գերմաներենում երկբարբառների առկայության պայմաններում ունենք նաև հատկանիշների սահուն - ոչ սահուն հակադրությունը, որը երկբարբառային արտասանության առանձնահատկություն է, ինչպես՝ kein[kæ:n]-Kahn[ka:n] կամ kaum[kaom]-kam[ka:m]: Երկբարբառների բացակայությունը հայերենում, բնականաբար, այս հակադրությունը չի ենթադրում:

Գերմաներենին բնորոշ շրթնայնացվածության և ոչ շրթնայնացվածության հնչույթային հակադրությունը նույնպես կարևոր տեղ է գրավում տարբերակիչ հատկանիշների շարքում, ինչպես՝ küssen [ˈkysən] - kissen [ˈkisən]:


Հայերենում, ի տարբերություն գերմաներենի, շրթնայնացվածությունը շատ ուժեղ չէ, սակայն այն, այնուամենայնիվ, հանդես է գալիս որպես տարբերակիչ հատկանիշ (**տառ - տուր, գալ - գոլ** և այլն):

բ) Ըստ շարքայնության և լեզվի բարձրացման հատկանիշների՝ գերմաներենի և հայերենի ձայնավորների միջև առկա է որոշակի ընդհանրություն, թեև գերմաներենը կրկին ցուցաբերում է մի շարք յուրահատկություններ: Նախ՝ հիշենք, որ ձայնավորների շարքայնության հատկանիշը առաջանում է լեզվի հորիզոնական շարժումով դեպի առաջ, ընդ որում, առաջին շարքի ձայնավորների արտաբերման ժամանակ մասնակցում է լեզվի առաջին մասը, իսկ ամբողջ լեզուն ձգվում է դեպի առաջ, մյուս ձայնավորներն արտաբերելիս՝ լեզուն համեմատաբար պակաս է ձգվում: Այդպիսով՝ գերմաներենի հետին շարքի [u:], [v] և [o:], [ɔ] ձայնավոր հնչույթների դիմաց ունենք հայերենի **ա, օ (ո), ու** հնչույթները, առաջին շարքի [i:], [I], [e:], [ε], [ε:], [y:], [y], [ø:], [œ] հնչույթների դիմաց՝ **է (ե), ի** և միջին շարքի [a:], [a]-ի դիմաց՝ միայն **ը**: Ինչպես տեսնում ենք, ամենամեծ քանակային տարբերությունը առկա է առաջին շարքում, որը բացատրվում է հիմնականում հայերենում տևականության հնչույթային հատկանիշի և մասամբ՝ փակ - բաց հակադրության բացակայությամբ: Մյուս տարբերությունն էլ այն է, որ եթե հայերենի **ա**-ն հետին շարքի է, ապա գերմաներենի համապատասխան հնչույթն իր երկար և կարճ տարբերակներով միջին շարքի է և իր արտասանական բնութագրով ավելի մոտ է հայերենի **ը**-ին, քան **ա**-ին:

Այսպիսով՝ հիմք ընդունելով լեզվաբանական գրականության մեջ ընդունված ձայնավորական եռանկյունին (Հելվագի եռանկյունի), որտեղ երկու չափումներով ներկայացվում է համապատասխան ձայնավորի շարքայնացումը և բարձրացումը, գերմաներենի և հայերենի համար ունենում ենք հետևյալ համադրական պատկերը.

գերմաներենում

հայերենում



Ընդհանուր առմամբ, գերմաներենի ձայնավորական համակարգի տիպաբանական յուրահատկությունները պայմանավորված են նրա բնախոսական բնութագրերով, որոնց թվում պետք է նշել գերմաներենի ձայնավորների արտաբերման ժամանակ մկանային լարվածության առավել բարձր աստիճանը հայերենի նկատմամբ, նախաձանցների, ինչպես նաև արմատների շեշտակի ձայնավորների արտաբերման ավարտի յուրահատուկ բնույթը և առաջին շարքի ձայնավորների արտասանության ժամանակ լեզվի առավել առաջ ձգված լինելու հանգամանքը:

Գերմաներենի ձայնավորական համակարգի բնութագրման համար առանձին կարևորություն ունի [ə] և [ɐ] կրճատ հնչույթների խնդիրը: Վերջինիս բարդությունն այն է, որ գերմանագիտական լեզվաբանության մեջ չկա միասնականություն այդ հնչույթների բնորոշման մեջ: Նախ՝ գերմաներենի վերոհիշյալ հնչույթները դժվար է դիտել որպես ինքնուրույն հնչույթներ, քանի որ դրանք արդեն որոշակի հատկանիշներով բնութագրվող հնչույթների կրճատ արտաբերական տարբերակներ են, ինչպես՝ **Bote** [ˈbo:tə], **Kohle** [ˈko:lə] և այլն: Բացի այդ, ըստ ծագման, եթե [ə]-ն ձայնավորական է, ապա [ɐ]-ն՝ ձայնորդական, թեև արտաբերման տեսակետից համարյա նույնական են: Այս հնչույթները հիմնականում հանդիպում են բառավերջի հնչույթային հատույթներում

և կարելի է բնորոշել որպես անշեշտ վանկում արտասանության թուլացման արդյունք: Հարկ է նշել, որ հայերենն այն լեզուներից է, որն իր **ձ (ը)** հնչույթի օգնությամբ հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացում կազմել գերմաներենի նշված կրճատ ձայնավորների առանձնահատկությունների մասին: Այստեղ պետք է նկատի ունենալ հատկապես այն հանգամանքը, որ հայերենի **ը**-ն մույնպես ներկայացնում է ձայնավորների (ի, ու, ա) թուլացված տարբերակը, ինչպես, օրինակ՝ **գիր - գ(ը)րել** կամ **տուն - տ(ը)նակ** և այլն՝ որպես արմատական ձայնավորի թուլացում: Որպես հնչյունային կազմի անդամ՝ հայերենի **ը**-ի հնչույթային արժեքը սահմանափակ է և բացի մի քանի բառասկզբնային դիրքերից (**ըմբ-**, **ընդ-** և այլն), այն գրության մեջ չի արտացոլվում:

Մեկ այլ խնդիր է նաև գերմաներենի [æ], [ao] և [ɔɐ] երկբարբառների տիպաբանական բնութագրերի հարցը, որոնք սահուն - ոչ սահուն հատկանիշների հակադրմամբ տարբերակում են իմաստներ, ինչպես՝ Bein [bæ:n] - Bahn [ba:n], Zaun [tsaon] - Zahn [tsa:n], Bräute [brɔtə] - Brote [ˈbro:tə] և այլն: Սակայն գերմանագիտական ուսումնասիրություններում նշված երկբարբառների հնչույթային իրական արժեքների հարցում միասնականություն գոյություն չունի: Ինչպես, օրինակ, Դուդենի բառարանում դրանք ներկայացվում են [ai], [au] և [oi] տեսքով, այսինքն՝ երկրորդ բաղադրիչներ են համարվում **i** և **u** ձայնավորները: Առանձին լեզվաբաններ էլ այդ երկբարբառներին վերագրում են երկհնչույթային արժեք՝ [aI], [av] և [ɔy] տեսքով:¹

Ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ գերմաներենի վերոհիշյալ երկբարբառները, իրենց միասնական և արագ արտաբերման պատճառով, վանկարար տարրեր են, և նրանց տեսականությունը համապատասխանում է երկար ձայնավորներին: Երկբարբառների առաջին բաղադրիչներն արտաբերվում են կարճ և հստակ, իսկ երկրորդները՝ ոչ հստակ և փոքր-ինչ ձգված: Իսկ, քանի որ երկրորդ բաղադրիչները արտաբերվում են ոչ հստակ կերպով, ապա ունենում են տարբեր ընկալումներ, որն էլ արտահայտվում է գրադարձական տարբեր ձևերով: Ելնելով այն հանգամանքից, որ գերմաներենի երկբարբառների հնչույթային արժեքը հիմնավորվում է այն իրողությամբ, որ դրանք հակադրական զույգեր են

¹ St u Meinhold G., Stock E., Phonologie der deutschen Gegenwartssprache, Leipzig, 1980, S. 88

կազմում ինչպես երկար ձայնավորների, այնպես էլ միմյանց հետ, կարելի է այդ երկբարբառները դիտել որպես մեկ վանկի մեջ երկու ձայնավորների կապակցություններ, որոնք արտաբերման տեսակետից անտրոհելի են և ներկայացնում են մեկ միասնական արտասանական միավոր: Քանի որ ժամանակակից հայերենը չունի ընդհանրապես երկբարբառներ, հետևաբար գերմաներենի այդ երկբարբառները ճիշտ կլինի թերևս փորձել նկարագրել այնպիսի հնչյունակապակցությունների օգնությամբ, ինչպիսիք **այ, ոյ** երկհնչյուններն են և միայն օտար բառերում առկա **աու** (Լատուրա) կապակցությունը: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ, ի տարբերություն գերմաներենի, նշված կապակցություններից առաջին երկուսի (այ, ոյ) բաղադրիչները, չնայած արտասանության հարաբերական միասնականությանը, ընդհանուր առմամբ, հնչույթաբանորեն տրոհելի են և ենթարկվում են հայերենի վանկատման կանոններին, ինչպես՝ **գո-յա-կան, Հա-յաս-տան** և այլն:

Բաղաձայններ

Ժամանակակից գերմաներենի բաղաձայնական համակարգի տիպաբանական յուրահատկությունների բացահայտումը հայերենի օգնությամբ, բացառությամբ առանձին դեպքերի, ընդհանուր առմամբ, բավականաչափ արդյունավետ է: Վերջինս բացատրվում է այն հանգամանքով, որ, ի տարբերություն մի շարք այլ ցեղակից լեզուների, հայերենն իր տրամադրության տակ ունի բազմաբնույթ բաղաձայնական շարքեր: Գերմաներենի բաղաձայնների բնախոսական առանձնահատկությունների տեսակետից կրկին կարևոր է արտաբերման ժամանակ առավել ուժեղ մկանային լարվածությունը, քան հայերենում է, ինչպես նաև վերջինիս հակադրությամբ, գերմաներենի բաղաձայնների արտաբերման համար անհրաժեշտ արտամղվող օդի ավելի մեծ ուժը: Նման առանձնահատկությունները մեծ դեր ունեն բաղաձայնների ձևավորման մեջ այն առումով, որ վերջիններիս ամենակարևոր ընդհանուր բնութագիրը նրանց տեղայնացվածությունն է: Այս դեպքում նկատի է առնվում, որ համապատասխան բաղաձայնի արտաբերումը ենթադրում է արտասանական օրգանների մկանային լարվածությամբ ստեղծվող

փակվածքի կամ նեղվածքի առկայություն: Ինքնին հասկանալի է, որ ուժեղ կամ ամուր պատնեշի ստեղծումը պահանջում է մկանների առավել մեծ լարվածություն, որով էլ բնութագրվում է հնչյունների լարվածության հատկանիշը: Ընդ որում, որքան մեծ է հնչյունի արտաբերման ժամանակ լսվող աղմուկը, այնքան ամուր է պատնեշը, հետևաբար և մեծ է լարվածությունը: Նշված պատճառներով գերմաներենի խուլ պայթականները շնչեղացվում են, իսկ խուլ շփականները, ի տարբերություն իրենց հայերեն համապատասխանների, արտաբերվում են ավելի մեծ աղմուկով: Նույն կերպ՝ առավել ուժեղ մկանային լարվածության հետևանքով, գերմաներենի ձայնեղ բաղաձայնները ավելի աղմկուն են, քան նրանց հայերեն համապատասխանները: Հարկ է նշել նաև, որ գերմաներենի շփականների համար ստեղծվող նեղվածքը ավելի փոքր է, քան հայերենում, որի պատճառով ստեղծվում է օդի հոսքի ավելի մեծ ճնշում նեղվածքի պատերին և համապատասխան հնչյունն արտաբերելիս նկատվում է այդ հոսքի ուժեղ շփում արտասանական օրգանների հետ, իսկ արդյունքում՝ նաև ավելի մեծ աղմուկ: Գերմաներենի բաղաձայնական համակարգին բնորոշ մեկ այլ առանձնահատկություն է նաև նրա ձայնեղների շարքի կազմավորման ժամանակ ձայնալարերի հարաբերականորեն ավելի թույլ ակտիվությունը: Այն դեպքում, երբ մինչև որևէ պայթական կամ շփական արտաբերելը հայերենում ձայնալարերն սկսում են թրթռալ, գերմաներենում այդ թրթռումը սկսվում է այն ժամանակ, երբ արդեն աղմուկը լսելի է: Այդպիսով հայերենի ձայնեղ բաղաձայնների մոտ ձայնը փոքր-ինչ նախորդում է աղմուկին, իսկ գերմաներենում այդ երկուսը հանդես են գալիս միաժամանակ:

Բոլոր վերոհիշյալ առանձնահատկությունների հաշվառումով, ըստ արտաբերման եղանակի հատկանիշի (հպականացման կամ պայթականացման), հայերենի երեք շարք բաղաձայնների դիմաց գերմաներենում ունենում ենք երկուսը.

[b], [d], [g],

[p], [t], [q]

[p], [t], [k],

[պ], [տ], [կ]

[փ], [թ], [ք]

Նշված տարբերությունը, ինչպես վերը նշվեց, բխում է զուգադրվող լեզուների արտասանական բազաների յուրահատկություններից, եթե նկատի ունենանք նաև, որ գերմաներենի [p], [t], [k] հնչույթները խոսքում իրացվում են որպես շնչեղ [p^h], [t^h], [k^h]: Մյուս կողմից՝ ակնհայտ է,

որ գերմաներենում շնչեղությունը, որպես հավելյալ հատկանիշ, լարված արտաբերման արդյունք է, ինչը կենդանի խոսքում չի գիտակցվում: Ուստի, տիպաբանորեն գերմաներենի հիշյալ պայթականները զուգադրելի են հայերենի [փ], [թ], [ք] հնչույթների հետ՝ ըստ շարքի հակադրական զույգեր կազմելու հնարավորության, ինչպես օրինակ՝ գերմ. Pellen [p^(h)ɛ lə n] - bellen [ˈbɛ lə n], Tank [t^(h)aŋ k] - Dank [dan k], Kunst [k^(h)vnst] - Gunst [gvnst], հայ. փուռ - բուռ, թեզ - դեզ, քայլ - գայլ և այլն:

Հնարավոր է հակադրական զույգերի կազմում (պայթական բաղաձայնների) նաև այլ հնչույթային հատկանիշների հիման վրա, ինչպես՝ շրթնային - ատամնային, հմմտ. գերմ. peilen [p^(h)æ lən] - teilen [t^(h)æ lən], հայ. փաթ - թաթ, ատամնային - հետնալեզվային, ինչպես՝ Tante [t^(h)antə] - Kante [k^(h)antə], թաղ - քաղ և այլն:

Տիպաբանության տեսակետից գերմաներենի [m], [n] և հայերենի [մ], [ն] հնչույթները լրիվ զուգադրելի են, քանի որ երկու լեզուներում էլ դրանք հակադրվում են միմյանց՝ ըստ արտաբերման տեղի և միանում են՝ ըստ ռնգայնության հատկանիշի: Մյուս կողմից, սակայն, ի տարբերություն հայերենի, գերմաներենում հիշյալ ձայնորդների արտաբերման ավելի մեծ լարվածության հետևանքով հայումը ավելի ուժեղ է, և դրանով իսկ՝ աղմուկն ավելի գերիշխող է, քան ձայնը: Նույն կերպ կարելի է նշել, որ գերմաներենի [f], [s], [ʃ], [x], [h], [v], [z], [ŋ], [j], [r], [l] և հայերենի համապատասխան [ֆ], [ս], [շ], [խ], [հ], [զ], [յ], [ռ], [լ] շփականները նույնպես տիպաբանական մմանակներ են՝ հատկապես ըստ արտաբերման եղանակի: Այս դեպքում կրկին պետք է նկատի ունենալ գերմաներենին բնորոշ արտաբերական ուժգնությունը և դրա հետ կապված աղմուկի մեծ քանակի առկայությունը: Այս հնչույթները, բացի վերոհիշյալ արտաբերման եղանակի հիման վրա կազմվող ընդհանուր հակադրություններից, իրենց էական հատկանիշները կարող են դրսևորել նաև միմյանց նկատմամբ այլ կարգի հակադրություններում: Այսպես, օրինակ՝ ըստ շրթնային - ատամնային հակադրության՝ գերմ. [f]-[s]: schleifen [ʃl æfən] - schleiben [ʃlæsən], հայ. [ֆ] - [ս]՝ ֆազ - սազ կամ գերմ. [v] - [z]: wehen [ˈve:ən] - sehen [ˈze:ən], հայ. [վ] - [զ]՝ վառ - գառ: Ըստ ձայնային հատկանիշի՝ խուլ - ձայնեղ հակադրություններ. գերմ. [f] - [v]: falten [ˈfaltən] - walten [ˈvaltən], հայ. [ֆ] - [վ]՝ աֆիշ - ավիշ, գերմ. [s] - [z]: reißen [ˈræsən] - reisen [ˈræzən], հայ. [ս] - [զ]՝ սոխ - զոխ: Ըստ ատամնային - նախաքմային հակադրության՝ գերմ. [s] - [ʃ]: Fleiß

[flæs] - Fleisch [flæʃ], հայ. [u] - [ʒ]՝ և այլն: Ամեն դեպքում, ցանկացած հակադրության մեջ գերմաներենի և հայերենի համապատասխանությունը վերոհիշյալ շփականների հարցում ակնհայտ է: Ասվածը վերաբերում է նաև այդ լեզուների [h] կոկորդայինին՝ առաջին հերթին դրանց բաշխման ընդհանուր սահմանափակվածությամբ: Չնայած առանձին դեպքերին՝ [h] հնչույթը թե՛ գերմաներենում և թե՛ հայերենում մեկուսի է և իր հնչության լեզվական հատկանիշները տարբեր կարգի հակադրություններում լիակատար կերպով չի դրսևորում: Թեև հայերենում այդ հնչույթը իրացվում է տարբեր դեպքերում, սակայն, թերևս ճիշտ կլինի երկու լեզուներում էլ որպես [h]-ի ուժեղ հնչության դիրքի դիտել բառակազմը, որտեղ հնարավոր են հակադրման մի շարք հնարավորություններ. ինչպես՝ գերմ. Haar - Paar, Haal - Schall, Haus -Maus և այլն կամ հայ. **հոսել - խոսել, հալ - խալ, հոտ - մոտ** և այլն:

Չնայած գերմաներենի [l]-ի և հայերենի [l]-ի ընդհանրությանը՝ ըստ արտաբերման եղանակի և տեղի, ի տարբերություն գերմաներենի, հայերենում այն հնչության ճակատագրային հակադրական գույգեր չի կազմում, թեև գերմաներենի [l] - [t]: Land - Tand, [l] - [s]: Willen - Wissen, [l] - [ʃ]: Leck - Scheck և այլ հակադրական գույգերում նույնպես անհրաժեշտ հստակությամբ չեն բացահայտվում [l]-ի հնչության լեզվական հատկանիշները:

Նույնը կարելի է ասել նաև այդ երկու լեզուների [j] բաղաձայնի մասին, թեև իրացման տեսակետից գերմաներենի հիշյալ հնչույթը հանդես է գալիս միայն սկզբնային դիրքում, իսկ հայերենի [j]-ն՝ միջին կամ վերջին: Մյուս կողմից՝ թե՛ գերմանական և թե՛ հայ լեզվաբանության մեջ այդ հնչույթը դիտվում է որպես [j] ձայնավորի դիրքային - արտասանական տարբերակ: Այդ պատճառով իրական չի կարելի համարել գերմաներենում [h] - [j] հակադրական գույգի (Haar - Jahr) հնարավորությունը: Այդուհանդերձ, տիպաբանության տեսակետից գերմաներենի Jahr, Jagd և այլ բառերի [j]-ն իր ձայնային, արտաբերման եղանակի և տեղի հատկանիշներով համընկնում է հայերենի **մայր, բայ** և նման այլ ձևերի [j]-ի հետ:

Հաջորդ խնդիրը վերաբերում է գերմաներենի [p/], [ts], [tʃ] հալաշփականների (պալաշփականների) տիպաբանական յուրահատկություններին: Այստեղ [p/]-ն առանձնանում է այն առումով, որ սովորաբար երկու շրթնայինների համակցումը լեզուներում տարածված երևույթ չէ և

այն զուտ գերմաներենին բնորոշ առանձնահատկություն է: Այսպիսով՝ հիշյալ պայթաշփականը դուրս է մնում հնարավոր հնչույթային հակադրությամբ տիպաբանական բնութագրման սահմաններից, և միակ միջոցը դրա հնչարտաբերական հատկանիշների առանձնացումն է՝ որպես երկշրթնային [p] և շրթնատամնային [f]-ի միասնական արտաբերման արդյունք: Ինչ վերաբերում է մյուսներին, ապա դրանք թե՛ արտաբերման եղանակի և թե՛ ըստ նվագագույն հակադրական զույգեր կազմելու հնարավորության՝ ունեն իրենց տիպաբանական նմանակները բազմաթիվ հնդեվրոպական լեզուներում՝ այդ թվում նաև հայերենում: Ինչպես օրինակ՝ գերմ. [t] - [ts]: Tal [ta:l] - Zahl [tsa:l], հայ. [թ] - [ց]՝ **օդ** - **օձ(ց)**, որտեղ ունենք պայթական - պայթաշփական հակադրությունը կամ գերմ. [ts] - [tʃ] : Putz [pʊts] - Putsch [pʊtʃ], հայ. [ց] - [չ]՝ **ցուլ** - **չուլ** (ըստ առանձնային - նախաքմային հակադրության):

Առանձին խնդիր է գերմաներենի [ɣ], [ç], [R] հնչույթների տիպաբանական բնութագրերի հարցը, քանի որ դրանք չունեն իրենց համարժեքները ինչպես հայերենում, այնպես էլ մյուս ցեղակից լեզուներում: Նախ նշենք, որ հիշյալ հնչույթների առանձնահատկությունների վերաբերյալ գերմանական լեզվաբանության մեջ միասնական կարծիք գոյություն չունի: Այդ առումով [ɣ] (ոց) հատույթը ռնգայնացված բաղաձայնների շարքում աչքի է ընկնում բաշխման սահմանափակ հնարավորություններով, քան, ասենք, [m] և [n] հնչույթները: Այն հանդես է գալիս բառամիջում և բառավերջում, բայց ոչ մի դեպքում բառասկզբում և միշտ կարճ ձայնավորներից հետո: Այդ պատճառով մի շարք լեզվաբաններ [ɣ]-ը առանձին ինքնուրույն հնչույթ չեն դիտում, այլ որպես [n+g] հնչույթակապակցություն՝ [mɐ], [nɐ] հատույթներին զուգահեռ, որոնք մույնպես բացառում են բառասկզբի դիրքը:¹ Բացի այդ, ապացուցելի չի համարվում նաև այն կարծիքը, թե [ɣ]-ն, որպես ինքնուրույն հնչույթ, հակադրական զույգեր է կազմում մյուս ռնգայնացած բաղաձայնների հետ, ինչպես՝ ringen - rinnen, schwingen - schwimmen և այլն, այն հիմունքով, որ հիմնականում ունենք [n] ձայնորդից հետո դիրքով պայմանավորված [g] կամ [k] հնչույթները: Այս դեպքում խոսքն այն մասին է, որ ժամանակակից գրական լեզվում նաև [laŋ]-ի կողքին առկա է հաճախ [laŋk] տարբերակը: Արտաբերման տեսակետից մույնպես տվյալ հատույթը

¹ Wurzel W., Studien zur deutschen Lautstruktur, Berlin, 1970, S. 114

տարբեր բնութագրեր ունի բառամիջում և բառավերջում, այսպես, եթե [laŋ] կամ [laŋk] ձևերում այն հանդես է գալիս մեկ միասնական հնչույթի՝ պայթականի բնութագրով, ապա *gelungen* բառի մեջ այդպիսին չէ և ավելի շատ բնորոշվում է որպես առանձին [n] և [g] հնչույթներ, ինչպես *gebunden* ձևում [n+d] հատույթն է: Այսպիսով՝ ավելի ճիշտ կլինի նշված հատույթը, ըստ հնչարտաբերման, բնութագրել որպես n և g (k) առանձին հնչույթների միասնական արտաբերում:

Իր սահմանափակ բաշխման պատճառով առանձին տիպաբանական խնդիր է առաջանում նաև գերմաներենի [ç] (*Ichlaut*)-ի հարցում, որը հաճախ որպես ինքնակա միավոր չի համարվում, այլ՝ [x]-ի դիրքային տարբերակ (ենթահնչույթ): Ն. Տրուբեցկոյը գերմաներենի [ç]-ն և [x]-ն դիտում է որպես ձևային կազմում փոխադարձաբար միմյանց բացառող հնչույթատարբերակներ:¹ Ուստի, եթե [ç]-ն և [x]-ն նույն պայմաններում չեն կարող գտնվել, հետևաբար միասին չեն կարող կազմել հնչույթային հակադրություն և, ուրեմն, ոչ թե տարբեր հնչույթներ են, այլ մեկ [x] հնչույթի տարբերակները՝ որոշակի պայմաններում: Այսպիսով՝ [ç]-ի տիպաբանական առանձնահատկությունն այն է, որ հանդես է գալիս միայն առաջին շարքի ձայնավորներից, [æ], [ɔ] երկբարբառներից, r, l, n ձայնորդներից հետո և -chen վերջածանցի մեջ, իսկ [x]-ն, որպես այդպիսին, իրացվում է միայն հետին շարքի ձայնավորներից և [ao] երկբարբառից հետո: Կարող ենք ավելացնել նաև, որ այս խնդրում կարևոր է նաև այն հանգամանքը, որ պատմականորեն [x]-ն ավելի հին է, քան [ç]-ն, իսկ օտար բառերի սկզբում հանդիպող մեղր [ç] (ինչպես *Chemie*, *Chirurg*), մեղր [x] (*Chassidismus*, *Chodscha*) արժեքներով իրացումը, ինչպես նաև այն, որ -ig ածանցի կազմում [ç]-ն հանդես է գալիս որպես [g]-ի ենթահնչույթ, խոսում է այն մասին, որ [ç]-ն տարբեր հնչույթների դիրքային տարբերակ է:

Հաջորդ խնդիրը վերաբերում է [r] հնչույթի և նրա կատկայնացված [R] տարբերակի (*das Zäpfchen*) փոխհարաբերությանը: Հարկ է նշել, որ, թեև ըստ արտաբերման տեղի և եղանակի, գերմաներենի [r]-ն, որպես թրթռուն ձայնորդ, համընկնում է հայերենի [ռ]-ի հետ, սակայն դրանք որակապես տարբեր են, ինչը բխում է այդ լեզուների արտասանական բազաների տարբերություններից: Նկատի ունենալով, որ գերմաներեն-

¹ Trubezkoy N., Grundzüge der Phonologie, Göttingen, 1958, S. 44-71

նին բնորոշ է հետևաբանայնացումը, ապա ունենում ենք [r], [ə(ո)] և [R] հնչյւթները, որոնցից վերջինը ներկայացվում է որպես փափուկ քիմքի օգնությամբ կազմված նեղվածքով արտաբերվող հետնալեզվային շփական, երբ արտաբերումն իրականացվում է թեթև աղմուկի առկայությամբ: Միևնույն ժամանակ, այս երեք տարբերակներն էլ դիտվում են որպես համագոր հնչյւթներ՝ ինչպես բառասկզբի ու բառամիջի դիրքերի շեշտակիր և անշեշտ վանկերում, այնպես էլ պայթականներին ու շփականներին նախորդող ձայնավորներից առաջ դիրքերում (ինչպես bringen կամ Frieden): Բացառություն են կազմում այն վերջածանցային դիրքերը, որտեղ [r]-ն ձեռք է բերում [ə] ([ո]) ձայնավորի արժեք: Այսպիսով, սահմանելով գերմ. [r] և հայ. [ռ] հնչյունների ընդհանրությունը՝ ըստ արտաբերման տեղի, եղանակի և ձայնային հատկանիշի, կարող ենք որպես տարբերություն նշել գերմաներեն համապատասխանի ավելի քիչ թրթռումների քանակը հայերենի համեմատությամբ: Հնչյութային հակադրություններ կազմելու տեսակետից այս հնչյւթները, ըստ իրենց կարևորագույն հատկանիշների, երկու լեզուներում էլ կարելի է համարել մեկուսացած, քանի որ շատ դեպքերում նրանց հնչյութաբանորեն էական հատկանիշները հստակորեն չեն դրսևորվում, ինչպես, օրինակ՝ գերմ. Rief - lief, Naht - Rat կամ հայ. **գար - գառ, ծոր - ծոռ** և այլն:

Գերմաներենի կատկային [R]-ն ձևավորվում է մոտավորապես հայերենի [ղ] հետնալեզվայինի նման, սակայն նրա արտաբերման տեղը ավելի հետ է ընկած, իսկ ձայնի առկայությունը հայերենի [ղ]-ից առավել է, այսինքն, երկուսն էլ փափկաքմայիններ են՝ անկախ նրանց ծագման տարբերություններից:

Այսպիսով՝ կատարված վերլուծություններից հետևում է, որ հայերենն այն լեզուներից է, որն ի վիճակի է առավելագույն չափով արտացոլելու գերմաներենի հնչյութային համակարգի տիպաբանական առանձնահատկությունները:

Այս ամենով հանդերձ, կարելի է առանձնացնել ժամանակակից գերմաներենի հնչյութային համակարգի տիպաբանական յուրահատկությունների հիմքում ընկած այն միտումները, որոնք ի հայտ են գալիս հայերենի հետ զուգադրելիս.

1. Գերմաներենին բնորոշ է բառային առավել ուժեղ շեշտադրումը, ինչը հանգեցնում է անշեշտ ձայնավորների կրճատմանը (հատկապես բառավերջում):

2. Երկար ձայնավորների արտաբերման ժամանակ շուրթերի առավել լարվածությունը:
3. Խուլ պայթաշփականների (հպաշփականների) շնչեղացումը բառասկզբի շեշտակիր ձայնավորներից առաջ (ինչպես նաև վերջահար շեշտակիր վանկերում):
4. Երկար և կարճ ձայնավորների տարբերակումը որպես գերմաներենում համապատասխան իմաստազատիչ հատկանիշների դրսևորման հետևանք:
5. Փակ - բաց հակադրության առկայությունը ձայնավորական համակարգում:
6. Առաջին շարքի [i:], [e:], [I], [ɛ] ձայնավորների շրթնայնացում որպես [y:], [ø], [y], [œ]: Ընդ որում, հիշյալ շրթնայնացումը գերմաներենում հնչույթաբանորեն էական հատկանիշ է և լեզվի գրավոր ձևում արտահայտվում է ձայնափոխության նշանի (Umlaut) միջոցով:
7. Ի տարբերություն հայերենի՝ հնչերանգի արագ անկում բառավերջի դիրքում (ինչպես նաև պատմողական նախադասության մեջ):
8. Արտաբերման ուժի նկատելի աճ բառասկզբնային դիրքի ձայնավորների մոտ:

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձևաբանական երևույթների տիպաբանական վերլուծությունը, որպես կանոն, իրականացվում է կառուցվածքային առանձնահատկությունների և քերականական կարգերի իրացման հնարավորությունների տեսակետից:

Առաջին դեպքում քննարկվում են լեզվի տարաբնույթ քերականական կարգերի ձևական կողմը, բացահայտվում են դրանց կազմության յուրահատկությունները, որոնց հիման վրա սահմանվում են համապատասխան ձևաբանական կաղապարները՝ համեմատաբար պարզ կառույցից մինչև բարդը: Երկրորդ մոտեցմամբ՝ ուշադրությունը կենտրոնացվում է առանձին քերականական կարգերի իրացմանը կոնկրետ լեզվում՝ հետազայում մեկ այլ լեզվի (կամ լեզուների) հետ զուգադրման նպատակով: Ընդ որում, երկու դեպքում էլ կարող են գործադրվել վերոհիշյալ լեզվական իրողությունների ուսումնասիրության տարբեր մեթոդներ՝ լինի ձևաբանական կազմությունների ավանդական վերլուծությունը՝ ըստ ձևությային միավորների, թե ժամանակակից լեզվական ընդհանրությունների (ունիվերսալիաների) կամ ներլեզվական միտումների սահմանման սկզբունքները:

Անկախ նշված մախապայմաններից՝ գերմաներենը ցուցաբերում է բազմաթիվ յուրահատկություններ ինչպես կառուցվածքի, այնպես էլ քերականական կարգերի իրացման տեսակետից: Այստեղ, սակայն, գերմաներենի ձևաբանության տիպաբանական առանձնահատկությունների բացահայտման առումով առավել կարևոր է երկրորդը, քանի որ ցանկացած լեզվի կառուցվածք ի վերջո իր մեջ ներառում է մի քանի տիպաբանական հատկանիշներ միաժամանակ:

Այսպես՝ օրինակ, ժամանակակից հայերենը, թեև ցուցաբերում է կցականության բնութագրեր, սակայն այն ունի նաև թեքականության (**տուն - տան**) և անջատականության (**գրում եմ**) տարրեր: Կամ՝ եթե ժամանակակից գերմաներենը, ըստ հորինվածքային առանձնահատկությունների, ցուցաբերում է համադրական լեզուներին բնորոշ գծեր, սակայն այն ունի նաև վերլուծական բնութագրեր, ինչպես, օրինակ, հմմտ.՝ Die Werke Goethes - die Werke von Goethe և այլն:

Յուրաքանչյուր լեզվի ձևաբանական կառուցվածքի հիմքը կազմում են խոսքի մասերն իրենց քերականական կարգերով: Ժամանակակից

գերմաներենի և հայերենի խոսքի մասերի համակարգերը հիմնականում համընկնում են: Ընդ որում, երկու լեզուներում էլ խոսքի մասերը ունեն մույն բառաքերականական իմաստները և նախադասության մեջ իրականացնում են մույն գործառույթը, իսկ տարբերությունները դրսևորվում են բառակազմական և բառափոխական հարացույցներում: Միևնույն ժամանակ բառակազմական տարբերությունները միայն ձևական բնույթի են, ինչպես օրինակ՝ գերմաներենի -ung, -heit, -keit բառակազմական ածանցներին համապատասխանում է հայերենի **-ություն**-ը կամ **-chen, -lein** փոքրացուցիչ ածանցներին՝ **-իկ**-ը կամ ուրիշ ձև և այլն: Այսինքն՝ բառակազմական երևույթների զուգադրմամբ՝ կարելի է բացահայտել միայն քերականական իմաստների արտահայտման միջոցների տարբերությունը, ինչը բնական իրողություն է: Այդ պատճառով լեզուների տիպաբանական յուրահատկությունները ձևաբանության բնագավառում առավելապես դրսևորվում են բառափոխության մեջ, որտեղ լեզուները տարբերվում են ոչ միայն քերականական արտահայտության միջոցներով, այլ նաև՝ թե ի՞նչ է արտահայտվում:

Այսպիսով՝ կոնկրետ խոսքի մասի տիպաբանական յուրահատկությունների բացահայտման համար առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե տվյալ կարգի բառիմաստների ինչպիսի՞ ուղեկցող քերականական կարգերում կարելի է տեսնել իրականության կարգայնացման տարբերությունները:

ԳՈՅԱԿԱՆ

Գերմաներենի և հայերենի խոսքի մասերը զուգադրելիս՝ ի հայտ է գալիս լիակատար նույնություն գոյականի արտահայտած ընդհանուր իմաստի տեսակետից, իսկ, ըստ քերականական իմաստների արտահայտման, կամ, ըստ քերականական կարգերի՝ տարբերությունները մեծ չեն: Հիշենք, որ գոյականը, որպես խոսքի մաս, արտահայտում է առարկայնության ընդհանուր իմաստ, իսկ արտահայտության կառուցվածքային պլանում գոյական բառերը ներկայանում են իբրև բառաքերականական մեկ խմբավորում: Գրեթե բոլորն էլ ունեն նույն քերականական կարգերը, ենթարկվում են բառափոխական ու բառագոյությունների նույն օրինաչափություններին, ունեն կիրառական - գործառական նույն դերը, կատարում են հիմնականում շարահյուսական նույն պաշտոնները, այլ կարգի բառերից նկատելի չափով տարբերվում են մաս բառակազմական կադրակարգերով: Անվանական կարգերի գերակշիռ մասը (թիվ, սեռ, դաս, հոդային առումներ, հոլով, շնչավորի ու անշունչի, անձի ու իրի կարգեր) բնորոշ է գոյականին կամ՝ մաս գոյականին: Ավանդաբար հայերենում գոյականի համար առանձնացվում են հոլովի, թվի, որոշյալի և անորոշի, ինչպես մաս անձի (շնչավորի) ու իրի (անշունչի), իսկ գերմաներենում ունենք սեռի, թվի, որոշյալի ու անորոշի և հոլովի կարգերը: Այսպիսով՝ տարբերությունը, ըստ էության, հանգում է միայն սեռի կարգի առկայությանը գերմաներեն լեզվում, թեև գոյություն ունի մաս այն տեսակետը, որ հնագույն հայերենում ևս գոյություն է ունեցել այդ կարգը, բայց ժամանակի ընթացքում վերացել է: Բնական սեռը հայերենի գոյականը տարբերակում է բառայնորեն կամ ածանցմամբ. օր.՝ **Արամ** և **Աստղիկ**, **հայր** և **մայր**, **քույր** և **եղբայր**, **որդի** և **դուստր**, **հայ** և **հայուհի**, **աշակերտ** և **աշակերտուհի**: Տվյալ հանգամանքի հաշվառումով էլ այստեղ գերմաներենի գոյականի սեռի կարգի տիպաբանական յուրահատկությունները քննարկվում են մեկուսի:

Գերմաներենում սեռի կարգը գոյականի անփոփոխ բնութագրերից մեկն է, այն կարգային հատկանիշ է, որի հիման վրա բոլոր գոյականները բաժանվում են երեք սեռի՝ արական (Maskulina), իգական (Feminina) և չեզոք (Neutra): Այլ կերպ՝ գոյական անունները սեռով չեն փոխվում, այլ հատկացվում են նշված երեք խմբերից մեկին: Ընդ որում, այս կամ այն սեռի պատկանելությունը շատ դեպքերում չի բխում կոնկրետ բառի

իմաստից: Այդ պատճառով արդի գերմանագիտության մեջ իշխում է այն տեսակետը, որ գոյականի սեռը ավելի շուտ բառաքերականական կարգ է: Սեռի կարգի հիշյալ բնույթը առաջին հերթին արտահայտվում է մարդկանց և կենդանիների անուններում, որտեղ այն իմաստի տեսակետից պատճառաբանված է և բխում է բնական սեռային տարբերակումից, ինչպես, օրինակ՝ der Mann - die Frau, der Sohn - die Tochter, der Hahn - die Henne, der Stier - die Kuh և այլն: Այստեղ սեռը և հիմնական ձևույթը միասին արտահայտում են բառի բառային իմաստը, ընդ որում, սեռային հատկանիշը արական - իգական իմաստային հակադրության հիմքն է: Ինչ վերաբերում է չեզոք սեռին, ապա տվյալ հարաբերություններում այն ցույց է տալիս մարդկանց ու կենդանիների փոքր տարիքային հատկանիշը, ինչպես նաև նվազական (փոքրացուցիչ) իմաստներ. հմմտ.՝ das Büblein, das Männchen, das Mädchen, das Fräulein և որպես բացառություն՝ das Weib: Այս ամենով հանդերձ, բազմաթիվ անուններ սեռի նկատմամբ չեզոք են, այսինքն՝ ձևի և իմաստի պատճառական կապը հստակ չէ, ինչպես, օրինակ՝ der Mensch, die Waise, der Kunde, der Gast, das Pferd, das Schaf, die Maus և այլն: Գերմաներենի սեռի կարգին բնորոշ տիպաբանական առանձնահատկություն է նաև այն, որ նրա բառային բնույթը չի տարրորշվում նաև բառակազմության մեջ, երբ սեռային փոփոխությունը ուղեկցվում է ածանցմամբ, իսկ երբեմն նաև՝ տարբեր կարգի անուններում վերաբերական ձևույթների ներմուծմամբ. օրինակ՝ der Nachbar - die Nachbarin, der Gatte - die Gattin, der Löwe - die Löwin կամ հակառակը՝ die Ente - der Enterich, die Gans - der Gänserich և այլն: Այստեղ խոսքը նոր բառերի կազմության, ինչպես նաև դրանց, ըստ արական - իգական հակադրության, դասակարգման մասին է: Նման դեպքերում սեռը կարող է ըմբռնվել որպես բառակազմական կարգ:

Ածականների գոյականացման դեպքում ներգրավվում է նաև չեզոք սեռը, որի դերը վերացական հասկացությունները անուններից տարբերելու մեջ է, այնպես որ սեռի իմաստային պատճառաբանվածությունը որոշ չափով արտացոլվում է նաև վերացական իմաստում. հմմտ.՝ der Alte - die Alte - das Alte կամ der Bekannte - die Bekannte - das Bekannte և այլն: Ընդհանուր առմամբ, վերացական գոյականների մոտ սեռը բառի կառուցվածքային տարր է, և այստեղ առկա է սերտ կապ սեռի ու բառակազմական տիպի միջև, ինչպես, օրինակ, եթե ածական հիմքով վերա-

ցական գոյականը վերջանում է -ով, ապա այն իգական սեռի է (die Größe, die Höhe, die Güte և այլն): Նույն կերպ՝ գոյական հիմքով այն հավաքական անունները, որոնք ունեն -ում, ապա դրանք չեզոք սեռի են, իսկ -schaft-ը մատնանշում է իգական սեռը, հմմտ.՝ das Studentum - die Studentenschaft, das Bauertum - die Bauerschaft և այլն:

Այս ամենով հանդերձ, գերմաներենում ունենք այնպիսի գոյականներ, որոնց քերականական սեռը պատճառաբանված չէ թե՛ իմաստի և թե՛ ձևի տեսակետից: Գրանք der Tag, das Jahr, die Hand, der Baum տիպի պարզ գոյականներ են, որոնց մոտ առավել հստակ կերպով է դրսևավորվում սեռի կարգի քերականական - կառուցվածքային գործառույթը: Այստեղ խոսքը սեռի դասակարգող գործառույթի մասին է:

Գերմաներենում սեռի կարգի կարևոր տիպաբանական առանձնահատկություն է նաև սերտ կապը գոյականի սեռի և հոլովման տիպի միջև, որն արտահայտվում է գոյականների առանձին իգական հոլովման, ինչպես նաև չեզոք և արական սեռի գոյականներն ընդգրկող ուժեղ հոլովման և արական սեռի մի քանի տիպերն ընդգրկող թույլ հոլովման տարբերակմամբ: Նման կախվածություն գոյություն ունի նաև գոյականի սեռի և հոգնակի թվի կազմության միջև: Նշված հարաբերություններն իրենց արտացոլումն են գտնում լեզվի շարահյուսական կառուցվածքում, որտեղ սեռը որոշչային բարդություններում համաձայնեցման կարևոր տարր է. հմմտ.՝ eine nette Frau, ein kleines Kind, dieser schöne Abend և այլն: Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ գոյականների սեռի կարգը գերմաներենում բառաքերականական երևույթ է, այն հանդես է գալիս որպես գոյականների դասակարգման հատկանիշ, ինչը մասամբ կախված է գոյականների իմաստից կամ բառակազմական տիպից և միաժամանակ կարևոր դեր ունի շարահյուսական հարաբերությունների արտահայտման մեջ:

Թվի քերականական կարգը գրեթե բոլոր լեզուների համար ընդհանուր է, որը, սակայն, բազմատեսակ արտահայտություններ ունի տարբեր լեզուներում: Գոյականի թվակարգի հիմքում ընկած է առարկաների քանակային հարաբերության հատկանիշը: Միևնույն ժամանակ, այս քերականական կարգի էությունը գոյականների մոտ հիմնավորապես տարբերվում է մյուս խոսքի մասերից: Այսպես, օրինակ, բայական թիվը ցույց է տալիս գործողությունը կատարողի մեկ կամ մեկից ավելի լինելը.

արտահայտության պլանում հաճախ հանդես է գալիս եղանակի, դեմքի և ժամանակի կարգերի համադրմամբ. հմտ.՝ **երեխան քնած է - երեխաները քնած են**: Թվակարգը դերանունների մեջ ներառում է առարկայանիշ խմբերը, ընդ որում, այստեղ ունի իմաստաբանական ու կադապարման յուրահատկություններ: Այսինքն՝ թվի քերականական կարգի իրական բնույթը դրսևորվում է հատկապես գոյականների մոտ: Թե՛ հայերենում և թե՛ գերմաներենում այս կարգը ներկայանում է երկեզր հակադրությամբ՝ եզակի (մեկ առարկա) - հոգնակի (միևնույն սեռի շատ առարկաներ): Եզակի եզրում կարող են տեղի ունենալ իմաստաբանական տեղաշարժեր. նրա իմացաբանական ոլորտը լայն է: Այդ պատճառով հաճախ ընդգծվում է, որ եզակին բազմանշանակ է. այն կարող է արտահայտել միասեռ (բաժանական, թվարկվող) կարող է ցույց տալ տվյալ տեսակի առարկաներից մեկը, կարող է ցույց տալ տվյալ տեսակի առարկաներից յուրաքանչյուրի քանակային հարաբերությունը և այլն: Համեմատենք հայերեն՝ **Ծառից խնձոր ընկավ: Խնձորը օգտակար միրգ է: Տղան խնձոր է քաղում** նախադասությունները: Առաջինում խոսքի առարկան՝ **խնձորը** մեկն է, երկրորդում քանակային հարաբերությունը տարածվում է ամբողջ տեսակի վրա, իսկ երրորդում եզակին արտահայտում է մի խումբը: Ժամանակակից գերմաներենում հոգնակի թվի ձևը ուղղակիորեն հոլովման համակարգի մեջ չի մտնում: Այն կազմվում է հատուկ միջոցների՝ -e -er, -(e)n վերջածանցների և ներքին թեքման (Umlaut-ի) օգնությամբ, որոնք հոլովման հետ կապվում են զուտ պատմականորեն: Բացի այդ, հոգնակի թվի ցուցիչ են նաև հոդային թվի ձևերը: Ընդհանուր առմամբ, քերականական թվի ներքում կարելի է առանձնացնել երկու կառուցվածքային - իմաստային խմբեր. հաշվելի, ինչպես՝ der Mensch - die Menschen (մարդ - մարդիկ), der Baum - die Bäume (ծառ - ծառեր), die Idee - die Ideen (միտք - մտքեր) և անհաշվելի գոյականներ, որոնք հաճախ միայն եզականի ձև ունեն, ինչպես՝ der Hagel - **կարկուտ**, der Schlaf - **քուն**, das Wasser - **ջուր** կամ հազվադեպ միայն հոգնակիի ձևով՝ die Leute (մարդիկ), die Ferien (արձակուրդներ) և այլն: Միայն եզակի ձևով անհաշվելի գոյականները, որոնք կոչվում են նաև **անհոգնականներ** (singularia tantum) սովորաբար ընդգրկում են հատուկ անունները, բնության մեջ մեկ անհատ առարկաների անունները (die Unika)՝ die Sonne - **արև**, der Mond - **լուսին**, der Himmel - **երկինք**, ամիսների անուն-

ները, նյութականության - զանգվածության անունները, ինչպես՝ der Kleber - սոսինձ, die Spucke - **թուք**, der Sauerstoff - **թթվածին** և այլն:

Հոգնակիի իմացաբանական ոլորտը ևս լայն է:

Այն ամենից առաջ թվակարգային համեմատության եզր է: Սովորաբար այն գոյականներն են ունենում հոգնակի, որոնք թվական լրացում են առնում, ինչպես՝ der Mensch - die Menschen (մարդ - մարդիկ), das Haus - die Häuser (տուն - տներ), der Baum - die Bäume (ծառ - ծառեր) և այլն: Թե՛ հայերենում և թե՛ գերմաներենում կան բառեր, որոնք համապատասխան եզակի ձևեր չունեն (կամ գրեթե չունեն), իսկ եթե ունեն էլ, ապա իմաստով հոգնակին համարժեք չէ եզակիին: Այդպիսի բառերը (բառաձևերը) կոչվում են **անեզականներ** (pluralia tantum): Անեզականությունը պայմանավորող իմաստաբանական գործոններից են. ա) անհամարժեքայնություն եզակիի հետ, որ սովորաբար լինում է վերացական, հավաքական, անհատական, զանգվածայնություն - նյութայնություն իմաստավորումների կապակցությամբ. օրինակ՝ **գեղեցկություններ, հուշեր, զանգուրներ** և այլն: Ջուգադրվող երկու լեզուներում էլ անեզականների թիվը մեծ չէ, իսկ գերմաներենը ցուցաբերում է մասն ալմպիսի առանձնահատկություն, որ որոշ դեպքերում անեզականությունը պատճառաբանված է, ինչպես, օրինակ՝ die Eltern, die Geschwister, die Zwillinge, ինչը ցույց է տալիս ձևի և բովանդակության միջև ուղիղ կապ: Դրանց կողքին, սակայն, կան մասն չպատճառաբանված անեզական ձևեր, ինչպես՝ die Ferien, die Kosten, die Einkünfte և այլն: Այստեղ կարելի է առանձնացնել մասն մի շարք աշխարհագրական անուններ. օր.՝ die Alpen, die Karpaten, die Apenninen, die Pyrenäen, die Azoren, եկեղեցական տոների անուններ՝ die Ostern, die Pfingsten, die Weihnachten և որոշ հիվանդությունների անուններ՝ die Masern, die Blattern, die Röteln, die Pocken և այլն:

բ) Առարկայի՝ բարդ կամ երկկազմ, բազմակազմ լինելու դեպքում. ինչպես՝ **կառք, երկինք, ընդերք, խռիկներ** և այլն: Գերմաներենում այս երևույթը արտահայտվում է ալմպիսի ձևերում, ինչպես՝ die Gewissensbissen (der Biss - die Bisse առաջնային բաղադրիչի պատճառով), die Krokodilstränen (die Träne - die Tränen), die Anfangsründe, die Gebietsforderungen և այլն:

Թե՛ հայերենում և թե՛ գերմաներենում մասնակի դրսևորում ունի հավաքական թիվը (die Kollektiva): Իմացաբանական մակարդակում հավաքականությունը ներկայանում է իբրև միասեռ առարկաների այնպիսի բազմություն, որի մեջ գերիշխում է ոչ թե բաժանականության, այլ միասնության, ամբողջականության իմաստավորումը: Արտահայտության պլանում հիշյալ թիվը գերմաներենում և հայերենում հիմնականում ունենում է իրացման նույն հնարավորությունները: Երկու լեզուներում էլ այն կարող է լինել պարզ, արմատական կամ՝ հատուկ հավաքականակերտ ածանցով ձևավորված, օրինակ, հայերենում ունենք՝ **ամբոխ, գունդ** (զինվորական), **բանջարեղեն, ամանեղեն, ուսանողություն** և այլն:

Եթե հավաքականությունը բառաքերականական կարգ է, ապա նա կառուցվածքայնորեն ներկայանում է հոգնակի ձևերով: Արդի գրական հայերենում այսպիսի հավաքական հոգնակիներ են կերտում **-անք, -ոնք, -ունք**, մասամբ և **-եր, -ներ** մասնիկները (**Վարդանանք, պապոնք, Գրիգորենք, Վեդունք, կանաչներ**, ղեկավար **շրջաններ** և այլն):

Գերմաներենում ևս հավաքական թիվը կարող է արտահայտվել պարզ ձևերով, ինչպես՝ das Gebüsch, der Adel, das Laub կամ հավաքականակերտ -tum, -schaft վերջածանցներով, ինչպես նաև ge- նախածանցով. օր.՝ das Bauerntum, die Studentenschaft, das Geschirr, das Geflügel և այլն:

Ամփոփելով՝ նշենք, որ թվի քերականական գործառույթը սերտորեն կապված է գոյականի բառային իմաստից այնպես, որ թիվը հաճախ բազմիմաստ բառի առանձին իմաստների տարբերակիչ հատկանիշ է հանդես գալիս: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ բազմիմաստ գոյականը մի քանի իմաստներով հաշվելիություն, իսկ այլ դեպքերում անհաշվելիություն է արտահայտում: Ասվածը վերաբերում է հատկապես համանուններին: Այսպես, օրինակ, der Gebrauch գոյականը անհաշվելի է և անհոգնական իմաստով նշանակում է «գործածություն, օգտագործում» (der Gebrauch von Messer und Gabel), իսկ die Gebräuche հոգնակի ձևը նշանակում է «ժողովրդական սովորույթներ» (alte ländliche Gebräuche): Ուստի պարզ է, որ der Gebrauch և die Gebräuche բառերը լծորդական ձևեր չեն, քանի որ իրենց բառային իմաստներով միմյանց հետ չեն առնչվում:

Հոլովի քերականական կարգը գոյականի ձևական առավել տարբերակիչ հատկանիշներից մեկն է և արտահայտում է բառի որոշակի դրվածքը խոսքի, հիմնականում նախադասության և բառակապակցության մեջ: Այս կարգը սովորաբար ներկայանում է հարացույցով, և **հոլով** տերմինը գործածվում է նշելու համար այդ հարացույցի յուրաքանչյուր անդամը: Այդ առումով հոլովը հոլովական իմաստի և ձևի (հոլովաձևի) միասնությունն է: Մեկ հոլովաձևը կարող է համատեղել տարբեր մասնավոր իմաստներ. արտահայտության պլանում միևնույն իմաստավորման համար կարող են լինել այլևայլ կաղապարներ (արտահայտության միջոցներ): Ձևի և իմաստի միասնությունը հաշվի առնելով՝ հայերենում զանազանում են ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներ: Դրան հակառակ՝ գերմաներենն ունի միայն չորս հոլով՝ ուղղական (Nominativ), սեռական (Genitiv), տրական (Dativ) և հայցական (Akkusativ): Այս հանգամանքը թեև ստեղծում է զուգադրման դժվարություններ, սակայն երկու լեզուներում ընդհանուր չորս հոլովների տիպաբանական վերլուծությունից հետո, մյուս հոլովների էության պարզաբանումը առանձին բարդություններ չի հարուցում:

Ուղղական հոլովը երկու լեզուներում էլ գոյականի ելակետային (ուղիղ) ձև է և հակադրվում է մյուս թեք հոլովներին: Արտահայտության պլանում այն բնորոշվում է հոլովակերտի բացակայությամբ. երբեմն պայմանականորեն ընդունվում է **հոլովահիմք + «զրո» հոլովակերտ** կաղապարը: Կիրառական տեսակետից այն բազմագործառույթ է: Նրա ձևում ավելի ակնառու է դրսևորվում բառի անվանողական գործառույթը. ըստ այդմ էլ գործածում են **անվանական ուղղական** բառեզրը, և գերմաներենում այս հոլովը այդպես էլ կոչվում է՝ **անվանական (Nominativ) հոլով**: Քանի որ բացի վերոհիշյալ հատկանիշներից հայերենում ուղղականը այլ տիպաբանական յուրահատկություններ չի ցուցաբերում, այստեղ առավելապես կանդադառնանք գերմաներենի Nominativ-ին՝ զուգահեռ ներկայացնելով հայերենի համապատասխան ձևերն իրենց նշանակությամբ:

Այսպիսով՝ գերմաներենում ուղղական հոլովը ցուցաբերում է հետևյալ տիպաբանական առանձնահատկությունները.

1. Նախադասությունից դուրս ներկայացնում է առարկայի կամ երևույթի անվանումը համապատասխան հոդային ցուցիչով, ինչպես՝ *der Mensch, das Haus, die Zeit*:
2. Գործածվում է նախադասության արժեքով, ինչպես՝ *Feuer!* (կրա՛կ), *Dunkle Nacht* (մութ գիշեր), *Diebe!* (գողե՛ր) և այլն:
3. Ուղղականը, ի հակադրություն թեք կամ կախյալ հոլովների, բնութագրվում է շարակարգային ինքնուրույնությամբ, մինչդեռ մյուս հոլովները կառավարվում են բայի, գոյականի, ածականի կամ կապերի կողմից: Ընդ որում, ուղղականի վերջին յուրահատկությունները անմիջականորեն բխում են առաջինից:

Ուղղական հոլովի առաջնային շարահյուսական գործառույթը, որը հանդես է գալիս ենթակա - խնդիր հակադրության մեջ, արտահայտվում է ենթակայով: Ենթակա - ուղղականը անվանում է արտահայտության առարկան և շարություն անկախ է: Այդ պատճառով այն անվանվում է «ուղիղ» հոլով (*casus rectus*) և հակադրվում է «կախյալ» հոլովներին (*casus obliqui*):

Թե՛ հայերենում և թե՛ գերմաներենում ենթակա - ուղղականի կողքին նախադասության մեջ կարող է հանդես գալ նաև երկրորդ ուղղականը՝ որպես ստորոգական որոշիչ և որպես բացահայտիչ. հմմտ.՝

Als junges Mädchen verliebte sie ihre Heimatstadt.

Որպես երիտասարդ աղջիկ նա թողեց իր հարազատ քաղաքը:

Der Vorsitzende, der Professor Schmidt, ein blonder Herr, verhältnismäßig jung, liebte die genauen Definitionen.

Նախագահը՝ պրոֆեսոր Շմիդտը, շիկահեր մի պարոն, համեմատաբար երիտասարդ, սիրում էր ճշգրիտ ձևակերպումները:

Երկրորդ ուղղականները թեև իմաստային և շարահյուսական առումներով համաձայնեցվում են ենթակա - ուղղականի հետ, սակայն ոչ մի դեպքում ինքնուրույն հոլովական գործառույթ չեն իրականացնում, և նշված որոշչային ու բացահայտչային կառույցները, ըստ հարաբերակից գոյականի (կամ դերանվան) շարահյուսական արժեքի, փոխում են իրենց հոլովը. հմմտ.՝

Als junges Mädchen (ուղղակ.) verliebte sie ihre Heimatstadt.

Ich kannte sie als junges Mädchen (հայց.).

Միևնույն ժամանակ ուղղականի անվանական գործառնության հետ սերտորեն առնչվում է, այսպես կոչված, կոչական - ուղղականը, ինչպես, օրինակ՝

Heimat, du schöner Traum...

Հայրենիք, դու գեղեցիկ երազ...

Ուղղականի այս տեսակը, մտնելով նախադասության կազմի մեջ, մյուս անդամների հետ շարակարգային հարաբերության մեջ չի գտնվում:

Ժամանակակից գերմանագիտական գրականության մեջ քննարկվում է նաև ուղղականի անվանողական գործառնություն, այսպես կոչված, «ընդհանրական հոլովի» (Gemeinschaftskasus) խնդիրը: Այստեղ խոսքը գերմաներենի ուղղական հոլովի որպես գրոյական ձևի գործառնության մասին է, ինչպես, օրինակ՝

Zwischen Affe und Mensch ist ein großer Unterschied. կամ

Er steht auf der Altersstufe zwischen Knabe und Jungling.

Այս իրողությունը, սակայն, հայերենի հետ զուգադրելիս, համարժեք իրացում չի ունենում, քանի որ առավելապես կախված է հոդի գրոյական գործառնությունից, որին կանրադառնանք ստորև:

Հայցական հոլովը, ի տարբերություն ուղղականի, ունի կրող խնդիրն արտահայտելու գործառնությ: Երկուսն էլ հարաբերակցվող տարրեր են ներգործական կառուցվածքի նախադասություններում՝ ուղղականն իբրև ներգործող սուբյեկտի հոլով, իսկ հայցականն իբրև կրող օբյեկտի հոլով. այստեղից էլ ունենք նաև **կրող խնդրի հոլով, կրող խնդրի հայցական** անվանումները: Երբ խնդրի բովանդակությունը պարունակվում է խնդրառու բայի նշանակության մեջ (ներքին խնդիր), գործ ունենք ներքին խնդրի հայցականի հետ, ինչպես՝ **հաց** թխել (Brot backen), **երգ** երգել (ein Lied singen) և այլն: Այսինքն՝ առարկան ընկալվում է գործողության միջոցով: Ուղիղ խնդրի այլ արտահայտությունները բնութագրվում են իբրև **արտաքին խնդրի հայցական**, որտեղ առարկան ընկալվում է գործողության միջոցով, սակայն, գոյություն ունի այդ գործողությունից անկախ, ինչպես՝ **հացը** կտրել (das Brot schneiden), **նամակ** գրել (einen Brief schreiben) և այլն: Այսինքն՝ առարկան համապատասխան գործողության արդյունք է:

Հայցական հոլովի երկրորդական գործառնությունները արտահայտվում են տարբեր կարգի պարագայական լրացումներով: Թե՛ հայերենում և

թե՛ գերմաներենում այս երևույթը բնութագրվում է նրանով, որ հայցականն ազատ է և բայով չի կառավարվում: Հայցականի մման տիպը ենթակա - խնդիր հարաբերությունից դուրս է, ինչպես՝

Ich blieb **diese Nacht** ebenfalls im Klub.

Այս գիշերն ես նույնպես մնացի ակումբում:

Երկու լեզուներում էլ պարագա հայցականի գործառույթը մեծ չէ, քանի որ այն սահմանափակվում է որոշակի բառային կարգերով, ինչպես, օրինակ, ժամանակի պարագան սահմանափակվում է համապատասխան իմաստով մի քանի գոյականների գործառույթով՝ der Tag (օր), der Morgen (առավոտ), der Abend (երեկո), die Nacht (գիշեր), der Monat (ամիս) և այլն: Նույն կերպ, դժվար է խոսել ինքնուրույն հոլովական իմաստի կամ գործառույթի մասին այն կայուն և փոփոխական կառույցներում, որոնք բնութագրվում են հայցական + բայ կադապարով, ինչպես, օրինակ՝ Pech haben (անհաջողություն ունենալ), Abschied nehmen (հրաժեշտ տալ), Anerkennung finden (ճանաչում գտնել) և այլն:

Հայերենում և գերմաներենում իրական խնդիր - հայցականն իր առանձնահատկություններն առավելագույնս դրսևորում է ներգործական → կրավորական սեռային փոխակերպումներում. հմմտ.՝

Er schreibt einen Brief. → Der Brief wird geschrieben.

Նա գրում է մի նամակ: → Նամակը գրվում է:

Ինչ վերաբերում է կայուն կառույցներին, ապա այստեղ, քանի որ հայցականը մնում է ստորոգյալի կազմության մեջ, ապա մման փոխակերպումները հայերենում ընդհանրապես բացառվում են, իսկ գերմաներենում հնարավոր է միայն անենթակա կրավորական նախադասության կազմում, օրինակ՝

Wir nehmen Abschied von unserem Freund. → Es wird Abschied genommen. բայց ոչ՝ * Der Abschied wird genommen.

Իսկ հայերենում դրան համարժեք՝ **Մենք հրաժեշտ ենք տալիս մեր ընկերոջը** նախադասությունը փոխակերպման ոչ մի հնարավորություն չունի:

Այս ամենով հանդերձ, որոշակի իմաստային ընդհանրություն կարելի է տեսնել գերմաներենի համապատասխան նախդիրի (հայցական պահանջող) առկայությամբ պայմանավորված ուղիղ խնդրի և հայերեն

համարժեքի միջև, թեև ձևական առումով այն հայերենում չի արտահայտվում. հմմտ.՝

Ich lege das Buch auf den Tisch.

Ես գիրքը դնում եմ սեղանին (սեղանի վրա):

Պատճառը գերմաներենին բնորոշ այն առանձնահատկությունն է, որ կոնկրետ նախդրային կառույցներում ունենում ենք համապատասխան բայական ձևեր, ինչը հայերենին բնորոշ չէ:

Ընդհանուր առմամբ, հայցական հոլովն իր արտահայտած իմաստով և գործառնությամբ երկու լեզուներում էլ միասնական դրսևորում ունի և տարբերությունները մեծ չեն:

Տրական հոլովը հայերենում, ըստ էության, դրսևորվում է միայն դերանվանական հոլովման մեջ, արտահայտում է հանգման, մատուցման առարկան (խնդիրը)՝ իբրև բայի լրացում: Մի շարք քերականներ տրականը ճանաչել են իբրև ինքնուրույն, անկախ հոլով նաև անվանական հարացույցում: Մինչդեռ հայերենն անվան համար տրական (և սեռական) հոլովի ինքնուրույն կառուցածներ չի զարգացրել: Շատ հայագետներ հաճախ հարացույցում տեղադրում են ոչ թե սեռական և տրական հոլովներ, իբրև ինքնուրույն անդամներ, այլ՝ **սեռական - տրական**՝ իբրև հարացույցի մեկ անդամ: Հայերենի տրական հոլովի էությունը բացահայտվում է նաև այլ լեզուների (տվյալ դեպքում՝ գերմաներենի) փաստերի հետ զուգադրմամբ:

Ավանդական գերմանագիտության մեջ տրականը (Dativ) հակադրվում է հայցականին (Akkusativ)՝ ըստ ուղիղ և անուղղակի խնդիրների հակադրության: Համաժամանակյա կտրվածքում նախդրային կազմությամբ տրականն առանձին խնդիրներ չի հարուցում, քանի որ այն պայմանավորված է կոնկրետ նախդիրի խնդրառությամբ, ինչը բխում է այդ նախդիրի իմաստից: Առանց նախդիրի տրականի առաջնային գործառնությոն ենթակա - խնդիր հակադրության մեջ նրա մասնակցությունն է: Նկատի ունենալով, սակայն, այդ հակադրության մեջ նաև հայցականի մասնակցությունը, իր ամբողջության մեջ այն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

[N.(ուղղակ.) ↔ [A. (հայց.) ↔ D.(տր.)]:

Այսպիսով՝ ընդհանուր ենթակա - խնդիր հակադրության մեջ տրականը գրավում է եզրային դիրք:

Ընդհանուր առմամբ, հայերեն և գերմաներեն լեզուներում տրականի իմաստային ու շարահյուսական գործառնությունը համարյա նույնն է: Երկու լեզուներում էլ այն նախադասության կազմում իրացվում է որպես հանգման անուղղակի խնդիր և բայի իմաստից բխող խնդրառությամբ ունենում ենք համարժեք պատկեր. հմմտ.՝

Das Buch liegt auf dem Tisch.

Գիրքը դրված է սեղանին:

Ich schreibe meinem Freund einen Brief.

Ես իմ ընկերոջը նամակ եմ գրում:

Er gibt mir sein altes Kleid.

Նա տալիս է ինձ իր հին զգեստը:

Տրականով արտահայտված անուղղակի խնդրի մեկ այլ տարբերակ է գերմաներենի, այսպես կոչված, ազատ տրականը (freier Dativ), որը ցույց է տալիս այն անձը, որը հետաքրքրված է արտահայտվող գործողությամբ, այդ պատճառով էլ այն կոչվում է նաև «մղման տրական» (Dativ des Interesses): Ի տարբերություն պարտադիր (խնդրառությամբ պայմանավորված) տրականի՝ վերջինս արտահայտության ամբողջականության համար պարտադիր չէ, ինչպես, օրինակ՝

1. Er ähnelt **seinem Vater** (պարտադիր)

2. Wie herrlich leuchtet **mir** die Natur... (ազատ)

Տրականի այս ձևի գործածությունը հայերենում և գերմաներենում համարյա նույնն է՝ նույնիսկ դրան համարժեք für կապի միջոցով համապատասխան կազմություններում. հմմտ.՝

Das ist **mir** (für mich) unbegreiflich.

Դա ինձ (ինձ համար) անհասկանալի է:

Այդուհանդերձ, գերմաներենի ազատ տրականի ոճական երանգավորմամբ ձևերը հայերենում իրենց համապատասխանը չեն ունենում, ինչպես, օրինակ՝

Sei mir doch dabei vorsichtig!

Այստեղ ազատ տրականը (mir) հայերենում չի թարգմանվում:

Հետևողական տարբերություններ են նկատվում նաև հետևյալ դեպքերում.

ա) գերմաներենի, այսպես կոչված, «պատկանելական տրականի» դիմաց հայերենում ունենք միշտ դերանվամբ արտահայտված սեռականի ձև. հմմտ.՝

Der Kopf sank ihm an die Brust.

Նրա գլուխը իջել էր կրծքին:

Կամ՝

Da erkrankte mir der Vater.

Ապա հիվանդացավ իմ հայրը:

բ) Գերմաներենում տրական հոլովի գոյականի հետ գործառնությոն առանց նախդիրի գրեթե անհնար է, իսկ հայերենում, որպես կանոն՝ ոչ պարտադիր: Օրինակ՝

Sein Beistand dem Freund gegenüber war selbstlos.

Նրա օգնությունն ընկերոջը անշահախնդիր էր:

Սեռական հոլովի յուրահատուկ բնութագիրը երկու լեզուներում արտահայտվում է նրանում, որ այն հայերենի անվանական հոլովակազմության մեջ ձևաբանական ինքնատիպություն չունի, իսկ գերմաներենում այն հատուկ է թե՛ հոդի և թե՛ բուն ձևի տեսակետից: Իմաստի և գործառնության տեսակետից ընդհանրությունները ավելի շատ են, եթե նկատի ունենանք, որ այդ առումով սեռականն արտահայտում է պատկանելություն, ստացականություն, վերաբերություն, այսինքն՝ հանդես է գալիս հատկացուցիչ կամ որոշիչ՝ իբրև գոյականական անդամի լրացում: Գերմաներենում գերակայող է սեռականի գոյականի հետ գործառնությոն՝ որպես մեկ այլ առարկայի որոշիչ, իսկ հայերենում՝ որպես հատկացուցիչ: Այս առումով երկու լեզուների համար ընդհանուր է այն իրողությունը, որ սեռականը միակ հոլովն է, որ բայական անդամի լրացում գրեթե չի լինում և գործառնությանին բազմազանությամբ աչքի չի ընկնում: Այդպիսով սեռականը հստակորեն հակադրվում է հայցական և տրական հոլովներին, որոնց բնորոշ է հենց բայի հետ գործառնությոն:

Գոյականի հետ գործառնությոն սեռական հոլովը թե՛ գերմաներենում և թե՛ հայերենում ցուցաբերում է ընդհանուր գծեր և նման դեպքերում արտահայտում է միևնույն իրական հարաբերությունները՝ գործողության ենթակայի և խնդրի, պատկանելության, որակի իմաստների իրացման առումով. հմտ.՝

die Flinte des Jägers – որսորդի հրացանը

das Buch des Bruders - եղբոր գիրքը

das Absenden der Briefe – նամակների առաքումը

Menschen guten Willens - բարի կամքի մարդիկ

Նկատելի տարբերություններ կան հատկապես, այսպես կոչված, «բաժանական» (partitiv) սեռականի գործառնություն: Գերմաներենում սեռականի այդ տեսակի գործառնությունը, ի տարբերություն հայերենի, սահմանափակ է: Բաժանական սեռականը արտահայտում է այն ամբողջը, որի մասը արտահայտում է նախորդող որոշյալ բառով: Այդ բառը կարող է լինել քանակական արտահայտությամբ գոյական կամ թվական և դերանուն: Այս հանգամանքի հաշվառումով սեռականի այս տեսակը հայ քերականագիտության մեջ կոչվում է **փոխանուն սեռական**, հմմտ.՝

die Hälfte des Verdienstes – վաստակի կեսը
einer der Anwesenden – ներկաներից մեկը

Ընդ որում, այստեղ գերմաներենին բնորոշ է այն յուրահատկությունը, որ տվյալ դեպքում խոսքը խոսակցին հայտնի առարկայի կամ առարկաների ամբողջի մասի մասին է: Այսինքն՝ ամբողջը նշանակող գոյականը, ըստ նախադասության արտահայտած իմաստի, կա՛մ դրվում է որոշյալ հոդով, կա՛մ էլ՝ ստացական ու ցուցական դերանուններով: Հակառակ դեպքում՝ գոյականը դրվում է ոչ թե սեռական հոլովով, այլ այն հոլովով, ինչ որ որոշյալ բառը, օրինակ՝

Ich möchte **ein Glas heißen Tee** trinken.

«Բաժանական» սեռականը գերմաներենում դրվում է նաև ածականի գերադրական աստիճանի հետ, որը հայերենում արտահայտվում է բացառականի միջոցով, ինչպես՝ der höchste aller Berge - **բոլոր լեռներից ամենաբարձրը**, der beste der Freunde - **ընկերներից ամենալավը (լավագույնը)** և այլն:

Այս ամենով հանդերձ, ժամանակակից գերմաներենում գործուն կերպով դրսևորվում է սեռականի ձևերը տրականի von նախդիրով կառույցներով փոխարինման միտումը: Տվյալ դեպքում սեռականի համապատասխան նշանակությունը լրիվ պահպանվում է և, թերևս այդ պատճառով, տրականով արտահայտված նշված ձևը դիտարկվում է որպես սեռականի նկարագրական ձև (կամ մրցակցող կառույց): Սովորաբար von նախդիրով տրականի ձևերը գործածվում են սեռականի փոխարեն այն դեպքերում, երբ գոյականը՝ անձնանուն, նյութանուն կամ վերացական անուն, գործածվում է առանց հոդի (կախված նախադասության իմաս-

տից): Հայերենում նման կառույցների դիմաց միշտ ունենք բացառականի ձևեր, որոնք փոխակերպման ենթակա չեն. հմմտ.՝

zwei meiner Freunde - zwei von meinen Freunden - **իմ ընկերներից երկուսը**

einige der Anwesenden - einige von den Anwesenden - **ներկաներից մի քանիսը**

Գերմաներենին բնորոշ տիպաբանական յուրահատկություն է մասնային, որ սեռական հոլովի երկրորդային շարահյուսական գործառնություն արտահայտվում է խնդրի իրացմամբ (das Genitivobjekt), որը կարող է հանդես գալ որպես առանձին կամ հայցականի մրցակցող կառույց, օրինակ՝ Man beraubt den Pförtner **seines Schlüssels**. կամ Fabian hatte sich **seiner besonderen Gunst** erfreut.

Սեռականի նման գործառնությամբ ունենք մասնային դեպքերում, երբ մի շարք ածականներ հանդես են գալիս որպես ստորոգյալ, ինչպես՝ Das war doch nicht **der Rede** wert, երբ սեռականը իրացվում է որպես պարագայական լրացում՝ eines Tages, eines Abends, Wohin des Weges? gesenkten Hauptes, schnellen Schrittes և մի շարք կայուն շարակարգային կառույցներում, ինչպես՝ der Meinung sein, guter Laune sein, guter Dinge sein և այլն:

Որոշյալի և անորոշի կարգը, որն առաջացել է ցուցական առման հիմքի վրա՝ դիմայնության գաղափարի բացառումով, գերմաներենում թե՛ իմաստային և թե՛ ձևական առումով ցուցաբերում է այնպիսի յուրահատկություններ, որ համեմատության եզրեր գտնելու հնարավորությունը հայերենի հետ մեծ չէ:

Ձևի տեսակետից այս կարգը գերմաներենում արտահայտվում է մախորդող հոդի և գոյականի զուգակցմամբ: Գերմաներենի հոդը կազմում է առանձին բառակարգ սպասարկու բառերի խմբում՝ ձևաբանական գործառնությով: Ընդ որում, այստեղ էական է այն հատկանիշը, որ հոդը գերմաներենում թեքվող է և արմատական ձևային ու թեքվող ձևային միջոցով արտահայտում է քերականական իմաստ: Այդպիսով d- ձևերի (der, die, das) և ein ձևերի (ինչպես մասն *գրո* – ձևերի) հակադրությամբ դրսևորվում է գոյականի որոշյալի ու անորոշի քերականական կարգը, իսկ հոդի թեքվող ձևային օգնությամբ՝ արտահայտվում է գոյականի սեռը, հոլովը և թիվը: Ընդհանուր առմամբ, թե՛ գերմաներենում և թե՛ հայե-

րենում որոշյալի ու անորոշի կարգին բնորոշ է առկայացնող հատկանիշը, այն է՝ հաղորդակցվողների իրազեկությունը խոսքի առարկայի մասին: Այս իմաստավորումը կարող է լինել բնությամբ՝ ինքնին կամ դրությամբ, խոսքային իրադրությամբ պայմանավորված: Ինքնին առկայացած են միակ, անհատ առարկաները (արև - die Sonne, լուսին - der Mond, հյուսիս - der Norden), հատուկ անուններ կամ տվյալ տեսակն այլ տեսակների հարաբերությամբ ներկայացնողները (**Կատուն ընտանի կենդանի է:** - Die Katze ist ein Haustier.) և այլն: Դրությամբ առկայանում են համատեքստում նախապես հիշատակվողները, արդեն իսկ առկայացած հարաբերությամբ առնվողները, ինչպես նաև այն առարկան, որը տվյալ իրադրությամբ առնվում, ընկալվում է իբրև միակ հնարավորը (**հարևանի կատուն** - die Katze des Nachbars, **ուզածղ մասնագետը** - der beliebige Spezialist, **Տո՛ւր ինձ մատիտը** - Gib mir den Bleistift!):

Անորոշ առումը, ընդհանուր առմամբ, դրսևորվում է իբրև առկայացման բացակայություն: Չառկայացած բառածևը հայերենում ներկայանում է հիմնականում առանց - ը, - ն առկայացուցիչ հոդերի կամ ունենում է, ինչպես ասում են, «գրո» հոդ: Գերմաներենում ein անորոշ հոդը, իրականացնելով նույն գործառույթը, հաճախ արտահայտում է նաև այնպիսի քերականական իմաստներ (սեռի, հոլովի), որոնք բնորոշ են որոշյալ հոդին. հմմտ.՝

Die junge Frau brachte einen Brief.

Eine junge Frau brachte den Brief.

Հայերենում անորոշ առումն ունի արտահայտման նաև այնպիսի ձև, որով այն համընկնում է գերմաներենի հետ: Ասվածը վերաբերում է անորոշ **մի** հոդով ձևին: Առման այս տարբերակը բնորոշ է նրանով, որ խոսքի առարկան մասնավորում է մթագնած քանակային՝ միակության հատկանիշով: Ըստ այդմ էլ երբեմն տարբերակում են **ընդհանուր անորոշ առում** («գրո» հոդով) և **մասնակի** կամ **մասնավոր** անորոշ առում («մի» հոդով). հմմտ.՝

Ես բժիշկ հրավիրեցի - Ich holte Arzt.

Ես մի բժիշկ հրավիրեցի - Ich holte einen Arzt.

Այստեղ թե՛ հայերենի **մի** հոդը և թե՛ գերմաներենի համապատասխան ein հոդը սերում են քանակական թվականից և մինչև այժմ էլ որոշ

կիրառություններում պահպանել են իրենց այդ իմաստը, ինչպես, օրինակ՝

Auf dem Tisch liegt ein Heft.

Սեղանի վրա դրված է մի տետր:

Վերոհիշյալ վերլուծություններից ելնելով՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Թեև որոշյալի և անորոշի կարգը բնորոշ է գոյականին որպես խոսքի մաս և այդպիսով վերաբերում է ձևաբանության բնագավառին, սակայն, որպես քերականական կարգ, լիարժեք դրսևորվում է նախադասության մեջ:
2. Առարկայի, որպես որոշյալ առման, հիմքում ոչ միայն նրա ներակա հատկանիշներն են (ինքնին պայմանավորված դրությամբ), այլև հաղորդակցվողների վերաբերմունքը խոսքի առարկայի նկատմամբ: Վերջին դեպքում կարևոր է խոսակիցների իրազեկությունը այդ առարկայի վերաբերյալ:

Այս առումով նշենք նաև, որ հաճախ «որոշյալ» ու «անորոշ» հասկացությունները հանգում են «թեմա» ու «ռեմա» նշանակություններին, որոնք կազմում են հոդի ընդհանուր իմաստը, ինչպես, օրինակ՝

Ein Schwan kam ihnen entgegen. Der Schwan und ihr Boot glitten lautlos vorüber.

Այստեղ, որոշյալ հոդը, գոյականի (der Schwan) երկրորդ անգամ հիշատակման դեպքում, ցույց է տալիս, որ առարկան հաղորդակցման մասնակիցների համար որոշյալ է, քանի որ այն անվանվում է արդեն առաջին տեղեկությամբ: Տվյալ դեպքում հիշատակված երկու իմաստները պետք է դիտել ոչ թե հոդի առանձին իմաստներ, այլ՝ մեկ ընդհանուր քերականական իմաստի բաղադրիչներ:

ԱՃԱԿԱՆ

Իբրև խոսքի մաս ածականն անվանում, ցույց է տալիս որակային մի կայուն (ոչ գործընթացային) հատկանիշ, որն անմիջականորեն տրված է, բնորոշ է առարկային կամ որը բխում, սերում է այլ առարկայի (երևույթի) հետ տվյալ առարկայի ունեցած հարաբերությունից, ձեռք է բերված այդ հարաբերությամբ: Ըստ այդմ էլ ածականը լինում է երկու տեսակ՝ որակական (qualitativ), որը ցույց է տալիս առարկային հատուկ, նրան բնորոշ որակային հատկանիշ (**մեծ** - groß, **կապույտ** - blau, **ուրախ** - lustig) և հարաբերական (relativ), որը ցույց է տալիս այլ առարկայի հետ տվյալ առարկայի ունեցած հարաբերությունից բխող, սերող որակային (տարածաժամանակային, սերման, պատկանելության, հատկացման և այլն) հատկանիշ, ինչպես՝ **քաղաքային** - städtlich, **ուսանողական** - studentisch, **մարդկային** – menschlich և այլն:

Հայերենում և գերմաներենում որակական ածականները հարաբերականներից տարբերվում են ոչ միայն նշված իմաստաբանական հատկանիշներով. կան նաև կառուցվածքային՝ ձևաբանական, բառակազմական, մասամբ և՝ կիրառական տարբերություններ: Այսպես՝

ա) որակականների զգալի մասը կարող է համեմատության աստիճաններ կազմել¹, իսկ հարաբերականն այդպիսի աստիճաններ չունի,

բ) կան արմատական և բաղադրյալ (բարդ, ածանցավոր) որակականներ. հարաբերականները սովորաբար բաղադրյալ են,

գ) երկու լեզուներում էլ որակականը կարող է գործածվել մակբայաբար (**քշնամի լինել** - Feind sein, **հանգիստ նստել** - ruhig sitzen, **առույգ աշխատել** - munter arbeiten), իսկ ածանցումով այն կարող է վերածվել մակբայի. հմմտ.՝ **քաջ (քաջաբար)** կռվեց, feind (feindlich) sein, մինչդեռ հարաբերականը չի կարող:

Բացի այդ, հայերենում որակական ածականը, ի տարբերություն հարաբերականի, կարող է ունենալ փաղաքշական - նվազական ածանցումներ, այն կարող է **-ուրյուն** ածանցով վերացական գոյականներ կազմել և այլն: Ընդհանուր առմամբ, որակական - հարաբերական հակադրությունը հայերենում միշտ չէ, որ հստակ է արտահայտվում. եր-

¹ Այստեղ հայերենը և գերմաներենը հանրնկնում են նաև նրանում, որ մի շարք որակական ածականներ, ինչպես՝ **կլոր** – rund, **մեռած** – tot, **կենդանի** – lebendig, **համր** – stumm, **մերկ** – nackt և այլն համեմատության աստիճաններ չեն կազմում:

բեմն հարաբերականի մեջ զարգանում, հաստատվում է որակականը, կամ երկուսն էլ գոյակցում, համատեղում են միևնույն ձևի մեջ:

Երկու լեզուներում էլ ածականն ունի մեկ մաքուր քերականական կարգ, որը կոչվում է **համեմատության աստիճանների կարգ**: Այս կարգը արտահայտում է առարկայի հատկանիշի աստիճանը, չափը՝ այլ առարկայի կամ առարկաների միևնույն հատկանիշի անմիջական (երբեմն նաև ոչ անմիջական) համեմատությամբ: Դրսևորվում է հիմնականում որակական ածականների ոլորտում և մասնակիորեն՝ մակբայական համակարգերում: Եթե հայերենում նշված կարգի քերականական արտահայտության միջոցներն են մասնիկավորումը, օժանդակ բառի կիրառումը կամ նկարագրական եղանակը, ապա գերմաներենը օգտագործում է հիմնականում թեքման հնարավորությունները, որոնք դրսևորվում են բաղդատական և գերադրական աստիճաններում: Դրական (Positiv) աստիճանը փաստորեն ելակետային ձև է բուն համեմատության աստիճանների համար, և լեզվաբանների մի մասը այն ինքնուրույն աստիճան չի համարում: Այդ պատճառով իրական իմաստային հակադրությունը ընդունվում է բաղդատական կամ համեմատական (Komparativ) և գերադրական (Superlativ) աստիճանների միջև:

Բաղդատական աստիճանն արտահայտում է առարկայի համեմատվող հատկանիշի հավասարական, առավել կամ նվազ լինելը՝ այլ առարկայի կամ առարկաների միևնույն հատկանիշի նկատմամբ: Ըստ այդմ էլ հավասարական բաղդատականն արտահայտում է համեմատվող միասեռ, միատեսակ հատկանիշների հավասարություն: Կադապարման մեջ հայերենն օգտագործում է համապատասխան դերանուններ և կապեր, որոնք այստեղ կատարում են օժանդակ բառի դեր. օրինակ՝ **մահու չափ դաժան, քաղցր ինչպես մեղր, ձյան նման սպիտակ** և այլն: Նույն պայմաններում գերմաներենում ունենք միայն wie համեմատական շաղկապը, ինչպես՝ stark wie ein Bär (ուժեղ ինչպես արջը), schön wie eine Blume (գեղեցիկ ինչպես ծաղիկը), süß wie Honig (քաղցր ինչպես մեղրը) և այլն:

Առավելական բաղդատականը, որն արտահայտում է համեմատվող հատկանիշի առավելությունը համեմատության մյուս եզրի նկատմամբ և նվազական բաղդատականը, որն արտահայտում է համեմատվող հատկանիշի նվազ լինելը համեմատության մյուս եզրի նկատմամբ, հայերե-

նում իրացվում է առաջին դեպքում **ավելի** օժանդակ բառի և դրական աստիճանի գուգորդմամբ (**ավելի լավ, ավելի գեղեցիկ, ավելի մեծ**), իսկ երկրորդը՝ նվազականություն արտահայտող **նվազ, պակաս, քիչ, սակավ** և այլ ձևերով: Գերմաներենը, սակայն, երկու դեպքում էլ գործածում է միևնույն -er ածանցը, որը կարող է գուգորդվել նաև արմատական ձայնավորի ձայնավորությամբ կամ տարահիմք ձևերով, ինչպես, օրինակ՝ schön - schöner, warm - wärmer, jung - jünger, wenig - weniger, gut - besser, viel - mehr և այլն:

Գերադրական աստիճանը (Superlativ), որն արտահայտում է առարկայի համեմատվող հատկանիշի գերազանցություն՝ այլ առարկաների միևնույն հատկանիշի նկատմամբ, կամ՝ առանց անմիջական համեմատության, թե՛ հայերենում և թե՛ գերմաներենում իրացվում է երկու տարատեսակներով՝ հարաբերական և բացարձակ:

Հարաբերական գերադրականը (relativer Superlativ) արտահայտում է համեմատվող հատկանիշի աստիճանի, չափի լիակատար գերազանցությունը համեմատության մյուս եզրի նկատմամբ: Ժամանակակից հայերենում այս ձևի արտահայտության հնարավորությունները մի քանիսն են: Այսպես՝ դրական ձևին ավելանում է **ամենա-** նախածանցը՝ **ամենալավ, ամենամեծ, ամենագեղեցիկ**: Դրական ձևին նախահար գուգորդվում է **ամենից** (նաև **բոլորից**) բացառականը՝ **ամենից մեծ, բոլորից մեծ**. հմմտ. նաև՝ **ամենաարագ, ամենից արագ**: Այս գուգորդումը կարող է լինել բաղդատականի կամ բացարձակ գերադրականի հետ՝ **ամենից ավելի մեծ, բոլորից ավելի ուժեղ, ամենից շատ գեղեցիկ**: Գերմաներենում այս աստիճանը արտահայտվում է der, die, das (ըստ գոյականի սեռի) հարաբերական դերանունների և -(e)st ածանցի օգնությամբ, ինչպես՝ der (die, das) schönste, wärmste, jüngste և այլն: Այս առումով գերմաներենում ունենք ավելի համակարգված և ընդհանրացված պատկեր: Ինչ վերաբերում է բացարձակ գերադրականին (absoluter Superlativ կամ Elativ), որն արտահայտում է հատկանիշի գերազանցություն՝ առանց անմիջական համեմատության, ապա դրա արտահայտման ձևերը երկու լեզուներում էլ ընդհանրական են՝ հայերենում -**գույն** մասնիկի (լավա-**գույն**, մեծա**գույն**, խոշորա**գույն**) օգնությամբ, իսկ գերմաներենում՝ am նախդիրի և միևնույն - (e)st ածանցի՝ am schönsten, am wärmsten, am jüngsten, am besten (gut-ից): Որակի բարձրագույն աստիճանի արտա-

հայտման համար օգտագործվում է նաև առանց որևէ նախահար մասնիկի բացարձակ գերադասականի ձևը, ինչպես՝ von größter Bedeutung (մեծագույն նշանակության), in kürzester Frist (ամենակարճ ժամանակամիջոցում), in größter Begeisterung (մեծագույն ոգևորությամբ) և այլն:

Գերմաներենում, բացի ածականների համեմատության աստիճանների քերականական կարգից, ունենք նաև ոչ մաքուր (երկրորդային) կարգեր (սեռի, թվի, հոլովի), որոնք, ըստ էության, արտացոլում են ածականի հետ գործածվող գոյականի համապատասխան կարգերը: Նշված կարգերը իրացվում են որպես ածականի թեքվող ձևեր: Այստեղ գերմաներենի տիպաբանական յուրահատկությունն այն է, որ ածականը հանդես է գալիս երկու կարգի թեքվող ձևերով (հոլովումներով)՝ դերանվանական կամ ուժեղ և անվանական կամ թույլ: Այս կամ այն ձևի ընտրությունը պայմանավորված է որոշչային կապակցության մեջ ածականի գործառույթից: Տվյալ դեպքում գործում է գերմաներենին բնորոշ գոյականի շարահյուսական խմբի մեմաձևույթ կազմության սկզբունքը՝ երբ սեռը, թիվը և հոլովը այդ խմբում արտահայտվում են մեկ բառաձևով: Եթե նշված քերականական իմաստները արտահայտվում են ածականին նախորդող հոդի կամ դերանվան միջոցով, ապա ածականը հանդես է գալիս անվանական ձևով, որը ձևաբանորեն այդ իմաստները չի արտահայտում: Իսկ եթե ածականին նախորդող բառը հիշյալ իմաստները չի արտահայտում, ապա ածականն իր վրա է վերցնում այդ պարտականությունը՝ համապատասխան դերանվանական վերջավորությունների միջոցով, ինչպես՝ das (dieses, jenes) neue Buch կամ ein (mein, kein) neues Buch և այլն: Այդպիսով՝ գերմաներենում ածականի հոլովվող ձևը, ունենալով «փոփոխական» վերջավորություններ, բնութագրվում է կրկնակի կապով. այն համաձայնեցվում է ոչ միայն ըստ որոշյալ գոյականի, այլև նախորդող հոդի կամ դերանվան հետ՝ իր ուժեղ վերջավորություններով արտահայտելով սեռի, թվի և հոլովի իմաստներ կամ էլ ստանալով չեզոք թույլ վերջավորություններ:

Հայերենում ածականը չթեքվող խոսքի մաս է (բացառությամբ գոյականական գործառույթից) և գերմաներենի համարժեք ձևերը արտահայտում է գոյական անդամի հոլովմամբ. հմմտ.՝

solch ein schönes Haus – **նման մի գեղեցիկ տուն**

solch eines schönen Hauses – **նման մի գեղեցիկ տան**

solch einem schönen Haus – **մման մի գեղեցիկ տանը**

Հարկ է նշել, որ գերմաներենում երբեմն առկա են շեղումներ մեմաձևույթ կազմության սկզբունքից, ինչպես, օրինակ, երբ դերանվանական վերջավորությունները կրկնվում են, եթե գոյականից առաջ ունենք առանց մախսհար ձևի երկու և ավելի ածականներ. հմմտ.՝

stärker heißer Tee - **թունդ տաք թեյ**

von diesem unserem Nachbarn - **այս մեր հարևանից**

vieler neuer Bücher - **շատ նոր գրքերի**

Թե՛ հայերենում և թե՛ գերմաներենում ածականի հիմնական շարահյուսական գործառույթը որոշիչն է, թեև այն կարող է ունենալ նաև ստորոգելիական և պարագայական գործառույթ: Այսինքն՝ գործառույթի տեսակետից այս լեզուներում տարբերություններ չեն նկատվում, եթե ելնենք այն փաստից, որ ածականը հիմնականում մտնում է գոյականի խմբի կազմի մեջ, իսկ առանձին դեպքերում՝ նաև բայի:

Անդրադառնալով մյուս խոսքի մասերից թվականին, դերանվանը և մակբային՝ հարկ է նշել, որ տիպաբանության տեսակետից դրանք գերմաներենում առանձին յուրահատկություններ չեն ցուցաբերում և քննարկելի են նկարագրական քերականության շրջանակներում: Այս առումով, գերմաներենի խոսքի մասերի համակարգում առանձնանում է բայը, որի տարբեր կարգի տիպաբանական յուրահատկությունների բացահայտումը սույն աշխատության կարևորագույն խնդիրներից է:

Ժամանակակից գերմանագիտության կողմից խոսքի մասերի շարքում բային տրվում է առաջնային նշանակություն և այդ պատճառով է, որ ցանկացած նկարագրական քերականություն սկսվում է բայի քննությամբ: Այս մոտեցման հիմքում այն իրողությունն է, որ յուրաքանչյուր լեզվում բայերը կազմում են ամբողջ բառապաշարի մոտ մեկ երրորդը, իսկ քերականության տեսակետից դրանք օժտված են բազմաբնույթ և կարևոր քերականական կարգերով:¹ Այս առումով հայերենի և գերմաներենի միջև ընդհանրությունները բավականաչափ մեծ են, ինչը ստեղծում է անհրաժեշտ նախադրյալներ համապատասխան տիպաբանական վերլուծությունների և եզրակացությունների համար:

Ընդհանուր առմամբ, քերականագիտության մեջ ամենաբնորոշ հատկանիշը, որով կատարվել է ներբայական խմբավորում, համարվել է դիմայնությունը, դեմք ցույց տալը: Ըստ այդմ էլ բայական ձևերը ներկայացվել են երկու խմբով. դրանք են՝ **դիմավոր ձևեր** (persönliche Formen) կամ **դիմավոր բայեր** (persönliche Verben) և **անդեմ ձևեր** (unpersönliche Formen) կամ **անդեմ բայեր** (unpersönliche Verben) կամ՝ **դերբայներ** (Partizipien): Գերմանական քերականագիտության մեջ, սակայն, «անդեմ բայեր» ասելով հիմնականում հասկանում են, այսպես կոչված, **դիմապակաս բայերը**, որոնք գործածվում են մեկ (սովորաբար երրորդ) դեմքով. ընդ որում, բնական կամ տրամաբանական դեմքը չի հասկացվում, այդ պատճառով էլ մի լեզվից մյուսը փոխանցելիս՝ նման կարգի բայերը համարժեք արտացոլում հիմնականում չեն ունենում: Պատճառը դրանց դարձվածքային նշանակությունն է՝ համապատասխան լեզվական հանրույթի լեզվամտածողական առանձնահատկություններով պայմանավորված: Այսպես, օրինակ, եթե գերմաներենի es regnet (անձրևում է), es tagt (լուսանում է) և մի քանի այլ արտահայտություններ որոշակի ձևերով կարելի է արտահայտել հայերենում, ապա մույնը հնարավոր չէ es graut mir, es geht ihm gut և այլ կազմությունների դեպքում: Բայերի բացարձակ գերակշռող մասը եռադիմային է, բայց գործառությամբ առաջնություն ունի երրորդ դեմքը:

¹ Հայագիտության մեջ բայի առաջնային նշանակության կողմնակից է եղել Մ. Աբեղյանը, որի կարծիքով բայն է խոսքի կենտրոնը, առանցքը:

Գերմաներենի տիպաբանական յուրահատկությունների տեսակետից կարևոր նշանակություն ունի ենթակայական և խնդրային բայերի տարբերակումը, ինչը սերտորեն առնչվում է գերմաներենի խնդրառության յուրահատկություններին: Հարկ է նշել, որ այստեղ հայերենը և գերմաներենը ցուցաբերում են տիպաբանական շատ կարևոր ընդհանրություններ, ինչը, սակայն, առաջին հայացքից ուշադրություն չի գրավում այն պատճառով, որ հայագիտական ուսումնասիրություններում (բացառությամբ քերես Մ. Աբեղյանի, Գ. Ջահուկյանի և Հ. Հարությունյանի) խնդրառությունը (կոչվում է մաս հոլովառություն, վարում, կառավարում) դիտվում է որպես մախադասության անդամների ստորադասական կապակցության եղանակ, և գերադաս անդամը թելադրում է ստորադասի հոլովը կամ կապը և հոլովը: Մինչդեռ գերմանագիտության մեջ, մախադասության բայակենտրոն կառուցվածքի ըմբռնման հիման վրա, ենթակայական և խնդրային բայերի քերականական տարբերությունները դիտարկվում են դրանց արտահայտած գործողության բնույթի տեսակետից: Այս մոտեցմամբ առանձնացվում են մաս **անցողական** (transitiv) և **ոչ անցողական** (intransitiv) բայական կարգերը, երբ անցողականությունը համարվում է «մարդու այնպիսի գործողություն արտաքին աշխարհի վրա, որի արդյունքում փոխվում են մարդկանց և առարկաների միջև առկա հարաբերությունները»:¹ Վերադառնալով խնդրառությանը՝ նշենք, որ ենթակայական և խնդրային բայերի տարբերական մեջ, համապատասխան քերականական հատկանիշի պատճառական բնույթից ելնելով, հայերենում և գերմաներենում ունենք որոշակի տիպաբանական ընդհանրություններ: Ընդ որում, այդ ընդհանրությունները արտահայտվում են հատկապես խնդրառության ներկայության հատկանիշով, իսկ, ըստ խնդրառության բնույթի, կարող ենք ունենալ մաս ոչ համարժեք ձևեր ու կառույցներ, ինչպես, օրինակ, schicken - **ուղարկել (ինչ-որ մեկին, ինչ-որ բան)** կամ helfen - **օգնել (ինչ-որ մեկին)** ենթակայական բայերը երկու լեզուներում էլ, ըստ խնդրառության բնույթի, համընկնում են, իսկ beitragen (zu) (Dat.) - **նպաստել (ինչ-որ բանի)**, warten (auf) (Akk.) - **սպասել (ինչ-որ մեկին, ինչ-որ բանի)** խնդրային բայերի դեպքում ունենք տարբեր կառույցներ:

¹ Brinkmann H., Die deutsche Sprache. Gestalt und Leistung. Düsseldorf, 1971.

Թե՛ գերմաներենում և թե՛ հայերենում բայի անցողականության կամ ոչ անցողականության հատկանիշը դրսևորվում է առավել հստակ կերպով: Հարկ է նշել, որ այս տարբերական հիմքում բայասեռի քերականական կարգի իմացաբանական և քերականական իրացումն է լեզվում: Այդպիսով անցողական բայերը պահանջում են հայցական հոլովով դրված ուղիղ խնդիր և ունեն կրավորական կազմության հնարավորություն (ունեն սեռի կարգ), իսկ ոչ անցողական բայերը զուրկ են այդ հատկանիշից և չեն կարող ունենալ ուղիղ խնդիր լրացում: Երկու լեզուների զուգադրումից հետևում է, որ անցողական և ոչ անցողական բայերի տարբերական մեջ ընդհանուր տիպաբանական հատկանիշ է միայն հայցականով դրված ուղիղ խնդրի առկայությունը կամ բացակայությունը: Ինչ վերաբերում է կրավորական ձևերին, ապա դրանց կազմությունը բնորոշ է ոչ բոլոր անցողական բայերին, որին համագամորեն կանրադառնանք ստորև: Միևնույն ժամանակ որպես գերմաներենին բնորոշ յուրահատկություն է այն փաստը, որ որոշ տիպի անցողական բայեր կարող են կազմել կրավորական ձևեր, ինչը հայերենում հնարավոր չէ, և համարժեք արտացոլումը բացառվում է ինչպես, օրինակ՝ Es wurde tüchtig gearbeitet, viel gelacht, gut geschlafen: Գերմաներենին բնորոշ կարևոր տիպաբանական առանձնահատկություն է նաև այն, որ այստեղ անցողական բայերը ավելի մեծ թիվ են կազմում: Պատճառն այն է, որ գերմաներենում իմաստով պատճառաբանված անցողական բայերի կողքին առկա են նաև ձևաբանորեն պայմանավորված անցողական բայեր, ինչպես, օրինակ՝ besteigen, betreten, erklettern և այլն, որտեղ անցողականությունը պայմանավորված է be-, er-, an- նախածանցներով: Մյուս կողմից, եթե իմաստով պատճառաբանված անցողական բայերի հարցում հայերենում և գերմաներենում տարբերությունները մեծ չեն, ապա հայերենում բացակայում են այնպիսի բայերը, որոնք միևնույն խոնարհման հարացույցով կարող են իրացվել որպես թե՛ անցողական և թե՛ ոչ անցողական բայեր: Այս դեպքում գերմաներենի միևնույն ձևի դիմաց հայերենում կարող ենք ունենալ երկու՝ թեև միևնույն արմատի կազմությամբ, սակայն տարբեր ձևեր. հմմտ.՝

erschrecken (vt) - վախեցնել (անցողական)

erschrecken (vi) - վախենալ (ոչ անցողական)

hängen (vt) - կախել (անցողական)

hängen (vi) - կախված լինել (ոչ անցողական)

Գերմաներենի համար կարևոր նշանակություն ունի լիմաստ և թերիմաստ բայերի առանձնացումը: Ըստ այդմ՝ տարբերակվում են օժանդակ և եղանակային բայերի խմբերը: Նշված բայերը նշանակալի դեր ունեն բայ - ստորոգյալի կազմության համար և հստակ կերպով հակադրվում են լիմաստ բայերին: Օժանդակ բայերը (sein, haben, werden) ծառայում են բայի բարդ ձևերի կազմությանը, իսկ եղանակային բայերը՝ ստորոգյալի իմաստի մասնավորեցմանը կամ առանձին նշանակությունների արտահայտմանը: Հայերենում, ըստ էության, ունենք մեկ օժանդակ բայ (**լինել**), որը հանդես է գալիս տարբեր ձևաբանական իրացումների տեսքով: Եղանակային բայերի տեսակետից տարբերությունները մեծ չեն, սակայն հայ քերականագիտության մեջ դրանք դիտարկվում են եղանակավորող բառերի շարքում և քննարկվում են որպես լեզվական - հասկացական կարգ:

Բայի վերոհիշյալ տիպաբանական յուրահատկությունների էությունը առավել հստակ է բացահայտվում նրա քերականական կարգերի քննությամբ: Մինչ այդ հարկ է նշել, որ հայերենում և գերմաներենում թեև բայի քերականական կարգերը նույնն են, սակայն թե՛ իրենց արտահայտած քերականական իմաստի և թե՛ գործառնության տեսակետից տարբերությունները նկատելի են:

ԲԱՅԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Դեմքի և թվի քերականական կարգերը սերտորեն կապված են միմյանց հետ, քանի որ դրանց քերականական իմաստները պայմանավորված են հաղորդակցական իրադրությամբ, իսկ բայերի մեջ դիմային հարաբերությունները դրսևորվում են խոնարհված՝ եղանակային ձևերում: Գործողությունն ինքնին դեմք ունենալ չի կարող, իսկ բայի մեջ իրացվում է գործողի դեմքը, այսինքն՝ բայը դիմային իմաստը արտահայտում է գործողի (եմբակային) հարաբերությամբ: Ասվածը հավասարապես վերաբերում է թե՛ հայերենին և թե՛ գերմաներենին, որտեղ բայը եռադիմային է, և յուրաքանչյուր դեմք ունի իր դիմային ցուցիչը, իսկ տարբերությունները միայն ձևակազմական են, ինչպես՝ **գրում եմ** - ich schreibe, **գրում ենք** - wir schreiben, **գրում ես** - du schreibst, **գրում եք** - ihr schreibt և այլն: Համապատասխան փաստերի զուգադրումից հետևում է նաև, որ գերմաներենում բայ - ստորոգյալի դեպքում անձնական դերանունների առկայությունն առավել պարտադիր է քան հայերենում, քանի որ դրանով է լրացվում դիմային վերջավորությունների բացը. հմմտ.՝

wir gehen - (մենք) գնում ենք

sie gehen - (նրանք) գնում են

Երկու լեզուներում առկա է նաև բովանդակային առումով ընդհանուր, իսկ ձևական առումով տարբեր այնպիսի մի երևույթ, որը կոչվում է դեմքի և թվի չեզոքացում, ինչպես, օրինակ՝

ich spreche (ես խոսում եմ) - du sprichst (դու խոսում ես) - er spricht (նա խոսում է), բայց՝ es regnet (անձրևում է):

Տվյալ երևույթը բացատրվում է այն հանգամանքով, որ կոնկրետ նախադասության ենթական հաղորդակցման գործընթացից դուրս է կամ որևէ առարկա է:

Գերմաներենի համար, որպես կարևոր տիպաբանական առանձնահատկություն, հարկ է նշել նաև այն փաստը, որ այստեղ անցյալ կատարյալի (Präteritum) և լրձական եղանակի (Konjunktiv) ձևերը ստանում են յուրահատուկ դիմային վերջավորություններ. առաջին և երրորդ դեմքերը բնութագրվում են զրո վերջավորությամբ և, բնականաբար, համընկնում են, ինչպես՝ (ich) kam, (er) kam և այլն:

Եվ, վերջապես, մի հետաքրքիր տիպաբանական ընդհանրության մասին հայերենի և գերմաներենի միջև, երբ փոխաբերական իմաստավորումների դեպքում առաջանում է դիմային փոխանցումների հնարավորություն: Այդպիսով ոճական նկատառումներով կարող է տեղի ունենալ եզակի երկրորդ դեմքի փոխանցում հոգնակի երրորդ դեմքին, ինչպես՝ *Wie haben wir geschlafen?* - **Ինչպես՞ քնեցինք**, իսկ երբեմն նաև մյուս երկրորդ դեմքի փոխանցում եզակի առաջին դեմքին, ինչպես՝ *du siehst* - **նայում ես (եմ)**, *du sprichst* - **խոսում ես (եմ)** և այլն: Վերջինս, անշուշտ, ընկալելի է միայն համատեքստում, ինչպես, օրինակ, *Du siehst ihn (an) und verstehst nichts* - **Նայում ես նրան և ոչինչ չես հասկանում: (Նայում եմ նրան և ոչինչ չեմ հասկանում):**

Ժամանակի կարգը բայի ամենակարևոր քերականական կարգն է, եթե նկատի ունենանք, որ ժամանակակից լեզվաբանությունը իմացաբանության տեսակետից բայի արտահայտած իմաստը սահմանում է որպես առարկայի փոփոխվող հատկանիշ ժամանակի մեջ: Ընդհանուր առմամբ, ժամանակի կարգը համապարփակ նշանակություն ունի, քանի որ այն մատերիայի գոյության ձև է և կապված է նրա շարժման, զարգացման ու կրած փոփոխությունների հետ: Մարդկային մտածողությունը ժամանակի հավերժ ընթացքը ճանաչելու նպատակով տարորոշում է այն առանձին հատույթների կամ հատվածների: Լեզվի մեջ դրանք իրենց արտահայտությունն են գտնում բառերով, բառակապակցություններով և նախադասություններով: Գրանց փոխհարաբերությունների բնորոշ տեսանկյունը դրսևորվում է հաջորդականության շարքով և յուրաքանչյուր հատույթ այդ շարքում ունի իր նախորդը և հաջորդողը: Մրանով պայմանավորված՝ գոյանում են ժամանակային պլաններ, որոնցից հիմնականը համարվում է եռապլանայնությունը՝ որպես օբյեկտիվ իրականության ճանաչողության ձև: Մարդու գործունեության առօրյայով իմացաբանորեն առավել աչքի ընկնող հատույթը կամ առանցքային պահը, որի հանդեպ գոյանում և գիտակցվում են նախորդող և հաջորդող դրվածքներ՝ խոսելու հաղորդակցման պահն է: Այդպես էլ հաստատվում է ժամանակի եռապլան ըմբռնում՝ անցյալ - ներկա - ապառնի: Նույնիսկ, եթե որոշ տեսանկյունների հետ կապված ներկան կամ ապառնին ձևաբանորեն չի արտահայտվում, միևնույն է, հաջորդականության գիտակցումը կա: Գործողությունը (իրադարձություն, շարժում, երևույթ, դրություն կամ վիճակ և այլն) կարող է առնվել ա-

առանցքային պահի նկատմամբ իբրև համընկնող դրվածք (համընկնում), իբրև նախորդող դրվածք (նախորդում) և իբրև հաջորդող դրվածք (հաջորդում): Գործընթացություն արտահայտելու դեպքում դրվածքները կարող են արտահայտվել կերպանիշ դերբայներով կամ ձևակազմական բայահիմքերով, իսկ այդ դրվածքների հարաբերությունը ժամանակային՝ առանցքային պահի նկատմամբ՝ օժանդակ բայերով կամ վերջավորություններով: Ասվածը վերաբերում է թե՛ հայերենին և թե՛ գերմաներենին. հմմտ.՝

գրում եմ, կամ - ich schreibe, bin (ներկա)

գնացել եմ, կայի - ich bin gegangen, war (անցյալ)

գնալու եմ, կլինեմ - ich werde gehen (ապառնի)

Ընդհանուր առմամբ, իր համապարփակ բնույթի պատճառով, ժամանակային ձևերը բովանդակության առումով լեզուներում միմյանցից շատ չեն տարբերվում, իսկ եղած տարբերությունները հանգում են հիշյալ իմաստների արտահայտման ձևերին: Ժամանակակից հնդեվրոպական լեզուներից, սակայն, հայերենը և գերմաներենը բնութագրվում են այն տիպաբանական ընդհանրությամբ, որ երկու լեզուներում էլ առկա է հարաբերական ժամանակի գիտակցումը: Թեև հնդեվրոպական միասնության շրջանում ժամանակի կարգը դեռևս լիովին չէր ուրվագծվել, սակայն ժամանակային իրավիճակը, որ տեսնում ենք հայերենում և գերմաներենում պետք է բացատրել ուշ հնդեվրոպական շրջանում այս երկու ցեղակից լեզուների ներքին համակարգայնացման ընդհանուր միտումներով: Հակառակ դեպքում այդպիսի նույնական պատկեր չէինք կարող ունենալ:

Այսպիսով՝ ժամանակի կարգը նշված լեզուներում ներառում է երկու ժամանակային պլանների փոխհարաբերություններ. բացարձակ ժամանակ (կամ առանցքային պլան), որտեղ նկատի է առնվում գործողության պահի և խոսքի պահի փոխհարաբերությունը և հարաբերական՝ երբ նկատի է առնվում մեկ գործողության պահի փոխհարաբերությունը մեկ այլ գործողության պահի նկատմամբ. հմմտ.՝

Er gab mir das Buch, nachdem er es gelesen hatte.


Նա գիրքը տվեց ինձ, երբ արդեն այն կարդացել էր:

Այստեղ gab, **տվեց** ձևերը ցույց են տալիս, որ գործողությունը տեղի է ունեցել խոսելու պահից առաջ, իսկ gelesen hatte, **կարդացել էր** ձևերը

ցույց են տալիս, որ գործողությունը կատարվել է ինչպես խոսելու պահից, այնպես էլ մեկ այլ գործողությունից (gab, տվեց) առաջ:

Քանի որ հայերենում ժամանակի կարգը սերտորեն առնչվում է կերպի կարգի հետ, իսկ գերմաներենում այդ կապը ավելի տարրորշված է, ապա ժամանակաձևերի քննությունը կարելի է իրականացնել՝ ըստ գերմաներենի փաստերի:

Այսպիսով՝ վերը ներկայացված դրույթներին համաձայն՝ բացարձակ ժամանակաձևեր են ներկան (Präsens) և առաջին ապառնին (Futur I)՝ ըստ համընկնող (Gegenwart) ու հաջորդող (Zukunft) դրվածքների և անցյալ կատարյալն (Präteritum) ու վաղակատար ներկան (Perfekt)՝ ըստ նախորդող (Vergangenheit) դրվածքի: Նույն կերպ՝ հարաբերական են երկրորդ ապառնին (Futur II), վաղակատար անցյալը (Plusquamperfekt) և կրկին վաղակատար ներկան, որը հանդես է գալիս երկու ժամանակային պլաններում (absolute und relative Tempora) միաժամանակ, որին կանդրադառնանք ստորև: Այդ հարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Ինչպես տեսնում ենք, բացարձակ ժամանակային պլանը ներկայացվում է երկու մակարդակով, քանի որ այն ընդգրկում է նախորդող դրվածքի երկու ձևեր, իսկ հարաբերականի դեպքում բոլոր երեք դրվածքները հանդես են գալիս մեկական ձևով:

Ներկա ժամանակի գործառույթը գերմաներենում և հայերենում նույնն է. հիմնականում այն գործադրվում է արտահայտելու համար

այնպիսի գործողություն, որը համընկնում է խոսելու պահի հետ, ինչպես մասնա ալմախի գործընթացներ, որոնք իրենց բնույթով հարաժամանակային (panchronisch) բնույթ ունեն և խոսելու պահի հետ չեն համընկնում, ինչպես՝ Die Erde dreht sich um die Sonne - **Երկրագունդը պտտվում է արեգակի շուրջը**: Այսպիսով՝ առաջին դեպքում ունենում ենք սովորական կամ բուն ներկա, իսկ երկրորդում՝ ընդհանրական ներկա:

Ներկա ժամանակը հարացույցային հոմանիշներ չունի, սակայն, շատ դեպքերում ոճական փոխանցման արդյունքում կարող է արտահայտել ապառնի կամ անցյալի իմաստ: Այդ դեպքում տարբերակվում է պատմական ներկան (Präsens historicum), երբ կատարված գործողությունը ներկայացվում է ներկայի կադապարով, ինչն իր համարժեք արտացոլումն է գտնում թե՛ գերմաներենում և թե՛ հայերենում. ինչպես, օրինակ՝

Der Rennfahrer schießt durch die Kurve, rast heran, bremst scharf und hält an. կամ՝

Շիրվանգաղեն խարազանում է ժամանակի ապականված բարբերը:

Պատմական ներկան բնորոշ է պատմողական ոճին: Այստեղ գերմաներենը ցուցաբերում է առանձին յուրահատկություն, երբ ներկան գործածելով վաղակատար ներկայի (Perfekt) փոխարեն արտահայտում է ասվածի հրատապություն համընկնող դրվածքում, ինչպես՝ Ich höre, Sie wollen verreisen = Ich habe gehört, Sie wollen verreisen.

Դրան հակառակ՝ գերմաներենում և հայերենում ունենք համարժեք պատկեր ներկա ժամանակի ապառնեական գործառույթի հարցում: Թեև այստեղ ոճական արժեքը մեծ չէ, սակայն, տիպաբանության տեսակետից հետաքրքիր է այն առումով, որ անկախ լեզվից, ներկայի մասն գործառույթը պահանջում է միանշանակ համատեքստ և խոսողի համոզմունքը ներկայացվող գործողության նկատմամբ, հմտ.՝ Dieses Buch erscheint in einigen Tagen.

(Այս գիրքը լույս է տեսնում մի քանի օրից) կամ

Wir fahren morgen aufs Land.

Վաղը մենք մեկնում ենք քաղաքից դուրս:

Գոյություն ունի մաս, այսպես կոչված, հրամայական ներկա, երբ ոճական նկատառումով ներկան հանդես է գալիս հրամայական ձևով. օ-

րինակ՝ Sie können gehen, Herr Meyer! - **Դուք կարող եք գնա՛լ, պարոն Մայեր:**

Ապառնի ժամանակը ստեղծում է հաջորդող պլան՝ տվյալ առանցքային պահի նկատմամբ. օրինակ՝ **Ես գրելու եմ:** Առկայացուցիչներով՝ **Ես վաղը գրելու եմ:** **Մենք երեկոյան կգանք:** Ժամանակակից հայերենում այս ժամանակը տարբերակներ չունի,¹ սակայն գերմաներենը տարբերակում է առաջին և երկրորդ ապառնի ժամանակաձևերը: **Առաջին ապառնին** (Futur I) իմաստի առումով ցույց է տալիս, որ գործողությունը, որի մասին խոսվում է, տեղի է ունենալու խոսելու պահից հետո: Ըստ այդմ՝ առաջին ապառնիի ընդհանուր իմաստը կարելի է ներկայացնել երկու առանձին իմաստային բաղադրիչներով՝ գործողության բացառումը խոսելու պահից և դրա հանդես գալը խոսելու պահից հետո: Գործառույթի տեսակետից գերմաներենի առաջին ապառնին օժտված է նաև մի շարք տիպաբանական յուրահատկություններով, որոնք շատ դեպքերում համապատասխան արտացոլում չեն գտնում հայերենում: Այդ առումով կարելի է նշել նրա հրամայականի ձևով ներկա ժամանակի արտահայտման հնարավորությունը, ինչպես՝

Sie werden pünktlich sein !

Դուք պետք է ճշտապահ լինեք:

Ինչպես տեսնում ենք, այստեղ առաջին ապառնի ժամանակին բնորոշ werden + Infinitiv կառուցվածքը (Ich werde lesen) արտահայտում է ներկայի իմաստ, որտեղ առկա են երկու այլ իմաստային բաղադրիչներ՝ գործողության բացառում խոսելու պահից և գործողության պահանջ, հրաման: Ըստ էության, առաջին ապառնիի հրամայական իմաստը ունի շարակարգային նշանակություն. հնչերանգի միջոցով այն արտահայտում է հրաման և բնութագրվում է միայն երկրորդ (ինչպես նաև քաղաքավարական ձևի) դեմքով: Նույն կերպ՝ շարակարգային նշանակություն ունի նաև, այսպես կոչված, «վարկածային» առաջին ապառնին (hypothetischer Futur), որտեղ տեղի է ունենում կրկնակի փոխանցում.

ա) Եղանակային փոխանցում սահմանականի ոլորտից (որպես իրական ձև) «վարկածային» կամ ենթադրական իմաստի ոլորտ, ինչպես՝ Er muss zu Hause sein. **Նա պետք է որ տանը լինի:** բ) Ժամանակային փո-

¹ Հին հայերենի (գրաբարի) ստորադասական եղանակում տարբերակված էին երկու ապառնի՝ առաջին և երկրորդ:

խանցում ներկայի ոլորտ, երբ առաջին ապառնիի տվյալ ձևը կարող է ներկայացվել երկու իմաստային բաղադրիչներով՝ կանխադրույթ և համընկնում խոսելու պահի հետ: Միննույն ժամանակ ապառնիի ենթադրական բնույթը իրացվում է մաս wohl, hoffentlich, vielleicht և այլ եղանակավորող բառերի միջոցով: Սակայն այդ բառերի միջոցով արտահայտված ենթադրական կառույցը ապառնիի ձևական հատկանիշ չէ, քանի որ դրանք հաճախ իրենք են ենթադրական իմաստի կրողը, իսկ բայաձևը փոխանցման չի ենթարկվում, օրինակ՝

ներկա + wohl կառույց

Dein Sohn schläft wohl schon?

Քո տղան հավանաբար քնած է:

ապառնի + wohl կառույց

Es wird wohl einige Tage dauern.

Այն հավանաբար մի քանի օր կտևի:

Այսինքն՝ ենթադրական առաջին ապառնիի համար վճռորոշ նշանակություն ունի ոչ թե համապատասխան կազմության մեջ եղանակավորող բառի առկայությունը, այլ փոխանցումը ներկայի ոլորտ: Տվյալ իրողության հետ սերտորեն առնչվում են wollen և sollen մոդալ բայերով այն կառույցները, որոնք ունեն ապառնիի իմաստ, ինչպես, օրինակ՝ Es will regnen. / **Ուզում է անձրև գալ:** Կամ Wann soll die Post eintreffen? **Ե՞րբ է գալու (պետք է գա) փոստը:** Թեև հայերենի համապատասխան փաստերը վերաբերում են առավելապես լեզվի խոսակցական ոճին, սակայն այստեղ ևս տեսնում ենք գերմաներենին մնան կազմություն:

Երկրորդ ապառնին, ինչպես վերը նշվեց, բայի հարացույցում հանդես է գալիս որպես հարաբերական ժամանակաձև, որը առաջին ապառնիի հետ նույն հարաբերության մեջ է, ինչպես հարաբերական վաղակատար ներկան՝ ներկայի, իսկ վաղակատար անցյալը՝ անցյալ կատարյալի հետ: Նրա հիմնական իմաստը նախորդող ժամանակն է՝ ապագայում կատարվելիք գործողության նկատմամբ: Ըստ իմաստային բաղադրիչների վերլուծության՝ այստեղ ունենք գործողության բացառում խոսելու պահից և մեկ այլ՝ ապագայում կատարվելիք գործողությանը նախորդող վիճակ: Բովանդակային առումով այս ժամանակաձևը գերմաներենի մեկ այլ ժամանակաձևի՝ վաղակատար ներկայի (Perfekt) հոմանիշն է: Կարելի է ասել, որ այստեղ, ըստ էության, առկա է հարացույցային - շարակարգային հոմանիշություն: Որպես Perfekt-ի ապառ-

նիի փոխանցման ցուցիչ՝ կարելի է դիտել նրա կապը առաջին ապառ-
նիի, ապառնեական ներկայի, հրամայականի և պարագայական ժա-
մանակի հետ, որոնք մատնանշում են ապառնի վիճակ: Այդ պատճառով
երկրորդ ապառնին կարող է գործածվել նաև ժամանակի մակբայների
հետ, ինչպես՝ In ein paar Tagen wirst du mich vielleicht wieder vergessen
haben. **(Մի քանի օրից դու ինձ հավանաբար մոռացած կլինես):**

Այսպիսով՝ կանխադրույթը երկրորդ ապառնիի իմաստի կարևոր բա-
ղադրիչն է, այսինքն՝ ենթադրական ապառնին ծառայում է այնպիսի
կանխադրույթի արտահայտմանը, որը վերաբերում է անցյալին և լծոր-
դական ձև է կազմում առաջին ապառնիի համապատասխան ձևի հետ.
հմմտ.՝

Futur I

Er wird krank sein.

(Կանխադրույթը վերաբերում
է ներկային)

Futur II

Er wird krank gewesen sein.

(Կանխադրույթը վերաբերում
է անցյալին)

Այս ժամանակային ձևին բնորոշ է ոչ միայն փոխանցումը անցյալի
ուրրտ, այլև դրվածքների փոփոխությունը, որը նշանակում է փոխան-
ցում հարաբերական վիճակից բացարձակին: Այլ կերպ՝ ենթադրական
երկրորդ ապառնին ցույց է տալիս ոչ թե մեկ այլ գործողության հետ ժա-
մանակային կապը, այլ խոսքը հատկացնում է ուղղակիորեն խոսելու
պահին, օրինակ՝

Wenn du dir alles überlegt haben wirst, werden wir weiter darüber
sprechen. (հարաբերական երկրորդ ապառնի):

Du wirst dir alles überlegt haben. (ենթադրական երկրորդ ապառնի):

Ամեն դեպքում երկրորդ ապառնին ներկայացնում է գերմաներենին
բնորոշ տիպաբանական յուրահատկություն և այս առումով հայերենի
հետ առնչությունները նվազագույն են:

Անցյալի ժամանակաձևերը, որոնք գերմաներենում երեքն են, ներ-
կայացնում են այս լեզվի կարևոր տիպաբանական առանձնահատկո-
թյուններից մեկը, քանի որ ժամանակի կարգի տրամաբանությունը հա-
մամասնորեն արտացոլված է այդ ժամանակաձևերում: Ինչպես ստորև
կտեսնենք, այդ առումով հայերենի հետ առաջին հայացքից լիակատար
թվացող համապատասխանությունն ավելի շատ ձևական է, իսկ բովան-
դակության տեսակետից գերմաներենը ցուցաբերում է բազմաբնույթ յու-
րահատկություններ: Ասվածը վերաբերում է առաջին հերթին անցյալի

երեք ժամանակաձևերի (Präteritum, Perfekt, Plusquamperfekt) իմաստա-
յին բաշխմանը, որոնք, միմյանցից տարբերվելով, միևնույն ժամանակ
կարող են հանդես գալ մաս որպես հարացույցային հոմանիշներ:
Präteritum (կամ Imperfekt) ժամանակաձևը գերմաներենում ունի անցյա-
լի վիճակի առավել ընդհանուր իմաստի արտահայտման հնարավորու-
թյուն: Ընդ որում, այդ իմաստը բացարձակ է խոսելու պահի նկատմամբ՝
անկախ այլ գործողությունների ունեցած փոխհարաբերություններից:
Այդ առումով այն ավելի մոտ է հայերենի անցյալ կատարյալին,
սակայն, ինչպես Präteritum-ը, այնպես էլ մյուս ժամանակաձևերը գեր-
մաներենում կերպի նկատմամբ չեզոք են, իսկ դրանց հայերեն համար-
ժեքներն արտահայտում են գործողության կատարյալ կամ անկատար
վիճակներ: Մյուս կողմից գոյություն ունի իմաստային և գործառութա-
յին հոմանիշություն Präteritum և Perfekt անցյալ ժամանակաձևերի
միջև, երբ վերջինս հանդես է գալիս մաս որպես բացարձակ ժամանա-
կաձև: Թե ինչպիսին է նշված երկու ժամանակաձևերի բաշխումը
միևնույն ոլորտում, գերմանագիտության մեջ միասնական կարծիք գո-
յություն չունի: Առավել ընդունված է այն տեսակետը, որ Präteritum-ը
ցույց է տալիս անմիջականորեն անցյալում կատարվող գործողություն,
իսկ Perfekt-ը ներկայացնում է անցյալում սկսված և շարունակվող գոր-
ծողություն, որի հետևանքները արտացոլվում են ներկայում: Ասվածը
կարելի է բացատրել հետևյալ օրինակներով.

1. (Prät.) Zuerst **war** das Wetter schön, dann **regnete** es.

(Perf.) Es **hat geregnet**; der Boden ist noch nass. (որպես
հետևանք):

2. (Prät.) Heute morgen **erhielten** wir den Befehl zum Angriff und
gingen auch gleich zum Angriff über.

(Perf.) Wir **haben** eben den Brief zum Angriff **erhalten** und machen uns
bereit.

Նշված երկվությունը տեսանելի է, օրինակ, առաջին մախադասու-
թյունը հայերեն թարգմանելիս.

Սկզբում եղանակը լավ էր, հետո անձրևեց (անձրև եկավ):

Präteritum-ը, այսպիսով, վերաբերում է, ինչպես մյուս բացարձակ ժա-
մանակաձևերը, անմիջականորեն խոսելու պահին: Այն ցույց է տալիս,
որ գործողությունը տեղի է ունեցել խոսելու պահից առաջ՝ անցյալում:

Եթե փորձենք այս ժամանակաձևի առանձին բաղադրիչները ներկայացնել վերոհիշյալ սկզբունքներով, ապա կունենանք գործողության բացառում խոսելու պահից, նախորդող դրվածք խոսքի պահի նկատմամբ և հեռավորություն տեղի ունեցած գործողության և խոսելու պահի միջև: Ժամանակակից գերմաներենի համար առանձնացվում է, այսպես կոչված, էպիկական կամ պատմողական *Präteritum*-ը, որը խոսակցին (կամ ընթերցողին) տեղափոխում է դեպի անցյալ և ներկայացնում է միմյանց հաջորդող իրադարձությունները: Այս առումով հայերենի անցյալ կատարյալը և գերմաներենի *Präteritum*-ը ցուցաբերում են ընդհանուր հատկանիշներ: Հետաքրքիր իրավիճակ է ստեղծվում, երբ կենդանի խոսքում *Präteritum*-ը հանդես է գալիս ներկայի (*Präsens*) գործառնությով: Այստեղ առկա է կրկնակի ժամանակային մոտեցում. խոսողի (հեղինակի) խոսքը անցյալ իրադարձությունների մասին և իրադարձության մասնակիցների (գրական հերոսների) խոսքը՝ որպես ներկա գործողություն:

Ի տարբերություն *Präteritum* ժամանակաձևի, որը ունի անցյալի արտահայտման ընդհանուր իմաստ, *Perfekt* և *Plusquamperfekt* ժամանակաձևերի իմաստները առավել մասնավորեցված են և դրանք գործածվում են միայն հատուկ դեպքերում:

Տիպաբանության տեսակետից գերմաներենի *Perfekt*-ը հարուցում է մի շարք դժվարություններ, որոնք պայմանավորված են դրա արտահայտած իմաստի և գործառնության յուրահատկություններով: Նախ՝ հայերենի վաղակատար ներկան, որը կարելի է դիտել *Perfekt*-ի համարժեք ձև, իրականում լիովին չի արտացոլում այդ համարժեքությունն այն պատճառով, որ գերմաներենի *Perfekt*-ը կերպի նկատմամբ հիմնականում չեզոք է, իսկ հայերենի վաղակատար ներկան առավելապես կերպային հատկանիշով է օժտված: Ինչ վերաբերում է *Perfekt*-ի արտահայտած իմաստին, ապա այն ժամանակային առումով նույնն է, ինչ որ *Präteritum*-ը, այսինքն՝ խոսքի պահին նախորդող գործողությունը չի հարաբերվում այլ գործողությունների հետ: Այդ պատճառով բացարձակ ժամանակային կիրառությամբ դրանք դիտվում են անցյալի արտահայտման հոմանիշային ձևեր, որոնց միջև տարբերությունները ոճական բնույթի են. *Präteritum*-ը բնորոշ է պատմողական ոճին, իսկ *Perfekt*-ը՝ երկխոսությանը: Հարկ է նշել նաև, որ ինչպես *Präteritum*-ը դիմավոր բայի իր միանդամ կառուցվածքով, այնպես էլ *Perfekt*-ը իր վերլուծական կազմությամբ

(haben (sein) + Partizip II) կարող է արտահայտել բազմակի գործողություն, ինչպես՝

Früher **haben** wir selten die Museen **besucht**.

Նախկինում մենք հազվադեպ էինք այցելում թանգարաններ:

Հայերենի հետ համեմատելիս հետևում է, որ Perfekt-ը միշտ չէ, որ ցույց է տալիս ավարտուն գործողություն և երբեմն կարող է արտահայտել նաև անկատարի իմաստ:

Որպես հարաբերական ժամանակաձև՝ Perfekt-ը ունի նույն հիմնական իմաստը, ինչ որ Plusquamperfekt-ը և Futurum II-ը: Այն արտահայտում է մի գործողության նախորդում մյուսին, ընդ որում, նախորդող վիճակը որոշ դեպքերում կարող է ուղեկցվել կատարյալի իմաստով: Մյուս կողմից, սակայն, Perfekt-ի հարաբերական ժամանակային իմաստը միշտ չէ, որ բացահայտում է նշված հարաբերությունը, ինչը հանգեցնում է նրան, որ Perfekt-ի հարաբերական իմաստն առավել տեսանելի է լինում հատկապես բարդ ստորադասական նախադասություններում, ինչպես՝

Wir **haben gelernt**, immer die Wahrheit zu sagen.

Մյուս կողմից՝ հարաբերական իմաստով գործածվող Perfekt-ի հարաբերությունը բացարձակ իմաստով գործառույթի հետ նույնպես միանշանակ չէ, քանի որ ներկայում կատարվող գործողության նկատմամբ այն արտահայտում է անցյալ ժամանակ, իսկ ապառնիում կատարվելիք գործողության նկատմամբ՝ ապառնի ժամանակ, ինչպես՝

Nachdem wir das **erledigt haben**, werden wir ausruhen.

Այսուհանդերձ, հարաբերական Perfekt-ի կարևոր առանձնահատկությունը, որ նրա գործառույթը չի սահմանափակվում որոշակի պայմաններով, ինչպես ստորև կտեսնենք, ունենք Plusquamperfekt-ի դեպքում, նկատելիորեն հեշտացնում է նրա կիրառությունը և եթե Perfekt-ի փոխարեն գործածվում է Präteritum ժամանակաձև, ապա դա չի հանգեցնում բովանդակության փոփոխության, քանի որ ամեն դեպքում արտահայտվում է անցյալ ժամանակ, այսինքն՝ ներկային նախորդող գործողություն: Կարծում ենք, որ գերմաներենի պերֆեկտային ձևը հայերեն թարգմանելիս, կարևոր է անցյալի իմաստի արտահայտումը, իսկ կոնկրետ ձևի բնույթը կախված է արդեն համատեքստից, ինչը հայերենում ճշգրտվում է կերպային բաղադրիչով:

Ինչ վերաբերում է Perfekt-ի ապառնեական գործառնության, ապա դրա մասին հանգամանորեն խոսվեց Futurum II-ին նվիրված բաժնում:

Գերմաներենի Plusquamperfekt ժամանակաձևը, որին համապատասխանում է հայերենի վաղակատար անցյալը, կարելի է ասել, միակ ժամանակաձևն է, որի հարաբերական գործառնություն առավելագույնս միանշանակ է: Միևնույն ժամանակ, ի տարբերություն Perfekt-ի, այս ձևի հարաբերական իմաստը խստորեն սահմանափակված է: Այն ծառայում է անցյալին նախորդող ժամանակը արտահայտելուն և գործածվում է միայն անցյալի ժամանակաձևերի (հաճախ Präteritum-ի և հազվադեպ Perfekt-ի) հետ միասին, ինչպես, օրինակ՝

Wir **verlieben** das Museum, nachdem wir alles **besichtigt hatten**.

Ըստ էության, այստեղ անցյալին նախորդող ժամանակը արտահայտվում է օժանդակ բայի (haben կամ sein) համապատասխան ձևի (հիմնականում Präteritum-ի) միջոցով, իսկ հարակատար (Partizip II) բաղադրիչը պահպանում է նախաժամանակայնության այն ընդհանուր իմաստը, ինչ որ ունենք Perfekt-ի ժամանակ: Տվյալ դեպքում գերմաներենի և հայերենի համապատասխան ձևերի միջև առկա է հստակ տրամաբանական կապ, եթե նկատի ունենանք, որ մույն դերը կատարում է հայերենի օժանդակ բայը. հմմտ.՝

(Perf.) Ich **habe** das Buch gelesen - Ես գիրքը կարդացել **եմ**:

(Plusquam.) Ich **hatte** das Buch gelesen - Ես գիրքը կարդացել **էի**:

Տիպաբանության տեսակետից այստեղ կարևոր է այն փաստը, որ երկու լեզուներում անցյալի ժամանակի տարբեր մակարդակային գիտակցումը մույնական է, ինչը չենք տեսնում մույնիսկ գերմաներենին մերձավոր ցեղակից ոչ մի լեզվում: Ուստի, կարելի է ասել, որ այս ժամանակաձևի հարցում ձևական և իմաստային մեծ տարբերություններ գերմաներենը չի ցուցաբերում, ինչը չի վերաբերում սակայն դրա գործառնությանը առանձնահատկություններին: Այս առումով Plusquamperfekt-ը պարզ ինքնուրույն նախադասություններում գործածվում է միայն այն դեպքում, եթե կոնկրետ տեղեկություն գործողությունների հաջորդականությունը իրականության հետ չի համապատասխանում կամ, եթե ավելի վաղ կատարված գործողությունների մասին ասվում է ավելի ուշ կատարվածներից հետո: Վերցնենք մի հատված Թ. Մանի «Բուդդենբրոքները» վեպից.

Seit manchem Jahr **hatten** Buddenbrocks sich der weiteren sommerlichen Reisen **entwöhnt**, die ehemals üblich **gewesen waren**, und selbst, als in vorigen Frühling die Senatorin dem Wunsche **gefolgt war**, ihren alten Vater in Amsterdam zu besuchen und noch lange Zeit einmal wieder ein paar Duos mit ihm zu geigen, **hatte** ihr Gatte nur in ziemlich wortkarger Weise seine Einwilligung **gegeben**...

Ինչ վերաբերում է բարդ ստորադասական նախադասություններում Plusquamperfekt-ի գործառնության, որին անդրադարձանք մաս վերը, ապա այն միշտ չէ, որ արտահայտում է նախորդող գործողություն: Եթե համապատասխան ստորադասական շաղկապները հստակ կերպով արտահայտում են ժամանակի մեջ գլխավոր և երկրորդական նախադասություններում գործողությունների փոխհարաբերությունը, ապա գործածվում է Präteritum ժամանակաձևը: Ասվածը հատկապես վերաբերում է «մինչև, մինչ» իմաստն արտահայտող bevor և ehe շաղկապներին, որոնք իրենց իմաստով արդեն ցույց են տալիս գլխավոր նախադասության գործողության նախորդող վիճակ երկրորդականի նկատմամբ, ինչպես՝

Bevor wir nach Hause fuhren, gab er mir ein paar Anweisungen.

Դրան հակառակ՝ ընդհանուր ժամանակային իմաստով als, wenn («երբ») շաղկապների դեպքում նախորդող գործողությունը արտահայտվում է Plusquamperfekt-ով՝ անկախ այն բանից, թե այն որ նախադասության գործողությունն է՝ գլխավոր նախադասության, թե՞ երկրորդականի: Այս առումով հարկ է նշել գերմաներենի մի կարևոր տիպաբանական առանձնահատկություն. այստեղ գործառնական առավել մեծ հաճախականությամբ բնութագրվում են հատկապես ընդհանուր ժամանակային իմաստ արտահայտող (als, wenn, wie) շաղկապները, որոնք չեզոք են համաժամանակայնության և տարաժամանակայնության իմաստով: Կարելի է ասել, որ այդպիսի գործառնական հաճախականությամբ բնութագրվում է մաս հայերենի «երբ» շաղկապը, իսկ տարբերությունները համաժամանակային և տարաժամանակային գործողությունների միջև արտահայտվում է կերպային ձևերով, ինչպես՝

Երբ մա տուն եկավ, հայրը արդեն *քնած էր*:

Նա տուն էր եկել, երբ հայրը արդեն *քնել էր*:

Ընդհանրապես գերմաներենի անցյալի ժամանակաձևերից գործառնական առավել մեծ հաճախականություն ունի Präteritum-ը, այնու-

հետև՝ Perfekt-ը, իսկ առավել նվազ հաճախականությամբ բնութագրվում է Plusquamperfekt-ը:

Ժամանակակից գերմանագիտությունը դա բացատրում է այն համ-գամանքով, որ Perfekt ժամանակաձևը գերմաներենում զարգացել է ոչ թե ինքնուրույնաբար, այլ լատիներենի ազդեցությամբ, հմնտ.՝ լատ. amare habeo - habe geliebt «սիրել եմ»: Իսկ Plusquamperfekt-ը զարգացել է ավելի ուշ՝ Perfekt-ի հիմքի վրա:

Եղանակի կարգը (die Modi) եղանակավորման լեզվական ավելի ընդ-հանրական կարգի քերականական (ձևաբանական) դրսևորումն է: Այն չունի միակերպ արտահայտություն բոլոր լեզուներում: Հայերենի դիմա-վոր բայերը, այս տեսանկյունից, երկու խմբի են բաժանվում՝ իրացման պլան ունեցողներ և իրականալիության եղանակներ: Գործողության ի-րացումը խոսողի սուբյեկտիվ գնահատման ոլորտից դուրս է: Այն, ինչ կոչվում է «եղանակավորում», նրա մեջ, ըստ էության, բացակայում է: Այդ պատճառով գոյություն ունի տվյալ կարգի ըմբռնման երկու հիմնա-կան մոտեցում. մի դեպքում եղանակի կարգը ներկայացվում է որպես գործողության հարաբերություն իրականության նկատմամբ, մեկ այլ դեպքում՝ որպես խոսողի վերաբերմունք կոնկրետ գործողության նկատ-մամբ: Արդի գերմանագիտության մեջ առավել ընդունված է երկրորդ մո-տեցումը, որը բնորոշ է մաս ավանդական հայագիտությանը: Այդպիսով, ըստ խոսողի հայեցակետի, ներկայացվող գործողությունը կարող է դիտ-վել որպես կատարված, կատարվող կամ կատարվելիք փաստ, իրողու-թյուն, որը բնութագրում է սահմանական (Indikativ) եղանակը: Ըղծական եղանակի (Konjunktiv) համար նույն այդ գործողությունը դիտվում է որ-պես իղծ, ցանկություն կամ որոշակի պայմաններում հնարավոր (անհ-նար), իրականալի (անիրականալի) և այլն: Ինչ վերաբերում է հրամա-յական եղանակին (Imperativ), ապա այն արտահայտում է խոսողի տե-սանկյունով հարկադրաբար, հրամայաբար իրականացվելիք կամ խո-սողի հորդորով իրականալիք գործողություն: Բայի այս երեք եղանակա-յին ձևերից, որոնք բնորոշ են գերմաներենին և հայերենին, նախկինում հայերենի համար առանձնացվում էր մաս պայմանական կամ ենթադ-րական եղանակը, որի համար ժամանակակից հայերենը, ըստ էության, կադապարային ու իմաստագործառական հիմքեր չի տալիս: Մինչև նույն ժամանակ, արդի գերմանագիտությունը, առաջարկելով սահմանականի և ըղծականի առանձնացումը՝ ըստ փաստորեն տեղի ունեցած և իրա-

կանում տեղի չունեցած գործողությունների հակադրության, այդ հակադրությունից դուրս է թողնում հրամայական եղանակը այն հիմնավորմամբ, որ վերջինս իր բնույթով հակադրվում է սահմանականին և ըղձականին և առանձին բերականական կարգ է կազմում:¹ Այսպիսով՝ առաջարկվում է գերմաներենի եղանակային ձևերի հետևյալ հակադրությունը.

ա) Imperativ – Indikativ

Konjunktiv

բ) Konjunktiv – Indikativ

Կառուցվածքային լեզվաբանության տեսակետից այս մոտեցումը հիմնավորվում է նաև այն փաստով, որ Imperativ-ը, ի տարբերություն մյուս երկու եղանակաձևերի՝ ամբողջական հարացույցով օժտված չէ: Այսինքն, եթե Indikativ-ը և Konjunktiv-ը կարող են ունենալ բոլոր հնարավոր ժամանակային և խոնարհման հարացույցային ձևերը, ապա Imperativ-ը բնութագրվում է միայն ներկա ժամանակաձևով և խոնարհման երկրորդ դեմքով:

Սահմանական եղանակը թե՛ գերմաներենում և թե՛ հայերենում բնութագրվում է առավել մեծ գործառական հաճախականությամբ: Ընդ որում, երկու լեզուներում էլ այն գործածվում է ոչ միայն գործողության միանշանակ կերպով հաստատման կամ ժխտման համար, այլև այն դեպքում, երբ խոսողի կողմից առկա է գործողության կատարման ենթադրություն, ինչպես՝

Vielleicht gehen wir an die Uni und warten auf dich.

Գուցե զնանք համալսարան և սպասենք քեզ:

Ընդհանրապես սահմանական եղանակը, ի տարբերություն ըղձականի, համարվում է հակադրության ուժեղ կամ չնշույթավորված անդամը, քանի որ այն, բացի վերը նշված գործառական բարձր հաճախականությունից, բնութագրվում է նաև առավել հստակ իմաստային բաղադրականությամբ: Այսպես, օրինակ, (er) **kommt** բայաձևը ոչ միայն ներկա ժամանակաձև է ներկայացնում, այլև՝ սահմանական եղանակ: Այդպիսով՝ այն պարունակում է կրկնակի տեղեկույթ. նախ, որ գործողությունն իրականում տեղի է ունեցել և ապա՝ որ այն տեղի է ունեցել խոսելու պահին: Կառուցվածքի տեսակետից նույնպես Indikativ-ը ցուցաբեր-

¹ St' u Glinz H., Die innere Form des Deutschen, München, 1995, էջ 111:

րում է յուրահատուկ տիպաբանական բնութագիր: Մասնավորապես այն չունի առանձին ձևակազմական միջոց (ձևույթ), ինչպիսին Konjunktiv-ի -e ածանցն է: Կարևոր է նաև այն համագամանքը, որ Indikativ-ի բոլոր ժամանակաձևերի եղանակային իմաստը անփոփոխ է:

Ըստ Indikativ - Konjunktiv եղանակային հակադրության՝ գերմաներենում կարելի է տարբերակել երեք հիմնական ձևաբանական բնութագրեր՝ ըստ բայաձևերի ձևույթային կազմության (հմմտ. **du komm-st - du komm-e-st**), ըստ ներկայի և մյուս վերլուծական ձևերի դիմային վերջավորությունների (հմմտ. **er komm-t - er komm-e**) և ըստ ներքին թեքման առկայության կամ բացակայության (հմմտ. **du gib-st - du geb-e-st, er kam - er - käm-e**):

Սահմանական եղանակի և ըղձականի միջև, ինչպես վերը նշվեց, գոյություն ունի ժամանակաձևերի լիակատար համապատասխանություն, մյուս կողմից, սակայն, ըստ բովանդակային պլանի՝ դրանք այդքան էլ նույնական չեն. հմմտ.՝

1. Es war Frühling. (**Պարուն էր:**) - անցյալին հարաբերվող սահմանական ձև
2. Ich wollte, es wäre Frühling. (**Կուզեի գարուն լիներ:**) - ներկային հարաբերվող ըղձական ձև

Այս ամենի հաշվառումով, կարելի է ասել, որ գերմաներենի **Konjunktiv (ըղձական) եղանակը**, ընդհանուր առմամբ, արտահայտում է հնարավորություն, իղձ, ցանկություն, ինչը համապատասխանում է հայերենի ըղձական, ինչպես նաև մի շարք հայերենագետների կողմից ընդունվող պայմանական կամ ենթադրական եղանակների արտահայտած իմաստներին: Չնական առումով, սակայն, առկա են այնպիսի տարբերություններ, որ գերմաներենի երկու տարբեր ժամանակաձևերի դիմաց հայերենում ունենում ենք միայն մեկը, ինչպես, օրինակ՝

Hätte ich jetzt mehr Zeit!

Hätte ich damals mehr Zeit gehabt!



**Ունենալի ավելի շատ
ժամանակ:**

Այս առումով գերմաներենի Konjunktiv-ն ունի ժամանակաձևերի մի ամբողջ համակարգ, քանի որ այստեղ, ի տարբերություն Indikativ-ի, գոյություն ունեն եղանակային տարբեր հարաբերություններ, այնպես, որ միևնույն Konjunktiv-ի սահմաններում հակադրվում են տարբեր եղանակային իմաստներ՝ տարբեր ժամանակաձևերով հանդերձ: Բացի այդ,

գործառնության կախված՝ տարբեր ժամանակաձևեր կարող են ցուցաբերել հոմանշային գծեր և այդպիսով փոխարինել մեկը մյուսին: Ընդհանուր առմամբ, եթե ելնենք Konjunktiv-ի «իրականում տեղի չունեցող (չունեցած)» իմաստից, ապա այստեղ կարելի է առանձնացնել երկու տարբեր իմաստային բաղադրիչներ.

ա) իրականում տեղի չունեցող, բայց իրականալի իմաստ, ինչպես՝ Edel sei der Mensch, hilfreich und gut! (Վ. Գյոթե),

բ) իրականում տեղի չունեցող, որպես անիրականալի, ինչպես՝ Wenn ich eine Schwalbe wäre, flög' ich zu dir mein Kind. (Հ. Հայնե)


Այստեղ յուրաքանչյուր եղանակային իմաստ ենթադրում է որոշակի ժամանակային գործառնություն. առաջին դեպքում՝ ներկայի, իսկ երկրորդում՝ անցյալի: Այսպիսով՝ ըստ բացարձակ և հարաբերական ժամանակային ձևերի բաշխման, տարբերակվում են Konjunktiv I և Konjunktiv II ըղձականի ձևերը, որոնցից առաջինը ընդգրկում է Präsens, Perfekt, Futur I, իսկ երկրորդը՝ Präteritum, Plusquamperfekt, Konditionalis I, II ժամանակաձևերը: Ընդ որում, Präteritum-ը և Konditionalis I-ը հանդես են գալիս նաև որպես հոմանիշային ձևեր՝ ներկա - ապառնի ժամանակի արտահայտման համար, իսկ Plusquamperfekt և Konditionalis II-ը՝ անցյալի և ստացվում է այնպես, որ հայերենի ըղձականի մեկ ժամանակաձևի դիմաց գերմաներենում կարող ենք ունենալ մի քանիսը, ինչպես՝

նա գար	er käme (այսօր)
	er würde kommen (վաղը)
	er wäre gekommen (երեկ)
	er würde gekommen (երեկ)

Ուստի գերմաներենի տիպաբանական յուրահատկությունների բացահայտման տեսակետից, հայերենի փաստերի ներգրավումը այստեղ շատ քիչ բան է տալիս: Ընդհանրապես, գերմաներենի Konjunktiv-ը ցուցաբերում է այնպիսի յուրահատուկ գծեր, որ, մեր կարծիքով, ոչ մի լեզու չէ գորու չէ լիովին արտացոլելու դրանք: Հետևաբար ուսումնասիրության լավագույն ձևը այս դեպքում մնում է, այսպես կոչված, «ներքին տիպաբանությունը» կամ լեզվի սեփական փաստերի միմյանց հետ զուգադրումը:

Այսպիսով՝ ժամանակաձևերի գործառնությոն Konjunktiv եղանակում բխում է երկու տարբեր եղանակային պայմաններից՝ իրադարձություն-

ների, երևույթների անմիջական հաղորդում և դրանց ոչ անմիջական (միջնորդավորված) հաղորդում՝ հաղորդվող խոսքի միջոցով: Ասվածը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Ոչ անմիջական հաղորդմամբ Konjunktiv-ի ժամանակաձևերի գործառույթը հիմնված է նրա հետևյալ առանձնահատկությունների վրա.

ա) քանի որ բոլոր ժամանակաձևերի համար ունենք նույն եղանակային իմաստը, ապա կոնկրետ ժամանակաձևի ընտրությունը կախված է բուն ժամանակային հարաբերություններից:

բ) Ժամանակաձևի գործառույթի հիմքում ընկած է հարաբերական ժամանակը, որն, ի տարբերություն սահմանականի, եռանդամ է՝ նախորդող- համընկնող- հաջորդող դրվածքներով:

գ) Ժամանակաձևերի միջև առկա են հետևյալ հոմանիշային հարաբերությունները.

Konj. Präs.	Konj. Perf.	Konj. I, Fut.
Konj. Prät.	Konj. Plusqupf.	Kondit.
(համընկնող դրվածք)	(նախորդող դրվածք)	(հաջորդող դրվածք)

Անմիջական հաղորդմամբ Konjunktiv-ի եղանակային իմաստը, հետևաբար նաև ժամանակաձևերի գործառույթը, ավելի հստակ է: Այստեղ, ելնելով ընդհանուր «իրականում տեղի չունեցած» եղանակային իմաստից բխող «որպես իրականալի» և «որպես ոչ իրականալի» իմաստային բաղադրիչներից, առաջադրվում են միայն երկու ժամանակային հարաբերություններ. համընկնող դրվածք՝ Konj. Prät. և Kondit. I ժամանակաձևերի իրացմամբ և նախորդող դրվածք՝ Konj. Plusqupf. և Kondit. II իրացմամբ. հմմտ.՝

Wenn ich ein Vöglein **wäre**. (Konj. Prät.)

Wenn sie doch **kommen würde**. (Kondit. I)

Morgen **hätte** ich dich unbedingt **ausgesucht**. (Konj. Plusqupf.)

Hans **wäre getroffen worden**, wenn er aufrecht gesessen hätte. (Kondit. II)

Ինչպես տեսնում ենք, գերմաներենի ըղձականի ներկան (Konjunktiv Präsens) տվյալ ժամանակային հարաբերություններից դուրս է գտնվում: Իրականում իր եղանակային իմաստով («որպես իրականալի») այս ձևը իր մեջ ներառում է համընկնող դրվածքի բոլոր ժամանակաձևերը, իսկ հաջորդող դրվածքը գերմաներենում իրացման կոնկրետ ձևեր չունի: Այդուհանդերձ, ելնելով Konj. Präs.-ի «իրականում տեղի չունեցող, սակայն իրականալի» ընդհանուր իմաստից, կարելի է առանձնացնել այս ձևի գործառնության յուրտները: Այդ առումով կարելի է նշել, այսպես կոչված, «ցանկական», ինչպես նաև հրամայական մախադասությունները, որտեղ առանձնանում են նաև «կոչական» ըղձականները, ինչպես՝ Gott helfe ihnen! Անշուշտ, ընդհանուր իմաստի իրացման առումով տարբերությունները մեծ չեն. հմտ.

Man gebe auf Folgendes acht. (պահանջ)

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալի վրա:

Hol dich der Teufel!

Սատանա՛ն քեզ տանի:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում **ենթադրական** կամ **պայմանական** եղանակի իրացման հարցը գերմաներենում, եթե նկատի ունենանք նաև, որ մի շարք հայերենագետների կողմից հայերենի համար այս եղանակը առանձնացվում է: Պայմանական կամ ենթադրական եղանակը, որը, ըստ էության, համընկնում է գերմաներենի Konditionalis-ի հետ, հայ քերականագիտության մեջ բնութագրվում է այսպես՝ «ցույց է տալիս խոսողի հաստատ համոզմունքը, ենթադրությունը խոսքի պահից հետո կամ մի այլ ժամանակակետից հետո գործողության կատարման վերաբերյալ»:¹ Այս եղանակը հայերենում ներկայացվում է երկու համադրական ձևերով (ապառնի, անցյալ): Ենթադրական ապառնու դրական ձևերը կազմվում են ըղձական ապառնու ձևերից՝ **կ-** եղանակիչի հավելումով (**կգրեմ, կկարդամ**), իսկ անցյալի ձևերը՝

¹ Տե՛ս **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 119:

ըղծական անցյալի ձևերից՝ կրկին նույն եղանակիչի օգնությամբ (**կգրեի, կկարդայի**): Պետք է սակայն նկատել, որ ենթադրական կամ պայմանական համարված իմաստավորումները նշված ձևերի հետ էական կապեր չունեն. նրանք առնչություն ունեն այդ ձևերի ռճաշարահյուսական գործառնությունների և համապատասխան առկայացուցիչ տարրերի (բառերի) եղանակավորիչների հետ, ինչպես՝ **եթե, գուցե** և այլն: Այդ պատճառով վերը բերված ձևերը հաճախ քննարկվում են ըղծական եղանակի հարացույցում: Մինչդեռ ժամանակ, ի տարբերություն գերմաներենի, հայերենում ըղծականի եղանակակերպային սահմանագծումները նույնպես որոշակի չեն:

Այսուհանդերձ, ելնելով երկու լեզուների փաստերից, կարելի է ասել, որ ենթադրականի իմաստը հանգում է խոսողի կողմից իրականության սուբյեկտիվ գնահատմանը՝ կախված այն բանից, թե ի՞նչ ձևով է խոսողը տեղեկացված իրերի իրական վիճակի մասին: Այսպիսով՝ իր խոսքում նա արտահայտում է ենթադրություն, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել իրականությանը. հմմտ.՝

Vielleicht ist er schon gesund.

Er ist **wohl** schon gesund.

Հավանաբար (գուցե) նա արդեն առողջ է:

Ուստի ենթադրական եղանակի արտահայտած իմաստի մասն նեղ ըմբռնմամբ ավելի հստակ է դառնում նրա տարբերությունը ըղծականից: Եթե ենթադրությունը պայմանավորված է խոսողի տեղեկացված լինելու հանգամանքով, հետևաբար հնարավորությունը կախված է առավել օբյեկտիվ պայմաններից. հմմտ.՝

1. Er wäre bereits zurückgekehrt, wenn er sich nicht in Berlin aufhalten müssen hätte.

Նա արդեն վերադարձած կլիներ, եթե ստիպված չլիներ մնալ Բեռլինում:

2. Ich hätte es beinahe vergessen, aber mein Vater erinnerte mich daran.

Ես համարյա մոռացել էի, բայց հայրս հիշեցրեց ինձ այդ մասին:

Ինչպես տեսնում ենք, գերմաներենում ևս ենթադրությունը արտահայտվում է համապատասխան եղանակիչ բառերի միջոցով: Ընդ որում, այն կարող է արտահայտվել ստորոգյալով, որն իր մեջ ներառում է եղանակիչ բայ կամ ապառնիի ձևերով: Քանի որ եղանակիչ (մոդալ) բայերը և ապառնիի ձևերը ունեն նաև իրենց հիմնական իմաստը, այդ կերպ

արտահայտված ենթադրական իմաստը լինում է ոչ միանշանակ: Այդ դեպքում համապատասխան իմաստը ճշգրտվում է միայն համատեքստում, և որպես կանոն հայերենում ունենում ենք իրացման ավելի քիչ հնարավորություններ, քան գերմաներենում. հմմտ.՝

Er ist wohl zu Hause.

Er wird (wohl) jetzt zu Hause sein.

Նա հիմա տանը կլինի:

Er dürfte jetzt zu Hause sein.

Er muss jetzt zu Hause sein.

Er scheint jetzt zu Hause zu sein.

Նա պետք է որ տանը լինի:

Այսպիսով, ելնելով համապատասխան համատեքստից, կարելի է տարբերակել ենթադրական ընդհանուր իմաստի երկու հիմնական երանգավորումներ. խոսողի տեղեկացված լինելու տարբեր աստիճաններով պայմանավորված և ենթադրության հիմքի բնույթից բխող: Թե՛ գերմաներենում և թե՛ հայերենում կարելի է տարբերակել ենթադրության (գործողության կատարման հավանականության) երեք աստիճաններ, որոնք գտնվում են երկու եզրային պայմանների միջև՝ բացարձակ հավանականություն և բացարձակ ժխտում: Ընդ որում, չնայած կառուցվածքային տարբերությանը, այս երկու լեզուները գործածում են իրացման միևնույն միջոցները, ինչպիսիք են՝ եղանակավորող բառերը և ապառնիի ձևերը:

Ենթադրության ամենաբարձր աստիճանի դեպքում ունենում ենք այնպիսի իմաստ, որ խոսողն ունի բավականաչափ հիմքեր կարծելու, որ այն, ինչ ինքը հաղորդում է, համապատասխանում է իրականությանը: Այս դեպքում սովորաբար ենթադրությանը հաջորդում է հիմնավորումը, օրինակ՝

Er muss schon zurückgekehrt sein.

Նա պետք է որ վերադարձած լինի:

Ենթադրության միջին աստիճանի դեպքում խոստովն իր կարծիքը չի հիմնավորում և, բնականաբար, գործողության հավանականությունը նվազում է, ինչպես՝

Vielleicht ist er schon zurückgekehrt.

Հավանաբար նա արդեն վերադարձել է:

Երրորդ աստիճանի երանգավորման դեպքում խոստովն ինքը կասկածում է իր հաղորդածի հավանականությանը, սակայն, հակառակ տեսակետ չի ներկայացնում, օրինակ՝

Kaum ist er schon zurückgekehrt.

Հազիվ թե նա վերադարձած լինի:

Այս հարաբերությունները ավելի բարդանում են, երբ ենթադրությունը հիմնվում է ուրիշի խոսքի վրա, քանի որ այդ դեպքում խոստովն ընդգծում է նաև իր տեղեկության աղբյուրը, որը արժևորվում է կրկին համապատասխան ձևախմբման կառույցով: Հայերենն այստեղ գործածում է միջանկյալ կառույցներ, ինչպես՝ «ասում են», «ասում են, թե», «ինչպես ասում են», «պատմում են» և այլն: Գերմաներենը բացի նման ձևերից հաճախ գործածում է sollen մոդալ բայը, ինչպես՝

Er soll schon zurückgekehrt sein.

(Ասում են, որ) Նա պետք է արդեն վերադարձած լինի:

Նույն հանգամանքներում, եթե գործածվում է wollen մոդալ բայը, ապա տեղեկության աղբյուրը արդեն ճշգրտվում և հանգեցվում է որոշակի անձի, ինչը հայերենում արտահայտվում է անուղղակի խոսքով, օրինակ՝

Er will alles mit eigenen Augen gesehen haben.

Նա ասում է, որ ինքը ամեն ինչ տեսել է իր սեփական աչքերով:

(Նա պետք է, որ ամեն ինչ սեփական աչքերով տեսած լինի:)

Ենթադրական իմաստով մյուս կառույցների դեպքում (ինչպես muss - պետք է, glauben - կարծել և այլն) գերմաներենում և հայերենում ունենք նույնական ձևեր և իմաստներ:

Այսպիսով՝ համապատասխան վերլուծությունները ցույց են տալիս, որ ենթադրական իմաստի արտահայտման տեսակետից գերմաներենը ցուցաբերում է ընդհանուր տիպաբանական յուրահատկություններ հայերենի հետ, ինչը, մեր կարծիքով, կրկին պայմանավորված չէ այդ լեզուների ծագումնաբանությամբ, այլ ենթադրական իմաստի համապարփակ բնույթով, որը գերմաներենում ներկայանում է ձևի և բովանդակ-

կույթյան առավել հստակ փոխհարաբերություններով: Սակայն այն առաջացնում է նաև գործառութային խնդիրներ այն պատճառով, որ գերմաներենը, որպես բնական լեզու¹, նշված հարաբերությունները տրամաբանական կատարյալ համամասնությամբ չի արտացոլում:

Հրամայական եղանակը (Imperativ), ինչպես վերը նշվեց, գերմաներենի եղանակային համակարգում երբեմն դիտվում է որպես ոչ լիարժեք կարգ: Այս մոտեցմամբ, սակայն, պարզ չէ հրաման կամ հորդոր արտահայտող նախադասությունների տեղը գերմաներենի եղանակային համակարգում: Քանի որ նման տիպի նախադասությունների հարցում գերմաներենի և հայերենի միջև նկատվում են բավականաչափ ընդհանրություններ, ուստի այստեղ, մի կողմ թողնելով մի շարք վիճելի դրույթներ, կփորձենք վեր հանել վերոհիշյալ իմաստների դրսևորման յուրահատկությունները գերմաներեն լեզվում:

Նախ՝ ասենք, որ հայերենում հրամայական եղանակի առկայությունը հիմնականում չի մերժվում և այն դիտվում է որպես բայական եղանակ, որը արտահայտում է հրամայաբար, հարկադրաբար, հորդորով (երբեմն՝ անհրաժեշտությամբ) իրականալի գործողություն: Չանագանում են **բուն հրամայական** և **հորդորական հրամայական** տարատեսակները: Սովորաբար ընդունվում է, որ բուն հրամայականն ունի անմիջական ապառնիի նշանակություն, գործողության իրականացումը նախատեսվում է հաղորդակցման պահին անմիջականորեն հաջորդող դրվածքում: Այդպիսով, քանի որ հրամայական եղանակի ձևերը գործառությամբ ուղղված են խոսակցին, այդ պատճառով ունեն մեկ՝ երկրորդ դեմք, և քանի որ արտահայտում են իրականացման ենթակա գործողություն, ունեն մեկ՝ ապառնի ժամանակ: Ունեն սուր շեշտ, որ գրությամբ սովորաբար արտահայտվում է, ինչպես՝ **գրի՛ր, կարդա՛, գրեցե՛ք, կարդացե՛ք, մի՛ գրիր, մի՛ կարդա** և այլն:

Ժամանակակից գերմաներենը, բացի ձևական առանձնահատկություններից, ունի մույն իմաստային հնարավորությունները: Այստեղ, սակայն, բացի եզակիի և հոգնակիի երկրորդ դեմքից, առկա է նաև առանձին քաղաքավարական ձև, որը գործածվում է ինչպես մեկ անձի, այնպես էլ մի քանիսին դիմելիս. հմմտ.՝

¹ Բնական լեզուները, ի տարբերություն արհեստականների, երբեք բացարձակ համամասնական համակարգեր չեն ունենում:

Schreib!- գրի՛ր

Schreibt!

գրե՛ք

Schreiben Sie!

Հորդորական հրամայականը երկու լեզուներում էլ, ունենալով ընդհանուր իմաստային դրսևորումներ, իրացվում է, սակայն տարբեր ձևերով ու կառույցներով: Հմմտ.՝

Gehen wir ins Kino!

Wollen wir ins Kino gehen!

(Եկե՛ք) գնանք կինո:

Lasst uns ins Kino gehen!

Կախված շարժում ցույց տվող բայի առկայությունից՝ հայերենն ունի մաս ներկայի իմաստով անցյալ ժամանակային գործածության հնարավորություն, ինչպես՝ **գնացի՛նք կինո:**

Նկատելի մմանություններ այդ լեզուները ցուցաբերում են հրամայական ներկայի գործառնություն, երբ հրամանը ներկայացվում է այնպիսի իմաստով, որ այն բացարձակ է և քննարկման ենթակա չէ, օրինակ՝

„Sie können gehen, Herr Schmidt,“ sagte der Direktor.

Կարող եք գնա՛լ, պարոն Շմիդտ, ասաց տնօրենը:

Գերմաներենում հրամայականի իրացման տարբեր երանգավորումները, ինչպես նախորդ դեպքերում, հիմնականում համատեքստային պայմանավորվածություն ունեն, որն արտահայտվում է տարբեր կարգի եղանակիչ բառերի գործածությամբ, օրինակ՝

Gib sofort das Buch her! - **Ամիջապես տու՛ր գիրքը:**

Gib mal das Buch her !- **Ապա, տու՛ր գիրքը:**

Gib mir bitte das Buch! - **Խնդրում եմ, տու՛ր գիրքն ինձ:**

Ինչպես տեսնում ենք, հրամայական եղանակը, ի տարբերություն մյուս եղանակային ձևերի, թե՛ հարացույցային և թե՛ շարակարգային բնութագրերով իսկապես կարելի է դիտել որպես ոչ լիակատար կարգ: Մյուս կողմից՝ տարաժամանակյա փաստերը ցույց են տալիս, որ այն ամենահին բայական կարգերից մեկն է, որը, սակայն, ժամանակի ընթացքում փոխել է միայն իր արտահայտման ձևերը, իսկ իմաստային առու-

մով փոփոխությունները մեծ չեն: Այս հանգամանքը ևս պետք է դիտել գերմաներենի ընդհանուր տիպաբանական յուրահատկություններից մեկը:

Քայասեռի կամ բայական սեռի (die Genera verbi) քերականական կարգը բայի կարևորագույն հատկանիշներից է, իսկ գերմաներենի համար այն ունի առաջնային նշանակություն, քանի որ դրանից բխող խնդրառությունը այս լեզվում նախադասության կազմության համար ունի մեծ նշանակություն: Շատ դեպքերում բայի սեռի էությունը ի հայտ է գալիս հատկապես այլ լեզուների հետ զուգադրելիս: Այդ պատճառով այստեղ նշված կարգի առանձնահատկությունները կփորձենք պարզել հայերենի համապատասխան փաստերի հետևողական ներգրավմամբ: Հարկ է նշել, որ այս կարգը գրավել է դեռ անտիկ շրջանի քերականների ուշադրությունը: Մասնավորապես Դիոնիսիոս Թրակացու մոտ դրա համար գտնում ենք **տրամադրություն** տերմինը, ըստ որի, առանձնացվում է բայի սեռի երեք տեսակ՝ **ներգործական, կիր և միջին**: Հետագայում՝ տարբեր մոտեցումներից հետո, Մ. Աբեդյանը, որը գերմանական դպրոցի հետևորդ էր, հայերենի համար առանձնացրեց **անցողական** (verbum transitivum) և **անանցողական** (verbum intransitivum) բայերի տեսակները՝ առաջին դեպքում ուղիղ խնդիր և երկրորդում անուղղակի խնդիր պահանջելու տրամաբանությամբ: Իրենց հերթին անցողականները բաժանվում են երկու խմբի՝ **ներգործական բայեր**, որոնց ենթական ինքն է կատարում գործողությունը և **պատճառական բայեր**, որոնց ենթական պատճառ է դառնում մի ուրիշին, որպեսզի նա կատարի գործողությունը: Անանցողական բայերն իրենց հերթին բաժանվում են **կրավորական** (որոնք ներգործող խնդիր են ունենում) և **չեզոք** (որոնք ներգործող խնդիր չեն ունենում) խմբերի: Այսուհանդերձ, գոյություն ունեն մաս տարբեր մոտեցումներ պատճառական բայերի սահմանման, մեկ այլ երրորդ՝ **չեզոք սեռի** բայերի առանձնացման, ինչպես նաև, այսպես կոչված, անդրադարձ սեռային առման գոյության վերաբերյալ: Ասվածը վերաբերում է նաև գերմանական քերականագիտությանը, որտեղ հիմնականում անցողական բայերին վերագրվում են ներգործական (Aktiv) և կրավորական (Passiv) սեռերը, իսկ անանցողականներին՝ վիճակի կրավորական (Stativ, Zustandspassiv) սեռը, թեև վերջինիս նկատմամբ մույնպես միանշանակ մոտեցում գոյություն չունի: Վերջին տարիներին գերմանագիտական գրականության մեջ առանձին քննարկման նյութ է մաս անդրադարձ կրավորականի (Reflexivpassiv) հարցը:

Հարկ է նշել, որ բայաստեռի բնութագրման համար կարևոր է հաշվի առնել հետևյալը. նախ բայիմաստի (գործընթացության գաղափարի) որոշակի տեսանկյունն է գործողության ոլորտ ներքաշված, նրա մեջ առնված առարկայի (կամ առարկաների) նկատմամբ, առարկա, որ կարող է լինել կամ գործողության սուբյեկտը կամ նրա օբյեկտը. երկու դեպքերում էլ առարկան լիովին առնված է գործընթացայնության մեջ, թեև բացառված չէ օբյեկտի մասնակի ներառում:

Բայաստեռը էապես ձևաբանական՝ բայական կարգ է: Այն դրսևորվում է իբրև ուրույն քերականական իմաստի և համապատասխան արտահայտության միջոցների միասնություն: Իմաստային պլանում, ինչպես վերը նշվեց, ենթադրվում է այնպիսի գործողություն, որտեղ պարտադիր է ինչպես գործող անձի (կամ առարկայի), այնպես էլ ներգործվող անձի (կամ առարկայի) առկայություն, ինչը բնորոշ է անցողական բայերին: Շնորհիվ սեռային ձևերի՝ համապատասխան գոյականները նախադասության մեջ կարող են ունենալ երկակի դեր՝ կա՛մ որպես ենթակա, կա՛մ էլ որպես խնդիր: Անանցողական բայերի դեպքում ներգործական և կրավորական սեռերի հակադրությունը դրսևորվում է միայն եզակի թվի 3-րդ դեմքում, այսպես կոչված, անենթակա նախադասություններում, ինչպես՝

Ihm wurde sofort geholfen.

Նրան անմիջապես օգնություն ցույց տրվեց:

Ընդհանուր առմամբ, օբյեկտիվ գործընթացների ներկայացման հնարավորությունները բայի սեռի միջոցով կախված են համապատասխան բայական ձևերի երկու հատկանիշներից.

ա) Գործողության ուղղության փոփոխության հնարավորություն՝ ըստ ներակա կամ իրական ենթակայի. ներգործական սեռի դեպքում ենթական ակտիվ գործող կամ գործողության կրողն է, այսինքն, գործողությունը կենտրոնախույս բնույթի է, իսկ կրավորականի դեպքում ենթական գործողության կրողն է, այսինքն՝ գործողությունը կենտրոնաձիգ է: Ասվածը առավել ակնառու է Aktiv → Passiv փոխակերպումներում, ինչպես՝

Er trifft das Ziel. → Das Ziel wird von ihm getroffen.

բ) Գործողությանը մասնակից անձանց բացառում (չհիշատակում), որի հիման վրա տարբերակվում են երկու տիպի կրավորական կառույցներ. ենթակայով Passiv ձևեր, որոնք կազմվում են միայն անցողական

բայերով, իսկ ենթական այստեղ ցույց է տալիս գործողության կրողին, ինչպես՝ Die Frau wurde von den Nachbarn zu Bett getragen (**Կինը հարևանների կողմից տեղափոխվեց անկողին**) և անենթակա Passiv ձևեր, որոնք կազմվում են ինչպես անցողական, այնպես էլ անանցողական բայերով, իսկ բացառումը վերաբերում է գործող անձին, ինչպես՝ Es wird hier nicht geheizt կամ Hier wird nicht geheizt. (**Այստեղ չի տաքացվում**):

Նշենք, որ գործողի բացառման հնարավորությունը գերմաներենի կրավորական ձևերի կարևոր առանձնահատկությունն է և շատ դեպքերում հենց այդ հնարավորությամբ է պայմանավորված համապատասխան կրավորական կառույցի ընտրությունը: Այսուհանդերձ, խոսողի հիշատակումը կամ չհիշատակումը ենթակայով Passiv ձևերում դրանց հիմնական նշանակությունը չի փոխում:

Այս ամենով հանդերձ, կարող ենք սահմանել, որ եթե անցողական բայով արտահայտված ստորոգյալի դեպքում տրված է ենթական, ապա գործածվում է ներգործական ձև, իսկ եթե որպես այդպիսին խնդիրն է, ապա գործածվում է կրավորական ձև: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ նշված երկրորդ դեպքի համար չի բացառվում նաև ներգործական ձևի կիրառումը, երբ գործողության խնդիրը արտահայտվում է բառերի դասավորությամբ, հնչերանգով կամ հատկապես գերմաներենին բնորոշ հոդի գործածությամբ. հմնտ.՝

1. Mein Bruder wurde von Hans geretet.

Իմ եղբայրը փրկվեց Հանսի կողմից:

2. Meinen Bruder hat Hans geretet.

Իմ եղբորը փրկեց Հանսը:

Հայերենում, թեև չի բացառվում նաև առաջին ձևի գործառնությունը, սակայն առավել գործածական է երկրորդը:

Այսպիսով՝ հնարավոր են ոչ միայն միևնույն փաստի արտահայտման սեռային տարբերակներ, այլև հոմանիշ ձևեր, այսինքն՝ նախադասություններ, որտեղ բայ - ստորոգյալի սեռային ձևերի դեպքում արտահայտվում է ոչ միայն միևնույն փաստը, այլև միևնույն հաղորդակցական նպատակը:

Եթե հայերենում ներգործական և կրավորական բայաձևերի հակադրությունը արտահայտվում է հիմնականում մասնիկավորմամբ (**սիրել - սիրվել, խաղացնել - խաղացվել**) և հազվադեպ միայն վերլուծա-

կան կաղապարով (**բերել - բերել տալ**), ապա գերմաներենում ունենք առավելապես վերլուծական ձևեր: Ըստ էության, կրավորականները նկարագրական ձևեր են և կազմվում են անցողական բայերով՝ միևնույն սկզբունքով. werden օժանդակ բայի համապատասխան ժամանակային ձևով և խոնարհվող բայի Partizip II-ով: Այսպիսով, ի տարբերություն հայերենի, գերմաներենի նշված կազմությունները կերպի նկատմամբ չեզոք են: Միևնույն ժամանակ երկու լեզուների միջև առկա է իմաստների համարժեք փոխանցում. ինչպես՝

wurde gebaut - **կառուցվեց**

wird gebaut werden - **կառուցվելու է**

soll (kann) gebaut werden - **պետք է կառուցված լինի**

կարող է կառուցված լինել և այլն:

Գերմանագիտության մեջ առանձին խնդիր է, ինչպես վերը նշվեց, այսպես կոչված, վիճակի կրավորականի (Zustandspassiv) հարցը: Խնդիրն այն է, որ այս կառույցը ձևական առումով ունի ներգործականի տեսք, սակայն արտահայտում է կրավորականի իմաստ. ինչպես՝ Die Antwort ist gefunden. (**Պատասխանը գտնված է:**) կամ Die Tür war geöffnet (**Պուռը բացված էր:**), որոնք հայերենում այդ իմաստով էլ արտահայտվում են: Այս դեպքում դրան հակադրվում է բուն կրավորականը՝ որպես ընթացքի կրավորական (Vorgangspassiv): Համեմատելով հայերենի համապատասխան ձևերի հետ՝ կարելի է կարծել, որ, իսկապես, այդ վիճելի ձևերը կրավորական են, քանի որ դրանք հայերենում արտացոլվում են որպես այդպիսիք ոչ միայն բովանդակությամբ, այլև ձևով: Խնդիրը, սակայն, հանգում է ոչ միայն տվյալ կազմությունների ձևին և բովանդակությանը, այլև այն բանին, թե արդյո՞ք հնարավոր է դրանք հատկացնել գերմաներենի բայական համակարգին և այդպիսով նաև այն դիտել որպես առանձին բայական սեռի տեսակ: Կարծում ենք, որ այս առումով իրավացի են այն լեզվաբանները (Մ. Գուխման, Վ. Ադմոնի և այլք), որոնք բնութագրմամբ sein + Partizip II կազմությունը ոչ թե վերլուծական ձև է (ինչպես սովորական կամ բուն կրավորական werden + Partizip II վերլուծական ձևն է), այլ միայն շարահյուսական արժեքով բառակապակցություն կամ անվանական ստորոգյալ, որտեղ sein օժանդակ բայը հանգույցն է, իսկ Partizip II դերբայը՝ ստորոգելին: Բացի այդ, sein + Partizip II կառույցին պակասում է վերլուծական ձևի ամբողջա-

կանությունը: Իսկ սովորական werden + Partizip II ձևի մեջ բաղադրիչները կորցնում են իրենց առաջնային իմաստը և դառնում են մեկ դարձվածային ամբողջություն: Նույն մոտեցմամբ, սակայն, sein օժանդակ բայը և Partizip II դերբայը համապատասխան կազմություններում վերոհիշյալ առաջնային իմաստները պահպանում են: Պատճառը, ընդհանուր առմամբ, հանգում է Partizip II դերբայի բազմիմաստությանը, ինչպես նաև նրա տարբեր գործառնական հնարավորություններին: Մասնավորապես այն կարող է ծառայել թե՛ ժամանակային և թե՛ եղանակային ձևերի կազմությանը:

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես վերը նշվեց, գերմաներենի ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները արտահայտվում են նրա կառուցվածքային ինչպես նաև շարադասական - շարահյուսական բնութագրերով:

Հայտնի է, որ կառուցվածքային տիպաբանության հիմնադրույթները մշակվել են դեռ 18-րդ դարում: Այդ ժամանակ անգլիացի տնտեսագետ Ա. Սմիթը և գերմանացի գիտնական Ա. Շլեգելը տարբերակում են լեզուների համադրական (սինթետիկ) և վերլուծական (անալիտիկ) կառուցվածքային տիպերը: Այս տարբերակման հիմքում մի շարք հայտնի լեզուներում քերականական կարգերի իրացումն է ձևաբանորեն ածանցների, կամ էլ, ըստ շրջասույթի, տարբեր բառերի միջոցով: Այս առումով, համեմատելով die Werke Goethes սեռական որոշիչը die Werke von Goethe նախդրային կառույցի կամ էլ dem Goethe seine Werke դերանվանական որոշիչ հետ, կարող ենք արձանագրել, որ առաջինը համադրական, իսկ մյուս երկուսը վերլուծական կազմություններ են:

Նշված մոտեցումը այսօր էլ կիրառվում է ժամանակակից տիպաբանության կողմից, թեև այստեղ գոյություն ունեն դեռ մի շարք խնդիրներ, որոնք վերջնականապես պարզաբանված չեն: Ասվածը վերաբերում է բառի և ձևույթի, առանձին լեզվական տիպերի ու համադրական և վերլուծական կազմությունների փոխհարաբերություններին, ինչպես նաև

համադրման տարբեր աստիճանների սահմանման հնարավորությանը և այլն:

Այստեղ, նկատի ունենալով, որ լեզվաբանության մեջ չկա միասնություն բառի բնորոշման հարցում, կարելի է բավարարվել այն սահմանմամբ, որ ձևույթը լեզվի նվազագույն իմաստակիր միավորն է, իսկ բառը, բաղկացած լինելով մեկ կամ ավելի ձևույթներից, բնութագրվում է ձևաբանական կայունությամբ և շարահյուսական շարժունակությամբ: Ինչպես վերը բերված օրինակում հնարավոր չէ սեռականի –s վերջավորությունը նախորդի Goethe բառին կամ դրվի Werke բառի վերջում այն դեպքում, երբ ամբողջ Goethes ձևը կարող է դրվել Werke բառից հետո (հողի դուրս մղմամբ) կամ էլ՝ դրանից առաջ:

Հաջորդ խնդիրը վերաբերում է խառը տիպի լեզուներին, որոնք միաժամանակ ցուցաբերում համադրական և վերլուծական յուրահատկություններ: Տվյալ դեպքում կարևոր է, թե կոնկրետ լեզվում ի՞նչ տիպի բնութագրերն են գերիշխող: Այսպես, օրինակ, ժամանակակից հայերենում գերիշխում է համադրական տարրը կամ լատիներենում համեմատաբար համադրականությունն ավելի ուժեղ է արտահայտվում քան գերմաներենում, իսկ վերջինս իր հերթին նույն բնութագրերով ավելի ուժեղ է, քան անգլերենը և այլն: Լեզուների պատմական փոփոխությունների դիտարկումը ցույց է տալիս, որ մշտապես դրանցում տեղի է ունենում անցում համադրական տիպերից վերլուծականի և հակառակը: Ասվածը հատկապես ակնառու է լատիներենի օրինակում, երբ առավել համադրական տիպի դասական լատիներենից զարգացել է վերլուծական տիպի, այսպես կոչված «ժողովրդական» կամ վուլգար լատիներենը, իսկ վերջինից՝ ժամանակակից ֆրանսերենը՝ որպես համադրական տիպի լեզու:

Գերմաներենի փաստերի վրա սահմանվում է նրա խառը՝ համադրական - թեքական, ինչպես նաև վերլուծական - անջատական կամ ընդհանրացնելով՝ համադրական - վերլուծական տիպը: Դեռ Ֆ. Ֆինկը գերմաներենի այս բնութագիրը հիմնավորում էր այն հանգամանքով, որ այստեղ թեքումը առավելապես արմատական է, իսկ հիմքի կազմում այն հազվադեպ է հանդիպում: Այս երևույթի ակնհայտ լինելու հանգամանքով է պայմանավորված գերմաներենում ձայնավորական հերթազարկության (Ablaut) տարբեր ձևերի սահմանումը, որը չափանիշ է ծառայում նաև այլ լեզուներում նման փաստերի մեկնաբանման համար: Այս-

պես, օրինակ, հիմք ընդունելով գերմաներենի բայական համակարգում Ablaut-ի դրսևորումները (geben - gab, lesen - las, gehen - ging և այլն), կարելի է նման երևույթ սահմանել հայերենի գոյականի համակարգում (**տուն - տան, սեր - սիրո, հայր - հոր** և այլն): Ընդհանուր առմամբ, գերմաներենի քերականության մեջ, ըստ կառուցվածքային առանձնահատկությունների, կարելի է առանձնացնել քերականական կարգերի իրացման երկու ձևաբանական հնարավորություններ: Առաջինը վերաբերում է այն յուրահատկությանը, որ մեկ կամ մի քանի միագործառույթ և բազմագործառույթ ձևությամբ հանդես են գալիս որպես ինքնին չփոփոխվող արմատական ձևերի վերջավորություններ, ինչպես, օրինակ, համապատասխան ժամանակաձևի արտահայտման համար sag-t, sag-te ձևերը կամ գոյականի հոգնակի թվի արտահայտման համար das Kind - die Kind-er տիպի ձևերը: Այս հնարավորությունը բացի «հիմքային» թեքումից բնութագրվում է նաև որպես «ածանցական» թեքում: Երկրորդ հնարավորության դեպքում, քերականորեն փոփոխվելիս, արմատի կազմությունը նույնպես փոխվում է: Այստեղ արմատը, անկախ երկրորդական ձևությունների (վերջավորությունների) քանակից և գործառույթից, ենթարկվում է ձայնավորական և բաղաձայնական փոփոխությունների. համեմատենք, օրինակ, (er) sing-t և sang ձևերը, որտեղ Ablaut-ը ծառայում է անցյալ կատարյալի արտահայտմանը կամ (der) Gast - Gäst-e, որտեղ հոգնակի թվի արտահայտման միջոցը քերականացված ձայնափոխությունն (Umlaut) է: Չնակազմության այս միջոցը կոչվում է ներքին (կամ արմատի) թեքում (Wurzelflexion):

Հարկ է նշել, որ թե՛ ածանցական և թե՛ արմատական թեքման ժամանակ, ըստ կառուցվածքային յուրահատկության, ունենք համադրականություն, քանի որ երկու դեպքում էլ այդ փոփոխությունները տեղի են ունենում միևնույն բառի կազմում: Միևնույն ժամանակ նման յուրահատկությունները հնարավորություն են տալիս համադրականության ներսում տարբերակել նվազագույնը երկու այնպիսի աստիճաններ, որոնք բխում են ձևակազմության ձևաբանական համապատասխան բնութագրերից: Այդպիսով՝ արմատական թեքմանը կարելի է ձևաբանորեն ավելի ամբողջականություն կամ համադրականության ավելի բարձր աստիճան վերագրել, քան ածանցական թեքմանը, քանի որ առաջին դեպքում տեղի է ունենում իրական բառափոխություն, իսկ երկրորդում՝ միայն մասնիկավորում:

Անշուշտ, միայն ձևակազմական միջոցների սահմանումը բավարար չէ լեզվի ամբողջական տիպաբանական բնութագրի համար, քանի որ, ի վերջո, դրանք ծառայում են համապատասխան քերականական իմաստների արտահայտմանը: Ուստի գերմաներենի ձևաբանական առանձնահատկությունների ամբողջական տիպաբանական բնութագիրն ակնառու է վերը ներկայացված քերականական կարգերի վերլուծության հաշվառումով:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գերմաներենի շարահյուսական առանձնահատկությունների պարզաբանման համար կարևոր նշանակություն ունի լեզվում համադրական ձևերից վերլուծական կազմությունների անցման օրինաչափությունների սահմանումը: Եթե համեմատենք, օրինակ, Kantstudien, Frechheit և Kindlein ձևերի իրացման հնարավորությունները որպես Studien zu Kant, freche Tat և kleines Kind կազմությունների հետ, ապա կտեսնենք, որ, ի տարբերություն ածանցման, խոսքն այստեղ ոչ թե ձևաբանական կամ շրջասության ձևերի մասին է, այլ հիմքակազմության, որն, անշուշտ, առկա է ածանցումից: Այս տեսակետից, գերմաներենը կրկին ցուցաբերում է համադրականությամբ և վերլուծությամբ բնորոշվող խառը տիպի բնութագրեր՝ համադրական տարրերի գերակայությամբ: Ըստ այդմ՝ կարելի է տարբերակել հետևյալ կառույցները.

ա) Տարբեր բառերից կազմված բարդություններ, ինչպես՝

Lehr - buch, Kant - studien:

բ) Տարբեր բառերի բաղադրություն կամ ձուլում (Kontamination), ինչպես՝ Kurlaub - Kur + Urlaub:

գ) Բառի ածանցում համապատասխան տիպական ածանցի օգնությամբ, ինչպես՝ Frechheit, herz-lich և այլն, որտեղ մտնում են նաև փոքրացուցիչ մասնիկները (ինչպես՝ Kind-lein, Herz-chen) և նախաձանցային ձևերը (Un-sinn, ver-legen):

դ) Հապավական ձևերը, ինչպես՝ Bus (Omnibus-ից), Uni (Universität-ից) և բուն հապավումները՝ TÜV - Technischer Überwachungsverein կամ EDV - Elektronische Datenverarbeitung և այլն:

Շարահյուսական նվագագույն կառույցների (բառակապակցությունների) տիպաբանության հիմնադրույթները մշակվել են անցյալ դարի 50-ական թվականներին ֆրանսիացի լեզվաբան Լ. Տենիերի կողմից: Վերջինս իր ուշադրությունը կենտրոնացնում էր գոյական + ածական տիպի կառուցվածքներին, որտեղ, ըստ էության, առկա են երկու շարահասական հնարավորություններ, կա՛մ ածականը նախորդում է գոյականին (հայ. **կարմիր վարդ**, անգլ. red rose, գերմ. rote Rose) կա՛մ՝ հաջորդում (ֆրանս. rose rouge): Առաջին դեպքում ունենք, այսպես կոչված, «կենտրոնաձիգ», իսկ երկրորդում՝ «կենտրոնախույս» կազմություն: Ընդ որում, առանձին լեզուներում հնարավոր են այդ կազմությունների երկու տիպերը միաժամանակ, ինչպես, օրինակ՝ գերմ. rote Rose և Röslein rot: Այսինքն՝ այս մոտեցմամբ կրկին գերմաներենը խառը տիպի լեզու է:

Ամերիկացի լեզվաբան Ջ. Գրինբերգը ավելի ուշ զարգացրեց շարահյուսական կառույցների տիպաբանության մի նոր սկզբունք, որի հիմքում ոչ թե անվանական կառույցներն են, այլ նախադասության ամբողջական նվագագույն կառուցվածքը՝ ըստ երեք բաղադրիչների՝ V- բայ (ստորոգյալ), S - ենթակա և O - խնդիր: Այս տարրերը տարբեր լեզուներում կարող են իրացվել տարբեր հաջորդականությամբ, իսկ ընդհանուր առմամբ, հնարավոր են իրացման վեց հնարավորություններ: Այս առումով գերմաներենը ցուցաբերում է շարահյուսական կառուցվածքի իրացման հարաբերական ազատություն, քանի որ այստեղ առկա է հիշյալ կառուցվածքի հետևյալ հնարավորությունները. 1) SVO - Karl schreibt Gedichte, 2) OVS - Gedichte schreibt Karl (հուզական ձև), 3) VSO - Schreibt Karl Gedichte (հարցական ձև), 4) VOS - Schreibt Gedichte Karl (հարցական - հուզական ձև), 5) SOV - (երկրորդական նախադասության կառուցվածք) ..., dass Karl Gedichte schreibt, 6) OSV - (հարաբերական տիպի երկրորդական նախադասության կառուցվածք) [Gedichte], die Karl schreibt: Այլ լեզուներում, ինչպես, օրինակ, հայերենում հիշյալ կազմություններից հնարավոր են միայն SVO, SOV, իսկ հազվադեպ՝ VOS, VSO կառույցները:

Միևնույն ժամանակ սերումնային քերականության կողմից փորձ է արվում հիշյալ կազմությունները քննարկել խորքային կառուցվածքի տեսակետից, այսինքն՝ սահմանել այն տարրերի կայուն և պարտադիր հաջորդականությունը, որն առկա է կոնկրետ լեզվում: Խոսքն այստեղ ենթակայի և խնդրի փոխհարաբերության մասին է, որտեղ ելակետային է այն դրույթը, որ նախադասության ոչ նշույթավորված (կամ սովորական) կառուցվածքի դեպքում ենթական նախորդում է խնդրին: Այսպիսով՝ քննարկման առարկա են դառնում միայն VSO, SVO և SOV տիպի կազմությունները:

Այս մոտեցմամբ, սակայն, գերմաներենի շարահյուսական առանձնահատկությունների վերաբերյալ տեսակետները իրարամերձ են: Այդ պատճառով տիպաբան - լեզվաբանները հիմնականում սահմանափակվում են միայն պատմողական նախադասության կառուցվածքով, ըստ որի՝ գերմաներենին բնորոշ է SVO շարահյուսական կաղապարը: Նման կաղապար կարող ենք սահմանել նաև ժամանակակից հայերենի և սլավոնական լեզուների համար, իսկ VSO կաղապարով բնութագրվում են արաբերենը, պոլինեզյան լեզուները, ինչպես նաև հին հայերենը. հմմտ.՝

Եւ լուեալ Արտաշիսի գայսպիսի իմաստուն բանս, գնաց յեզր գետոյն:

Ավելի ուշ մի շարք տիպաբաններ (Ա. Հոկինս, Վ. Լեհման, Թ. Վենեման և այլք) Գրինբերգի եռանդամ շարահյուսական կաղապարը փոխարինեցին երկանդամ (VO կամ OV) կաղապարով, ելնելով այն բանից, որ նախադասության ընդհանուր կաղապարի համար կարևոր է միայն ստորոգյալի և համապատասխան խնդրի փոխհարաբերությունը, իսկ ենթական կայուն - անփոփոխ բաղադրիչ է՝ թե՛ իմաստի և թե՛ գործառույթի ու կազմության տեսակետից: Ընդ որում, նախկին VSO և SVO կաղապարների փոխարեն գործածվող VO-ն, որտեղ խնդիրը դիտվում է որպես բայի բնորոշման ցուցիչ, համարվում է առաջընթաց հաջորդականություն, իսկ OV-ն՝ հետընթաց: Այսպիսով՝ առաջընթաց տիպի կաղապարը ենթադրում է NA (անուն+հատկանիշ կամ որոշիչ) հաջորդականություն, որտեղ նկատի է առնվում նաև NG (nomen+ Genitivattribut) կազմությունը և որտեղ ի հայտ են գալիս նաև խնդիրներ ու կապեր, իսկ հետընթացի դեպքում ունենք բային նախորդող խնդրի կամ AN, GN հաջորդականություն, որտեղ ի հայտ են գալիս հետադրություններ: Այս բոլոր յուրահատկությունների ընդհանրացմամբ՝ ունենում ենք շարահյու-

սական երկու կաղապարներ՝ VX և XV, որտեղ X-ը ներկայացնում է խնդրի իրացման տարբեր հնարավորությունների ամբողջությունը:

Այս մոտեցումը, որը կարծես ավելի է ընդլայնում կոնկրետ լեզվին բնորոշ շարահյուսական կաղապարի սահմանման հնարավորությունները, գերմաներենի նկատմամբ գործածելիս, սակայն, կրկին միանշանակ արդյունք չի տալիս այն պատճառով, որ ժամանակակից գերմաներենը ցուցաբերում է թե՛ VO և թե՛ OV կաղապարի բնութագրեր: Ասվածը վերաբերում է նաև սեռական որոշիչի դիրքին, որը նույնպես կարող է ունենալ և՛ մախորդող, և՛ հաջորդող դիրք. հմմտ.՝ *das Fell des Pudels* և *des Pudels Kern*: Այստեղ պետք է նշել նաև մախորդների և հետադրությունների իրացման միևնույն հնարավորությունները, ինչպես՝ *auf dem Berg - den Berg hinauf* կամ *wegen des Berges - des Berges wegen* և այլն:

Տիպաբանության տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև, այսպես կոչված, «շրջանակային կառույցների» (*Klammerkonstruktionen*) ուսումնասիրությունը: Այստեղ խոսքը վերաբերում է այնպիսի կառույցներին, որոնք կազմում են շարահյուսական մի ամբողջություն և միմյանցից բաժանվում են մախադասության այլ անդամների միջև ներթափանցմամբ: Այսպես, օրինակ, բայի շրջանակային կառույցի համար կարելի է տարբերել երեք հնարավորություն. ա) ներթափանցում բայի թեքվող և չթեքվող ձևերի միջև, ինչպես՝ *[Er] hat [die Werke Goethes bereits in seiner Jugend] gelesen*, բ) ներթափանցում բաղադրյալ բայի տարբեր մասերի միջև, ինչպես՝ *[Er] lernte [die Werke Goethes bereits in seiner Jugend] kennen*, գ) ներթափանցում թեքվող բայի և բայի լրացման միջև, ինչպես՝ *[Er] las [aus Goethes „Leiden des jungen Werthers“] vor*:

Անվանական շրջանակային կառույցներում կարելի է տեսնել ներթափանցում հոդի և համապատասխան գոյականի միջև, ինչպես՝ *die [für die deutsche Literatur - wie Geistesgeschichte bedeutsamen und in aller Welt gelesenen] Werke [Goethes]*, ներթափանցում մախադասության բաժանարար տարրերի (շաղկապների, հարաբերական դերանունների և այլն) միջև, ինչպես՝ *[die Tatsache], dass [er die Werke Goethes bereits in seiner Jugend] las, kām [die Werke Goethes] welche, [er bereits in seiner Jugend] las* և այլն:

Նշված կառույցների պարզաբանումը հնարավորություն է տալիս առավել ճշգրտորեն ներկայացնելու Ջ. Գրինբերգի վերոհիշյալ շարահյու-

սական կաղապարները և դրանք տեղափոխել գերմաներեն լեզվի ուրտ: Այդպիսով, ըստ հնարավոր շրջանակային կառույցների, գերմաներենի համար կարող ենք ճշգրտել հետևյալ վեց շարահյուսական կաղապարները. 1) SVfinOVinf (նախկին SVO-ի փոխարեն), ինչպես՝ Karl hat Gedichte geschrieben. 2) OVfinSVinf (նախկին OVS-ի փոխարեն), ինչպես՝ Gedichte hat Karl geschrieben. 3) VfinSOVinf (նախկին VSO-ի փոխարեն), ինչպես՝ Hat Karl Gedichte geschrieben? 4) VfinOSVinf (նախկին VOS-ի փոխարեն), ինչպես՝ Hat Gedichte er geschrieben, [Karl]. 5) SOVinfVfin (նախկին SOV կաղապարի երկրորդական նախադասության կազմություն), ինչպես՝ [...], dass Karl Gedichte geschrieben hat. 6) OSVinfVfin (նախկին OSV կաղապարի խնդրին վերաբերող հարաբերական նախադասության կազմություն), ինչպես՝ [Gedichte], die Karl geschrieben hat.

Նոր բարձր գերմաներենի շարահյուսությունը պատմականորեն մույնպես բնութագրվում է հարաբերական ազատությամբ, քանի որ այստեղ հնարավոր են շեղումներ նշված շրջանակային կառույցների կազմության կանոններից: Նման, այսպես կոչված, «շրջանակագերծումների» էությունն այն է, որ նախադասության այն տարրերը, որոնք սովորաբար գտնվում են համապատասխան շրջանակաձև կառույց կազմող միավորների միջև, իրենց դիրքը փոխում են:

Այդ փոփոխությունները նկատվում են հատկապես այն դեպքերում, երբ համապատասխան շրջանակային կառույցը սովորականից ավելի է ծավալվում և դրա սահմանները աղոտանում են: Ասվածը հատկապես վերաբերում է բայի շրջանակային կառույցներին, ինչպես, օրինակ՝ Er hat in seiner Jugend gelesen die Werke von Lessing, Goethe und Schiller, ինչը ի հայտ է գալիս նաև երկրորդական նախադասության շրջանակային կառուցվածքում. հմմտ.՝..., dass er in seiner Jugend gelesen hat die Werke von Lessing, Goethe und Schiller. Ինչ վերաբերում է անվանական շրջանակային կառույցներին, ապա ժամանակակից գերմաներենում դրանք դրսևորվում են հիմնականում երկրորդական (հատկապես հարաբերական) նախադասություններում, ինչպես՝ Er hat die Werke von Lessing, Goethe und Schiller, welche [er bereits in seiner Jugend] gelesen hatte, sehr verehrt., որի բացմամբ ունենում ենք՝ Er hat die Werke von

Lessing, Goethe und Schiller sehr verehrt, welche [er bereits in seiner Jugend] gelesen hatte.

Վերջին իրողությամբ ի հայտ է գալիս գերմաներենի շարահյուսության մեկ այլ տիպաբանական յուրահատկություն, որը վերաբերում է ոչ թե նախադասության առանձին անդամների դիրքին, այլ նախադասության տարբեր հատվածների համակցմանը: Ընդ որում, նշված համակցումը կարող է լինել ստորադասամբ (ինչպես վերը բերված վերջին օրինակներում) կամ համադասամբ, ինչպես՝ Er hatte die Werke Goethes bereits in seiner Jugend gelesen, und er hat sie sehr verehrt.

ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդի տիպաբանական ուսումնասիրությունների համար կարևոր են ոչ միայն ապաժամանակյա (ախրոնիկ) հայեցակետով լեզվի քննությունը, այլև ծագումնաբանական փաստերի հաշվառումը՝ ըստ տարաժամանակյա (դիախրոնիկ) հայեցակետի: Այս մոտեցմամբ առաջին փորձը կատարել է Ն. Տրուբեցկոյը, նպատակ ունենալով ոչ թե վերականգնել ցեղակից լեզուների հիմք կամ մայր լեզուն, այլ սահմանել այն համակարգային ընդհանրությունները, որոնք ի հայտ են գալիս ցեղակից լեզուների միջև: Այստեղ վերը նշվեցին այն վեց տիպաբանական չափանիշները, որոնց հիման վրա Տրուբեցկոյը առանձնացնում էր հնդեվրոպական լեզուները սեմական, կովկասյան, ուգրաֆիննական և այլ լեզուներից: Կարելի է ասել, որ այդ չափանիշները ավել կամ պակաս չափով վերաբերում են նաև գերմաներենին՝ որպես հնդեվրոպական լեզու: Զննարկենք նշված չափանիշները առանձին - առանձին:

1. Հնդեվրոպական լեզուներին բնորոշ չէ ձայնավորների ներդաշնակությունը:

Ընդհանուր առմամբ, ձայնավորների ներդաշնակությունը, հնչյունաշարում հարևան հնչյունի առանձնահատկություններով պայմանավորված, ձայնավորների առնմանումն է: Նեղ իմաստով խոսքը ածանցի և արմատի կազմում եղած ձայնավորների առնմանման մասին է: Այդպիսի փաստերը առավելապես տարածված են թուրքական և ուգրաֆինական լեզուներում, ինչպես, օրինակ, թուրքերենի հոգնակիակերտ -ler,

-lar ածանցների ձայնավորները ներդաշնակվում են համապատասխան արմատական կազմությունների ձայնավորների հետ, հմմտ.՝ ev-ler «տըներ», at-lar «ծիեր» և այլն:

Այս տիպաբանական յուրահատկությունը չունեն թե՛ գերմաներենը և թե՛ հնդեվրոպական լեզուներն ընդհանրապես:

Մյուս կողմից, սակայն, գերմաներենում նկատվում է մի երևույթ, որը, եթե ոչ ձայնավորների ներդաշնակություն է իր նեղ իմաստով, ապա ինչ-որ չափով հիշեցնում է այն: Ասվածը վերաբերում է բայական և անվանական հարացույցերում հանդիպող արմատի և ածանցի կազմում եղած ձայնավորների առնմանությանը նշված սկզբունքով: Այսպես, օրինակ՝ հին բարձր գերմաներենին բնորոշ հոգնակի թվի վերջավորության եզակի ձևի արմատական ձայնավորի առնմանումը (Sg. gast - Pl.gest-i) նոր բարձր գերմաներենում քերականացվել է և արտահայտվում է ձայնավորի որակական փոփոխությամբ (Umlaut) հմմտ.՝ Sg. Gast - Pl. Gäste: Այսպիսով՝ կարելի է ասել, որ գերմաներենը, ի տարբերություն մյուս հնդեվրոպական լեզուների, այս չափանիշի առումով առանձնահատուկ դիրք է գրավում:

2. Հնդեվրոպական տիպի լեզուներում բաղաձայնների գործածության հաճախականությունը բառակզբում և բառամիջում նույնն է:

Տվյալ հատկանիշը արտահայտվում է գերմաներենում ամբողջությամբ և որևէ բացառություն չի նկատվում:

3. Հնդեվրոպական լեզուների ձևաբանական կառուցվածքը հնարավորություն է տալիս ինչպես արմատական, այնպես էլ նախածանցավոր կազմությունների համար:

Այս հատկանիշը գերմաներենի բառակազմության մեջ առավել ակնառու է, ինչպես, օրինակ՝ գերմաներենի ab- նախածանցով բառակազմական դաշտը, որտեղ ունենք Ab-bau, Ab-bild, կամ ab-tun և նման այլ բազմաթիվ ձևեր:

4. Հնդեվրոպական լեզուների ձևակազմությանը յուրահատուկ է ոչ միայն ածանցումը, այլև ձայնավորների հերթագայությունը:

Նշված հատկանիշը, բացի ձայնափոխության երևույթից, գերմաներենում արտահայտվում է նաև ուժեղ բայերի մոտ արմատական ձայնավորների հերթագայությամբ, ինչպես՝ reiten - ritt - geritten կամ singen

- sang - gesungen և այլն: Հայերենում այն առկա է առավելապես անվանական համակարգում, ինչպես՝ **տուն - տան, սեր - սիրո** և այլն:

5. Չայնավորական հերթագայություններից բացի՝ հնդեվրոպական լեզուներին բնորոշ է նաև բաղաձայնների հերթագայությունը:

Բաղաձայնների հերթագայությունը տարածված է եղել դեռ հին բարձր գերմաներենի շրջանում, ինչպես, օրինակ, *zukk-en*→ *zuh-ta*, *dek-en*→ *dah-ta* կամ քերականական փոփոխությամբ (*wes-en*→ *wār-um*, *Ver-lust*→*ver-lier-en*) բնութագրվող բայական ձևերում:

6. Հնդեվրոպական լեզուների շարահյուսական կառուցվածքին բնորոշ է անցողական և անանցողական բայով կազմված նախադասության ենթակայի նույնություն:

Ըստ այս հատկանիշի՝ Տրուբեցկոյը հնդեվրոպական լեզուները հատկացնում է, այսպես կոչված, «նոմինատիվ տիպի» լեզուներին՝ ի հակադրություն «էրգատիվ տիպի»: Այս առումով գերմաներենը հիմնականում ցուցաբերում է «նոմինատիվ տիպի» բնութագրեր, սակայն այստեղ առկա են նաև «էրգատիվ» և «ակտիվ» տիպի կառույցներ: Այսպես, օրինակ՝ առաջին տիպի համար ունենք գերմաներենին բնորոշ *Der Autor schreibt einen Roman*. Նախադասությունը, իսկ դրա կողքին նաև՝ *Den Autor friert*. էրգատիվ տիպը: Վերջին տիպին են հատկացվում նաև գերմաներենի որպես որոշիչ գործածվող *der geschlafene Mann* կամ *der bewegte Mann* դերբայական կառույցները: Իսկ «ակտիվ» տիպին բնորոշ կառույցներ կարելի է դիտել *Der Mann schläft* կամ *Friedrich schreibt* ձևի կազմությունները:

Այսպիսով, ըստ Տրուբեցկոյի տիպաբանական չափանիշների, գերմաներենը հիմնականում ցուցաբերում է հնդեվրոպական լեզուներին բնորոշ գծեր: Անշուշտ, նշված չափանիշներից ելնելով, անհրաժեշտ է նաև պարզաբանել, թե ինչու նման առանձնահատկություններով բնութագրվում է նաև, ասենք, օրինակ, ոչ հնդեվրոպական տակելամա ամերիկահնդկացիական լեզուն: Ժամանակակից տարածամանակյա (հարածամանակյա) տիպաբանությունը դրա բացատրությունը տեսնում է լեզվական տարբեր համակարգերի նման միտումներով զարգացման մեջ, ինչը լեզվական ցեղակցություն չի նշանակում այլ՝ տարերային համընկնում:

Ծագումնաբանական տիպաբանությունը որոշ չափով առնչվում է նաև տարածքային (կամ արեալային) տիպաբանությանը, որի հիմնա-

դրույթների համար ելակետային է լեզուների տարածման աշխարհագրական ընդհանրությունը: Այսպիսով՝ քննարկման նյութ են դառնում ոչ միայն լեզուների միջև նկատվող նմանությունները, այլև տարբերությունները: Այդ առումով տարածքային տիպաբանությունը լրացնում է ծագումնաբանին:

Այս ուղղության հիմնադրույթները մշակվել են Է. Լևիի կողմից, որը առաջին անգամ, ելնելով 18 եվրոպական լեզուների ձևաբանական առանձնահատկություններից, տարբերակում է հետևյալ լեզվական տարածքները. 1. Ատլանտյան տարածք, որի մեջ մտնող լեզուներին բնորոշ է թեքաանջատականությունը (բասկերեն, իսպաներեն, ֆրանսերեն, իտալերեն, իռլանդերեն և անգլերեն): 2. Կենտրոնական տարածք, որի մեջ մտնող լեզուներին բնորոշ է բառաթեքականությունը (գերմաներեն, հունգարերեն): 3. Բալկանյան տարածք, որի մեջ մտնող լեզուները բնութագրվում են քերականական կարգերի «թափանցիկությամբ» (ռումիներեն, ալբաներեն, հունարեն): 4. Արևելյան հիմքաթեքական լեզուներ (ռուսերեն, լիտվաներեն, ֆիններեն, մոլդովերեն, չեքոսլովակերեն) և 5. Արևմտիկական համադրական տիպի լեզուներ (յուրակերեն):¹

Այս դրույթները, որոնք ակնհայտորեն սուբյեկտիվ գնահատման արդյունք են, հիմքում ունեն Տրուբեցկոյի կողմից առաջ քաշված, այսպես կոչված, «լեզվամիության» (Sprachbund) գաղափարը, որի համար կարևոր է լեզուների տարածման աշխարհագրական ընդհանրությունը: Ըստ այդմ՝ լեզուները գտնվելով նույն տարածքում փոխազդում են միմյանց վրա, որի հետևանքով առաջանում են տիպաբանական ընդհանուր գծեր: Թեև ժամանակակից տիպաբանությունը հակված չէ ընդունելու այս գաղափարը, սակայն, լեզուների փոխազդեցության արդյունքում առաջացած որոշ ընդհանրություններ էլ բացարձակապես չի կարելի ժխտել: Օրինակ, ըստ Հ. Հարմանի, Դանուբյան տարածքի լեզուներին բնորոշ են հետևյալ յոթ հատկանիշները.

1. Չայնավորների քանակական տարբերությունների առկայություն (երկար և կարճ ձայնավորների տարբերակում):

2. Հնչույթային հակադրության առկայություն [h] և [x] հնչույթների միջև, որը գերմաներենում հանդես է գալիս նաև լրացուցիչ [x] - [ç] հակադրությամբ:

¹ Lewy E., Der Bau der europäischen Sprachen, Proceedings of the Royal Irish Academy, Dublin, 1942, 15-117.

3. Կայուն բառային շեշտի ընդհանրություն: Այստեղ գերմաներենը կրկին փոքր - ինչ առանձնանում է իր կայուն - անշարժ (արմատական) շեշտով:

4. Բառավերջի ձայնորդների անկում կամ կրճատում, ինչպես՝ գերմ.
wir [wiə], dir [diə] և այլն:

5. Անվանական թեքման համադրական տիպ, որը գերմաներենում ունենք դեռ վաղ շրջանից:

6. Ժամանակաձևերի եռանդամ համակարգ (որը, պետք է կարծել, համապարփակ բնույթ ունի):

7. Նախածանցման մեծ արդյունավետություն:

Ահա, այս հատկանիշների հիման վրա Հարմանը գերմաներենը հատկացնում է իր կողմից սահմանված դանության տարածքին:¹

Անշուշտ գոյություն ունեն եվրոպական լեզուների տարածքային բա-
ժանման նաև այլ մոտեցումներ, որոնց հարկ չենք համարում անդրա-
դառնալ, քանի որ դրանցում սուբյեկտիվության գործոնը, այնուամենայ-
նիվ, մեծ դեր է խաղում:

¹ Haarmann H., Grundzüge der Sprachtypologie, Tübingen, 1976, S. 110-119.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1974:
- Աբրահամյան Ա. Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962:
- Աբրահամյան Ս. Գ.**, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975
- Աղայան Է. Բ.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
- Աղայան Է. Բ.**, Լեզվաբանության հիմունքները, Երևան, 1987:
- Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հհ. 1-6, Երևան, 1952-1971:
- Գաբրիելյան Յու.**, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր. 2001:
- Գաբրիելյան Յու.**, Հոլովական ձևերի զարգացումը հնդեվրոպական լեզուներում, Բանբեր Երևանի համալսարանի, 3, 2005:
- Ջահուկյան Գ. Բ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
- Սևակ Գ.**, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1964:
- Сенар Э.**, Язык, М-Л, 1934.
- Admoni W. G.**, Entwicklungstendenzen des deutschen Sprachbaus von heute; München, 1975.
- Admoni W. G.**, Der deutsche Sprachbau, München, 1982.
- Bach E.**, Universals in Linguistic Typology, London, 1968.
- Ballweg J.**, Die Semantik der deutschen Tempusformen, Düsseldorf, 1988.
- Barz I.**, Nomination durch Wortbildung, Leipzig, 1988.
- Bassarack A.**, Wurzel (n) der Natürlichkeit, Berlin, 1990.
- Behagel O.**, Deutsche Syntax, Heidelberg, 1932.
- Bergenholz H.**, Einführung in die Morphologie, Stuttgart, 1979.
- Blake B.**, Relational Grammar, London, 1990.
- Boretzky N.**, Sprachwandel und seine Prinzipien, Bochum, 1991.
- Brandt M.**, Weiterführende Nebensätze, München, 1979.

Braun P., Tendenzen in der deutschen Gegenwartssprache, Stuttgart, 1993.

Braunmüller K., Syntax typologische Studien zum Germanischen, Tübingen, 1982.

Brinkmann H., Die deutsche Sprache. Gestalt und Leistung, Düsseldorf, 1971.

Bybee J., Morphology: A Study of the Relation between Meaning and Form, Amsterdam, 1985.

Chomsky N., Aspekts of the Theory of Syntax, Cambrige, 1975.

Croft W., Typology and Universals, Cambridge, 1990.

Dixon R., Ergativity, Cambridge, 1993.

Dressler W., Wege der Sprachtypologie, "Sprache", 13, 1995.

Eisenberg P., Grundriß der deutschen Grammatik, Tübingen, 1995.

Fillmore Ch., The Case for Case. Universals in Linguistic Theory, London, 1968.

Fleischer W., Tendenzen der deutschen Wortbildung, Deutsch als Fremdsprache, 9, 1972.

Forquet J., Gramma`ire de l'Allemand, Paris, 1956.

Givon T., A Functional Typological Introduction, Amsterdam, 1984.

Glinz H., Die innere Form des Deutschen, München, 1973.

Greenberg J., Language Universals, The Hague, 1974.

Gross M., The Formal Analysis of Natural Language, The Hague, 1973.

Gundel J., Universals of Topic-Coment Structure, Hammond, 1988.

Haarmann H., Grundzüge der Sprachtypologie, Stuttgart, 1976.

Haiman J. Natural Syntax. Iconicity und Erosion, Cambridge, 1985.

Hansen S., Zur Abgrenzung von Komposition und Derivation, Trier, 1991.

Harras G., Die Ordnung der Wörter, Berlin/New York, 1995.

Hartmann P., Zur Typologie des Indogermanischen, Heidelberg, 1956.

Hawkins Y., A Comparative Typology of English and German, London, 1986.

Hawkins Y., A Performance Theory of Order and Constituency, Cambridge, 1994.

Helbig G., Die freien Dative im Deutschen, Leipzig, 1984.

- Heringer H. - J.**, Tendenzen der deutschen Gegenwartssprache, Tübingen, 1994.
- Ineichen G.**, Allgemeine Sprachtypologie, Darmstadt, 1991.
- Kaznelson S. D.**, Sprachtypologie und Sprachdenken, München, 1974.
- Kleinhenz U.**, Zur Typologie phonologischer Domäne, Mannheim, 1996.
- König E.**, Kontrastive Grammatik und Typologie, Mannheim, 1996.
- Kürschner W.**, Zur syntaktischen Beschreibung deutscher Nominalkomposita, Tübingen, 1974.
- Lambert P.**, Ausklammerung in Modern Standard German, Hamburg, 1976.
- Lehmann W.**, Proto-Germanic Syntax, Austin, 1974.
- Lehmann W.**, Syntactic Typology, Austin, 1978.
- Lenz B.**, Modalverben in Dualität im Deutschen, Wuppertal, 1992.
- Lewy E.**, Der Bau der europäischen Sprachen, Dublin, 1942.
- Lightfoot D.**, Principles of Diachronic Syntax, Cambridge, 1979.
- Mallinson G.**, Language Typology, Amsterdam, 1981.
- Mayerthaler W.**, Morphologische Natürlichkeit, Wiesbaden, 1981.
- Meinhold G., Stock E.**, Phonologie der deutschen Gegenwartssprache, Leipzig, 1980.
- Montgomery M.**, An Introduction to Language and Society, London, 1995.
- Mugler A.**, Tempus und Aspekt als Zeitbeziehungen, München, 1988.
- Neumann B.**, Einführung in die Wortbildungslehre des Deutschen, Tübingen, 1986.
- Nedljakov V.**, Typology of Resultative Constructions, Amsterdam, 1988.
- Payne D.**, The Pragmatics of Word Order, Berlin/New York, 1990.
- Pfeffer J.**, Probleme der deskriptiven deutschen Grammatik, Heidelberg, 1982.
- Raible W.**, Romanistik, Sprachtypologie und Universalienforschung, Tübingen, 1989.
- Ramat P.**, Linguistic Typology, Berlin, 1987.
- Rein K.**, Einführung in die kontrastive Linguistik, Darmstadt, 1983.
- Rovee G.**, Studien zum romanisch - deutschen Sprachvergleich, Tübingen, 1993.

- Schmidt K.-H.**, Typologie und Sprachwandel, In: Lüdtke, 1980, 20-36.
- Shopen T.**, Language Typology and Syntactic Description, Cambridge, 1985.
- Siewierska A.**, Word Order Rules, London, 1988.
- Solms H.-J.**, Flexion der Adjektive, Heidelberg, 1991.
- Sommerfeld K.-E.**, Einführung in die Grammatik der deutschen Gegenwartssprache, Tübingen, 1992
- Spencer A.**, Morphological Theory, Oxford, 1991.
- Sucharovski W.**, Kasuswandel, München, 2000.
- Thieroff R.**, Das finite Verb im Deutschen, Tempus - Modus -Distanz, Tübingen. 1992.
- Trubezkoy N.**, Grundzüge der Phonologie, Göttingen, 1971.
- Vater H.**, Zur Syntax der Determination, Tübingen, 1986.
- Vennemann Th.**, Preference Laws for Syllable Structure in the Explanation of Sound Change, Berlin/New York, 1988.
- Wegner H.**, Der Dativ im heutigen Deutsch, Tübingen, 1985.
- Wiese R.**, The Phonology of German, Oxford, 1995.
- Wunderlich P.**, Modus und Tempus, Tübingen, 1986.
- Wurzel W.**, Studien zur deutschen Lautstruktur, Berlin, 1970.
- Zaefferer D.**, Semantic Universals and Universal Semantics, Berlin, 1991.
- Zahn G.**, Beobachtungen zur Ausklammerung und Nachfeld-besetzung in gesprochenem Deutsch, Erlangen, 1991.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանական տիպաբանության առարկան և նրա խնդիրները ...	3
Հնչյունաբանություն (հնչույթաբանություն)	11
Ձևաբանություն	24
Գոյական	26
Ածական	43
Բայ	48
Բայի քերականական կարգերը	52
Գերմաներենի ընդհանուր տիպաբանական առանձնահատկությունները	80
Շարահյուսական կառույցների տիպաբանություն	83
Ծագումնաբանական տիպաբանություն	88
Գրականություն	93

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒՐԻ ԳԱՔՐԻԵԼՅԱՆ

**ՓԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՎԻ
ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

2-րդ վերամշակված հրատարակություն

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 6,125:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն,
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1